


2241

Генерал

9(45)

С-31

1939





Ե ՇԱՊԻՐՈՎՍԿԻ

ԳԱՐԻԲԱԼԴԻ

9(45)
Շ-31

ՊԵՏՏՐԱՆ 1939

30 MAY 2011

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

21 JAN 2008

9 (45)

Ե. ՇԱՊԻՐՈՎՍԿԻ

Շ - 31

սր

ԶՈՒԶԵՊՈՒՆ ԳԱՐԻԲԱԼԴԻ

Թարգմ. Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Ե. ՇԱՊԻՐՈՎՍԿԻ, Զուգեպպե Գարիբալդի դերքը նկարագրում
և Զուգեպպե Գարիբալդու — ժողովրդական լեզենդային հերոսի,
Խառլայի միավորման հեղափոխական աղանավոր մարտիկի
կյանքի ամենացայտուն դեպքերը:



501
40

Э. ШАПИРОВСКИЙ
Джузеппе Гарибальди
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



Ա Ք Ս Ո Ր ՈՒ Մ

1834 թվականի հունիսյան որերից մեկ որ շողից
թմրած ծովափնյա Մարսել քաղաքի քնած անդորրություն
նը խախտվեց լրագրավաճառների զրնգուն ձայներով:
«Դավադրության հայտաբերում: Մահվան դատավճիռ է
տալական հեղափոխականներին»:

Հասարակության մեջ, վորն ուշադրություն դարձրեց
լրագրավաճառների աղաղակների վրա, աչքի յեր ընկնում
վայելչակազմ, ուժեղ մկաններով, պարզ և գրավիչ դեմ-
քով մի յերիտասարդ: Ծովազնացի մի փոքր յերերուն
քայլվածքով նա դանդաղ մոտեցավ լրագրավաճառին, լը-
րագիր դնեց և խելուն բաց անելով, սկսեց կարդալ:

Նրա բրոնզադույն դեմքը հանդիսաւ եր: Միայն կայ-
ծերը, վոր բռնկվում էին նրա մեծ, պայծառ աչքերում,
և թեթև, արհամարհական քճծիծաղը ցույց էյին տալիս
նրան հուզող զգացումները:

Հազիվ լսելի, կարծես ինքն իրեն, նա կարդում եր.

«Զինվորական դիվիզիոն խորհուրդն իր նխառում,
ձենովայում, նորին դերադանցություն պարոն նահանգա-

պետի հրամանով քննեց սկտական զինվորական Ֆիսկի
զործն ընդդեմ Մուսորու Եղորդոյի, Նիցցայում ծնված,
Թաղավորական ծառայութեան 3-րդ դասի ծովային. Ձու-
ղեպէն Մարի Գարիբալդու, Դոմենիկոյի վորդու, 26 տա-
րեկան, առևտրական նավատորմի ծովային կապիտանի
և Թաղավորական ծառայութեան 3-րդ դասի նավաստու.
Կաորու, 30 տարեկան, և Մասկարելլի Վիտտորէյի, 24
տարեկան, — և հաստատեց, վոր Գարիբալդին, Մասկա-
րելլին և Կաորին սույն թվի հունվարին և փետրվարին
մեր քաղաքում դավադրութիւն են կազմակերպել և ձրդ-
տել են Թաղավորական զորքերի մեջ ապստամբութիւն
առաջ բերել՝ նորին մեծութեան կառավարութիւնը տա-
պալելու համար:

Լսելով այս հաղորդադրութիւնը և ողնութեան կան-
չելով ամենակարող աստծուն, դատարանը վճռեց՝ Գարի-
բալդուն, Մասկարելլուն և Կաորուն դատապարտել խա-
տառակ մահվան պատժի»:

Մի անգամ ևս հաղձեպ կարդալով դատաւճիռը՝ Գա-
րիբալդին (այդ նա յեր) ստնասրտութեամբ ծալեց թերթը
և սկսեց քայլել դեպի նախահանդիսոր:



Դրանից մի տարի առաջ Գարիբալդին, յերիտասարդ
նախապետը, նալը տանում էր հեռաւոր ուշայի, դեպի ու-
սական Տաղանրոդ նախակայանը: Այնտեղ նա պատա-
խան դտալ այն հարցին, վորը նրան տանջում էր պատա-
նեկութեան տարիներէից: Այնտեղ Գարիբալդին առաջին
անգամ իմացալ, վոր ինքը միայնակ յերազող չէ, վորը

արտացալ է վերաբերվում դեպի ստրկացված, բաղմա-
տանջ իր հայրենիքի բախտը: Հեռաւոր, ոտար յերկրում,
ցարական Ռուսաստանի քաղաքում նրա ամբողջ հեռապա-
կանքը նոր ուղղութիւն ստացալ:

Յերեկոյան, նալը բեռնախմբելուց հետո հանգստա-
նալով, նա մտալ նախահանգստի պանդոկը, վոր մի բա-
ժակ զինի խմի, զրույց անի նախահանգստում կանդնած
նալերի ծովայինների հետ: Մի սեղանի մոտից նա լսեց
իր մայրենի լեզուն: Գարիբալդին նստեց իր հայրենակից-
ների մոտ: Նրա դալու վրա վոչ վոք ուշադրութիւն չը-
գարձրեց, վորովհետեւ բոլորն էլ զրաւված էին յերիտա-
սարդ խաղացի Կունեոյի ճատով: Կունեոն ասում էր, թե
արդեն ժամանակն է, վոր խաղական ժողովուրդը վանդի
ստարերկրյա բռնակալներին: Ժամանակն է դենք վերջնել
և համախմբվել՝ պայքարելու ատելի ավստրիացիների
դեմ, վորոնք սվինով ու զնդակով իրենց իշխանութիւնն
են հաստատում Իտալիայում: Կունեոն կոչ էր անում ա-
պրտամբել հենց խաղական վարդապետների, կալվածա-
տերերի ու տերտերների դեմ, վորոնք ծախվել են ստա-
րերկրյա թշնամուն և նրա հետ միասին սվերում են յեր-
կիր, ժողովրդի արյունով ներկում հայրենի հողը: «Ա-
պրտամբութիւնը—ասա միակ ուղին դեպի ապստութիւ-
նը, դեպի հայրենիքի համախմբումը,—ասում էր Կունե-
ոն:— Մոտ է ժողովրդի պայքարի ժամը: Բոլորդ, ում
համար թանկ է հայրենիքը, ով չի ուզում վորորմէի
ստրուկ լինել,— մտք «Յերիտասարդ Իտալիա» ընկերու-
թեան մեջ: Յերկու տարի դոյութիւն անի այդ պաղտնի
կազմակերպութիւնը, վոր ստեղծել է մեր հայրենակից
Ջուզեպպե Մաձինին, և ընկերութեան շարքերն աճում են:

Ռուսաստանից տուն վերադառնալով՝ Գարիբալդին կարճ ժամանակից հետո նորից զնաց նավարկության, այս անգամ Կոնստանդնուպոլիս, «Սլորինդի» առաջատանավով: Ճանապարհորդների մեջ կային հռչակավոր սոցիալիստ-ուտոպիստ Սեն-Սիմոնի մի խումբ հետևորդներ: Փարիզից աքսորված սեն-սիմոնիստները զնում էին Արևելք: Գարիբալդին իսկույն ծանոթացավ նրանց հետ: Ազատ ժամերին նա յերկար զրուցում էր սեն-սիմոնիստների հետ: Հավասարության, աղքատությանը վիճնչացնելու, աշխատավորների համաշխարհային համադործակցության հաստատելու դադավարները հսկայական աղղեցության թողին նրա վրա: Նա հասկացավ, լոր հեղափոխական պայքարում

չի կարելի սահմանափակվել ազդեցին նեղ շահերով, վոր
հեղափոխական մարտիկի խնդիրներն ավելի լայն են, վոր
իր հայրենիքում յեղած ազդեցին—ազատագրական շարժու-
մը միայն մի մասն է այն ընդհանուր պայքարի, վոր շա-
հագործությունը մղում են շահագործողների դեմ :



Զերմորեն նվիրված լինելով իր Ժողովրդին ծառայելու հայրենասիրական գաղափարին՝ Գարիբալդին վորոշեց թողնել իր սիրած նավապետական պաշտոնը և վորպես հասարակ նավաստի մտնել ռազմական նավատորմի, ուր ներան սպասուժ եր հեղափոխականի վտանգավոր և համար-ձափ աշխատանքը։ 1833 թվի աշնանը նա արդեն «Նվրիդի-կա» ֆրեգատի, Սարդինիայի արքայական նավատորմի ռազմանավի, 1-ին կարգի նավաստի յեր։

Լինելով մեղմ բնավորության տեր և զգայուն, շիտակ և անկեղծ, յերբեք չկորցնելով վողու արիությունը, Զուգեպպեն արագ նվաճեց անձնակազմի համակերանը: Աղնիվ հայրենասերի վողեւորիչ ճառերը, — հայրենասերի, վորը փոչ եր տնում ազատագրել և համախմբել իտալիան ոտար-երկրյա լծի և սեփական կեղեքիչների դեմ, — համակված ելին անկեղծութամբ և կենդանի արձագանք ելին դտնում իտալական նախաստինների սրտերում: Այն, ինչ վոր ասում եր Գաբրիէաղին, մոտիկ ու հասկանալի յեր նրանց համար:

«Ճերիտասարդ Իտալիա» ընկերության հանձնարարությամբ Գարիբալդին հեղափոխական աշխատանք էր կատարում նավատորմիդում։ Ընկերությունը պատրաստում էր ժողովրդական մասսաների ապստամբություն Սարդինիայի միապետական կառավարության դեմ։

Ամեն ինչ պատրաստ եր ապստամբութեան համար և Գարիբալդին հուզված սպասում եր պայմանաւորված նը-
շանին: Որերն անցնում էին—դեռ ազդանշան չկար: Ան-
գործունեութիւնն ու անորոշութիւնը ճշուժմ էին յերի-
տասարդ հեղափոխականին: 1834 թվի փետրվարի 3-ին նը-
րան հաջողվեց անցնել մի ուրիշ ռազմանալ—«Դե Ժենէյ»
Փրեզաուր, մտադրվելով դրա անձնակազմը նույնպէս քա-
շել իր կողմը և նախապատրաստվել ապստամբութեան:

Գարիբալդին անչափ ուրախացավ, յերբ, վերջապէս,
իմացավ, վոր ապստամբութիւնը սկսվելու յէ փետրվարի
4-ին:

«Դե Ժենէյան» կանգնել եր ձենովայի նալահանգըս-
տում: ձենովայի հրապարակներից մեկում գտնվում էին
գորանոցները: Ապստամբների ջոկատները պետք է անը-
կատելի չըջապատելին գորանոցները և զորքերին ստիպե-
լին անձնատուր լինել: Ապստամբները հույս ունեյին դի-
մադրութեան դեպքում վճռական դրոհով վերցնել զորա-
նոցները, գինւորների շարքերում չփոթութիւն առաջաց-
նել և զինաթափել զորքերը: Ապստամբած նալերի թնդա-
նոթները կալարտելին գործը:

Գարիբալդին միաժամանակ թէ քաջութիւն և թէ խե-
լացի նախազգուշութիւն եր ցուցաբերում: Նա չեր ուզում
իր ընկերներին անմիա կերպով յենթարկել մահացու վը-
տանդի և վորոշեց մինչև ապստամբութեան պայմանական
ժամը հետախուզութիւն կատարել:

Բայց ի՞նչպէս աննկատելի իջնել նալից: Ամենաչնչին
անփութութիւնը, անզգուշ թայլը կասկած կառաջացնեն
սպանների մեջ և այդ դեպքում... Գարիբալդու համար
նույնիսկ սարսափելի յեր մտածել այդ մասին: Սակայն,
հապաղել չեր կարելի: Հալատարիմ բարեկամների ողնու-

թյամբ նա հասավ մակուշին: Հարմար բոլե դտնելով՝
նա կատվի ճարակութեամբ ցատկեց նալակի վրա: Կարե-
վոր եր մի քիչ հեռանալ նալից, իսկ անուհետե փոքրիկ
մակուշին ալիքների մեջ աննկատելի կլիներ: Իդուր չէ,
վոր Զուդեպպեն տասը տարեկան հասակից լողում է ծո-
վում: Հնազանդվելով հմուտ թիավարման, մակուշին ա-
րագութեամբ, ընկղմվելով ծովի բարձր ալիքների մեջ սլա-
ցավ դեպի ափը:

Գարիբալդին ափ դուրս յեկավ, անհող դրոսնողի տեսք
ընդունեց և մի ուրախ յեղանակ սուլելով, քայլեց դեպի
գորանոցները: Սարցանի հրապարակում հետ ու առաջ
բայլերով՝ նա ապարդյուն կերպով սպասում եր ընկերնե-
րին: Անցավ տաղտկալի մի ժամ: Հրապարակում չարա-
յուշակ դատարկութիւն եր: Այդ ժամանակ դարհուրելի
կասկածը սողոսկեց նրա հոգու մեջ: Գարիբալդին չեր ու-
զում հալատալ, վոր իր համար այնքա՛ն ցանկալի աղըս-
տամբութիւնը վիժել է: Նա թմրուկի ձայն լսեց: Այդ
թաղալորական գինւորներն էին դալիս դեպի հրապարա-
կը: Հիմա կասկած չեր կարող լինել— դալադրութիւնը
հայտաբերված եր: Զորքերի վտոնածայներն ալելի և ա-
վելի մոտիկից էին լսվում: Փախչե՞լ: Բայց ո՞ւր: Հրա-
պարակն արդեն չըջապատված է բոլոր կողմերից: Գարի-
բալդին իրենից վոչ հեռու տեսավ մրդեղենի մի փոքրիկ
խանութ: Յերկար մտածելու ժամանակ չեր մնում: Պահ-
պանելով լիակատար արտաքին հանդստութիւն, նա արագ
մտավ խանութ և ամուր փակեց դուրը: Զսկատները մըտ-
նում էին հրապարակ: Հիմա Գարիբալդու բախտը կախ-
ված եր խանութի տիրոջից: Նա մի բոլե կանգնեց, ար-
տաքին դուռն ամուր բռնած: Հետին սենյակից աղմուկ
լսվեց: Գարիբալդին լարեց ուշադրութիւնը: Նրա սիրտը

սկսեց ուժգին խփել: Նա պատրաստ էր ամեն ինչի: Խանութ մտալ մի կիկ: Իր ուլ լինելը հասնել նրան, թե ղոչ: Գուցե, քանի ուշ չե, դուրս թուչել և հրապարակից անցնելու փորձ անել: Նրանք լուռ նայում էին միմյանց: Մի փոքր մտածելով՝ Գարիբալդին վորոչեց այդ կնոջն ասել ամբողջ ճշմարտությունը: Բարեբախտաբար խանութի տիրուհին բարի ու պարզամիտ մի կին էր և նրան հուզեցին Գարիբալդու վառ խոսքերը հայրենասերներին մասին, վորոնք իրենց նվիրել են դժբախտ հայրենիքի վրա՝ կոթյանը: Ահա մարհելով վտանգը՝ նա Գարիբալդուն թաղցրեց իր մոտ, կերակրեց, նրա համար դուղացու հագուստ ճարեց: Հագուստը փոխած Գարիբալդին գիշերով ձանապարհ ընկալ, իր հետ տանելով շնորհակալություն ջերմ զգացում դեպի ժողովրդի դուստրը, վոր իրեն ողնեց դժվար ժամին:

Հյուրընկալ հարկի տակ: Նրա ժամանելու լուրն արագուհի
թշամբ տարածվեց, և նա ստիպված յեղավ թողնել տունն
ու գնալ արտասահման: Դրա համար հարկավոր եր լու-
ղալով անցնել Վար գետը, վոր հոսում եր Գարիբալդուն
հարազատ վայրերով և սահմանակից եր Ֆրանսիային:
Այնպիսի մի լողորդի համար, ինչպես Գարիբալդին եր,
գետը լողալով անցնելը դժվարութիւն չեր ներկայացնում:
Եւրջը տիրում ե մեղմ լուռթիւն: Կարելի յե ազատ
չունչ քաշել: Վորքա՛ն ծանր ու վողբալի յե գիտենալ,—
մանավանդ աղբիւրի լողկներին,— վոր տեղ չունես հա-
քենի յերկրում, վորը սիրում ես անսահմանորեն: Այսպի-
սի մտքեր եյին պաշարում Գարիբալդուն, յերբ նա մտա-
նում եր Վար գետին: Մի քիչ կանգնելով տխուր ու մը-
տաղբաղ, նա նետովեց ջուրը, լողալով անցավ գետը և
դուրս յեկավ Ֆրանսիական ափը:

ցավ,— չըջանալը կարելի չեր բաց անել։ Ելի սեղմեց—
պատուհանը ճքճքաց։ Այդ նրան ստիպեց հետ քաշվել և
ափանջ դնել։ Բայց կրկին լուռ եր ամեն ինչ։ Լարելով
իր ամբողջ հզոր ույժը, Գարիբալդին սեղմեց պատուհա-
նը և փեղկերը բացվեցին։ Ողի մեջ մի ափսոսաբարձ յերևաց
Գարիբալդու մարմինը, և զերու վրաները շոշափեցին զե-
տինը։ Մինչդեռ վերակացուն դնում եր սանդուխքով ու
միջանցքով, վերադադր անցնի ալղին, փախտապանը թռալ
ցանկապատի վրայով և վաղեց դեպի յեռները, ուր ավելի
հեշտ եր թաղնվել հետապնդումից։

Թեև Գարիբալդին չդիտեր ճանապարհը, բայց և այն-
պես, նա փորձառու ծովադնաց եր և աստղերի միջոցով
կողմնորոշվելով՝ դնում եր Ալարսելի կողմը։ Անցնելով մեծ
տարածութուն, նա սաստիկ քաղց և հողնածութունը ըլ-
ղաց։ Ամբողջ նրերով նա մոչինչ չեր ուտում։ Լավ կլի-
ներ, յեթե մի քիչ ամբապնդեր ուժերը, իմանար, թե
վորտեղ և գտնվում։ Առջևում մի դյուզ յերևաց։ Կան-
խաճաղեցով հանդիսար՝ Գարիբալդին մտավ պանդոկ
և ընթրիք պահանջեց։ Պանդոկապետը նենդ ու շատախոս
մի մարդ եր։ Նստելով Գարիբալդու մոտ, նա բարեկա-
մական զրույց սկսեց։ Յերը դինետան տերն իմացավ, թե
ով և Գարիբալդին, վեր թռավ ու դուռաց։ «Յեա, վարպետ
Փրանսիական աղնիմ քաղաքացի, պե՞տք և ձեզ հանձնեմ
վրասիկանության»։ Կարետը եր ժամանակ շահել և փախ-
չելու միջոց մտածել։ Յույց տալով ափսեն, Գարիբալդին
ասաց.— «Բայց այդ չի նշանակում, փոքր յես պետք և
ընդհատեմ իմ ընթրիքը։ Ինձ մատնում եք վրասիկանու-
թյան, լավ, միայն թե թողեք վերջացնեմ ընթրիքս։
Համ ել ձեր փողը չի կորչի»։ Փողի մասին հիշեցնելն իր
ազդեցութունն ունեցավ. պանդոկապետի խորամանկ դեմ-

քի վրա յերևաց խարդախ ժպիտը։ «Լավ,— ասաց նա,—
առաջ կստանամ ընթրիքի փողը, իսկ հետո կկատարեմ իմ
պարտքը»։

Հաճախորդներն արդեն հավաքվեցին դինետան յեր-
կար սեղանի շուրջը։ Յածր առաստաղով սենյակում նեղ-
վածք եր, ազմուկ։ Բայց այդ վոչ վոքի չեր խանդարում։
Յերխտասարդությունը զվարճանում եր, զընդում ելին դա-
վաթները, բաժակները։ Յերխտասարդներն ընդհանուրի
հավանությամբ յերզում ելին այս կամ այն յերգը։ Զու-
ղեպղեն լսեց Բերանտեյի յերգի ծանոթ խոսքերը.

Հիմա ծառացել և վաղ ժողովրդային...

Հարություն առել ցատումը հնամյա.

Դեհ, ավեք ինձ դիմվորի հրացանը,

Յերը ջութակն ալկա չկա։

Կզնամ դեպ մահ ժողովրդական փառքով,

Ու կասեն սերունդներն իմ մասին.

«Նա չեր ուղում, փոքր թշնամին նենդ

Պարեր հայրենի յերկրում»։

Գարիբալդին, լցնելով դինու բաժակը, բարձրացրեց
այն և հետ տանելով չեկ մաղերի փունջը, նույնպես սկսեց
յերգել։ Նրան սլաշարող հուզումը վարակում եր ունիկըն-
դիրներին։ Խոսակցությունները դադարեցին։ Բոլորը նըս-
տել ելին անշարժ և հաճույքով լսում ելին, թե ինչպիսի
մեղմ ու դուրեկան տենորով եր յերզում անծանոթը, փոքր
այնքան զղացում ու ալկուն եր տալիս սիրված Բերան-
տեյի,— Փրանսիական ժողովրդի մեծ բանաստեղծի
յերգին։

Յերը Գարիբալդին վերջացրեց յերգը, շատերը վեր
թռան իրենց տեղերից, սեղմեցին նրա ձեռքը, բարձրա-

ձայն արտահայտելով իրենց հիացմունքը և հավանու-
թյունը. «Կեցցե՛ Բերանժեն: Կեցցե՛ Յրանսիան»: «Կեցցե՛
Խտալիան»: Ապակիները դողում էին աղաղակներից: Ընդ-
հանուր զվարճությունը տևեց մինչև լուսաբաց: Վե՛հ վո՛ք
չե՛ր ուզում հեռանալ: Խարդախ պանդոկապետը հասկա-
ցավ, վոր յեթե կանչի ժանդարմներին, հաճախորդները
կթշնամանան իրեն հետ, և նրա գինետունը դատարկ կը-
լինի: Դրանից ձեռք քաշելով՝ նա չարացած շրկակացում
եր ամանեղենը: Հետագայում հիշելով այդ եպիլոգը,
Գարիբալդին գրում եր. — «Բերանժեն մեռավ, իհարկե,
չիմանալով, թե ինձ ինչպիսի ծառայություն մատուցեց»:

Հենց վոր փչեց առափոտյան հովը, Գարիբալդին
գյուղից հեռացավ նոր բարեկամների հետ, վորոնք հանձն
առան ճանապարհել նրան:



Ձանազան վայրերում շատ չարչարվելուց և թափա-
ռելուց հետո Գարիբալդին 1835 թվին նորից Մարսելում
ե՛ր: Նրա աչքերի առաջ բացվեց սարսափելի մի տեսարան.
Քաղաքը կարծես մեռել եր: Փողոցներում մարդիկ չկա-
յին: Տները լքված էին: Հազվագյուտ անցորդների դեմ-
քերը յերկյուղ ու տի՛րություն էին արտահայտում: Քա-
ղաքում տարածված եր խուլերան, վորին վոչինչ չե՛ր կա-
րող դիմադրել: Հարուստները, մեծաքսակները, կալվա-
ծառերը, յեկեղեցու իշխաններն իրենց կաշին փրկելու
համար փախել էին քաղաքից: Ամենից շատ տուժում եր
աշխատավոր ժողովուրդը, չքավորությունը: Հիվանդա-
նոցներում և հապճեպ սարքված բարակներում հիվանդ-
ներից շատերի համար տեղ չե՛ր լինում: Մահը հարյուրա-

վոր մարդիկ եր հնձում: Բժիշկներն անձնագոհաբար աշ-
խատում էին, ուժաստլառ լինում, բայց նրանք խիստ զի՛ջ
էին: Հարկավոր էին տանիտարներ, հիվանդապահներ,
քույրեր: Հենց այդ ժամանակ ել Գարիբալդին ժամանեց
Մարսել: Չմտածելով վտանգի մասին, վորին յենթարկ-
վում ե ինքը, նա տեղ հասնելու ուրը համաձայնություն
տվեց աշխատել խուլերայի բարակներում և սանիտարի
խալաթ հագավ: Ջուդեպպեն հուլիս փաղաքջանքով և հո-
գատարությունամբ խնամում եր հիվանդներին: Քանի դեռ
տարածված եր համաճարակը, նա չե՛ր հեռանում բարակ-
ներից: Դրանից առաջ մի քանի անգամ և հետագա տարի-
ներում շատ անգամ Գարիբալդին, մոռանալով ինքն իրեն,
վտանգի յենթարկելով իր կյանքը, փրկում եր ուրիշնե-
րին:

Մինչև իր կյանքի վերջին տարիները Ջուդեպպեն հե-
րոս եր, միշտ ել քաջություն և խիզախությամբ, ժողովուրդին
անձնվիրաբար ծառայելու հիանալի ուղինակ եր ցույց տա-
լիս:

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐ

Յերբ Մարսելում խուլերայի համաճարակը սկսեց պա-
կասել և Գարիբալդին տեսավ, վոր իր ողնությունն այլևս
հարկավոր չե բնակչությանը, նա հեռացավ քաղաքից: Նա
շատ եր ուզում վերադառնալ տուն, Խտալիա, բայց չե՛ր
կարող, վորովհետև այնտեղ նրա դեմ ընդունված մահվան
դատավճիռը դեռ մնում եր իր ուժի մեջ: Նա վորոչեց
գնալ Հարավային Ամերիկա — այն ժամանակվա խտալական
քաղաքական եմիգրացիայի սիրած վայրը: Նա գիտե՛ր, վոր

Հարավային Ամերիկայում տեղի յեն ունենում ազդային-
ազատագրական պատերազմներ, և քանի վոր այդ ազդակա
ե, ապա Զուգեպպեն կկարողանա այնտեղ արժանավայել
տեղ դնել:

Մարտիի նավահանգստում նա վարձվեց վորպես նա-
վաստի Փրանսիական «Ծովադնաց» նավում, վորը մեկնում
էր Բրազիլիա: Ճանապարհորդությունը յերկար տևեց, և
հաճախ տխուր մտքեր էյին պաշարում Գարիբալդուն: Ո՞վ
գիտե՞ վորքան ժամանակով էր նա անջատվում այն բանից,
ինչ վոր նրա համար ամենից թանգ էր աշխարհում: Յե՞րբ
նրան կվիճակվի ելի՝ ներշնչել հայրենի յերկրի կենսատու
ողբ, տեսնել այդ յերկրի հրաշալի, ծաղկող մարգագետին-
ներն ու այգիները, բարձրանալ լեռների ձյունապատ դա-
ղաթները, վոր նիրհում են կապույտ յերկնքում: Մըղշոջ
յե՞րբ նա ելի՝ կլսի իր ժողովրդի լեզուն, վորը չոյում է
նրա սիրտն ու լսողությունը, կգրկի ջերմորեն սիրած մո-
րը և հորը: Նրա հիշողության մեջ վերականգնանում էյին
մանկության հուզիչ պատկերները: Ահա Նիցցան: Հնա-
դարյան քաղաքը, վոր հիմնված է ավելի քան յերկու հա-
զար տարի առաջ: Փոքրիկ մի տուն աստվնյա լինի՝ փողո-
ցում: Այստեղ, բաղեղով պատած այս տանը, նույն սենյա-
կում, ուր ծնվել էր հացթուխ Մասսենի վորդին, նապոլե-
ոնյան հռչակված զորավարը, — 1807 թվի հուլիսի 7-ին
ծնվեց և նա, Զուգեպպեն:

Գոմենիկո Գարիբալդին, Զուգեպպեյի հայրը, ծովա-
դնաց էր. նա, ինչպես և Զուգեպպեյի պապը, բոլոր տարի-
ներն անցկացրեց ծովի վրա: Նրանք չէյին սովորել ծովա-
յին հատուկ դպրոցներում, բայց և այնպես, հիանալի դի-
տեյին ծովային դործը, վորն ուսումնասիրել էյին անընդ-

հատ նավարկությունների ժամանակ: Նրանց խախտա,
փոքրիկ նավը ծով էր դուրս դալիս թե խավար, անուշին
դիչերներին և թե փոթորկահույլ որերին: Մղվելով ուժ-
գին հոգմից, վորից ծովում էյին կայմերը և ճըճում
կողքերը, նավը ցնցվում էր ցատկոտ այլեքներից, վորոնք
մոնչալով խփում էյին նրա կողքերին, բայց զանվելով հը-
մուտ և ուժգին ձևքերում, այդ նավը բարեհաջող կեր-
պով հասնում էր նշանակված տեղը... Սերնդից սերունդ
էր անցնում այդ անպուսպ կիրքը դեպի ծովային տարերքը:
Յեվ փոքրիկ Պեպպինոյի համար չկար մի ավելի մեծ ու-
րախություն, քան հոր հետ նավարկության դնալը:

Գարիբալդիների ընտանիքն աղքատ էր ապրում և հա-
ճախ կարիքի մեջ էր լինում: Զուգեպպեյին լայն կրթու-
թյուն տալու համար բավականաչափ միջոցներ չկային:

59 Զուգեպպեյի հարապատաներն ուղում էյին նրա համար
ավելի հանդիստ և անխառն պատարեղ ընտրել, քան ծո-
վադնացի պրոֆեսսիան: Նրա մայրը, Ռոզա Ռադիունդան,
յերապում էր իր վորդուն տեսնել իրեն բժիշկ, փաստա-
րան կամ դոնե քահանա: Քնքշտեն պաշտելով իր մորը՝
Պեպպինոն բոլոր դեպքերում հայացքով հնազանդվում էր
նրան և խիստ թանգ էր դնահատում նրա կարծիքը: Միայն
մի բանում Պեպպինոն անհնազանդություն և համառ դի-
մադրություն էր ցույց տալիս: Զգարով, վոր ինքը կոչված
է ծովադնաց լինելու, Պեպպինոն պահանջում էր, վոր իրեն
ուղարկեն նավ: Մայրն ու հայրը կտրականապես առաք-
կում էյին: «Թվում էր, թե ծովերի վրա ճանապարհորդեյն
իմ կյանքի նպատակն էր: Հայրս ամեն կերպ աշխատում
էր հակառակվել դրան... Բայց իմ համառությունը հաղ-
թահարեց նրա կամքը... Յեվ յես «Կոնստանցա» նավով
դնացի նավարկության»:

Տասը տարեկան Ձուգեպպեն դերադանց նավագետ Ան-
ջէլո Պեզանտեյի ղեկավարութեամբ «Կոնստանցա» նավով
հասավ Ողեսոս: Այդ նրա առաջին նավարկութիւնն էր:
Այդ ժամանակից սկսած, այլևս վոչինչ չէր խանգարում
Ձուգեպպեն՝ նվիրվելու իր կոչման: Յեւ միայն հեղափո-
խական մարտիկի զգացումը, ժողովրդի և հայրենիքի նը-
կատմամբ բոցավառ սերը հանդիսացան այն ուշօր, վորը
նրան ստիպեց թողնել ծովը և ամբողջովին նվիրվել Իտա-
լիայի ազատագրման և համախմբման գործին: Առաջին
մարզը, վոր տղայի զգայուն հոգու մեջ վառեց հայրենի
յերկրի սիրո կայծերը, նրա մայրն էր:

Փոքրիկ Ձուգեպպեյի վրա ուժեղ ազդեցութիւն թողեց
նաև ուսուցիչ Արենան: Ծանոթացնելով նրան ժողովրդի
անցյալ կյանքի հետ, Արենան տղավորովոյ յերեխայի մեջ
արթնացնում էր հայրենասիրութիւն և Իտալիայի վերա-
ծրնդին նվիրվելու բուռն ցանկութիւն: Բավական էր,
վոր Ձուգեպպեն բաց աներ զիրքը, և նա խորասուզվում էր
մի անհայտ աշխարհ, վոր լի յեր հերոսական արկածնե-
րով: Յեւ ահա նա հոռմեական ջոկասաների առջևից սլա-
նում է ձիով, մասնակցում է արյունոտ կռիւն և վոչնչաց-
նում թշնամու բազմաթիւ լեզիոնները: Ահա նա ներխու-
ժում է քաղաք և բնակիչներին ազատում է բռնակալ թա-
գաւորից: Այն, վորքան քաղցր էյին մանկական այդ նա-
ւիվ յերազները: Յեւ նրա սիրտն է՛լ ավելի յեր ճմլվում,
յերբ վերադառնալով իրականութիւն, նա տեսնում էր Ի-
տալիայի և նրա ժողովրդական մասսաների անսահման
ստորացումը:

Վորքան հեռանում էր «Ծովազնացը» Յեւրոպայի ա-
փերից, մոտենալով Նոր Աշխարհին, — այնքան սուր կեր-
պով էր Գարիբալդին ապրում անջատման ծանրութիւնը:
Այդ էր Գարիբալդին ապրում անջատման ծանրութիւնը:
Նրա համար միակ միջոցութիւնն այն հավատն էր, վոր
իր թափառումները յերկար չեն տևի և ավելի լավ ժամա-
նակներ կզան:

Մինչև Ռիո-դե-ժանեյրոյի — Բրազիլիայի մայրաքա-
ղաքի նավահանգիստը մի քանի մղոն էր մնում: Հենց վոր
նավն անցավ նեղ անցքով և մտավ ծովախորշը, նավորդ-
ները տեսան քաղաքը: Քաղաքը փռված էր ցածրադիր լե-
ռան վրա, փարթամ բուսականութիւն մեջ, տրոպիկական
արևի տակ աների սպիտակ պատերը շողջողուն փայլ էյին
արձակում:

Վրաների տակ վերջին անգամ որորվեցին նավասան-
դուխքի աստիճանները, և Գարիբալդին վստահորեն վստ
դրեց Նոր Աշխարհի հողը: Նրա գործը հաջող էր գնում:
Շուտով նա մի ընկեր գտավ, վորի հետ բաժանում էր և՛
վիշաք, և՛ ուրախութիւնը, և՛ հաղթանակների բարձր
փառքը և՛ մարտական արշավանքների զրկանքները: Այդ
խառացի եմիգրանտ իւրիշի Ռոսսետին էր: Մի տեղում,
քայլելով Ռիո-դե-ժանեյրոյի փողոցներում, նրանք, ինչ-
պէս միշտ, յեռանդով զրուցում էյին Իտալիայի բախտի
մասին: Շղթաների տխուր զնդոցն ընդհատեց նրանց խո-
սակցութիւնը: Այդ բրազիլական կայսրութիւն հետ պա-
տերազմող Ռիո-Գրանդական հանրապետութիւն մի խումբ
զերի զինվորներն էյին քայլում: Գարիբալդին ձայն տվեց
նրանցից մեկին: Վորքան զարմացաւ նա, յերբ զերին պա-

տախանեց մայրենի լեզվով: Գերին հաղորդեց, վոր նը-
րանք, խաղացիները, կովում եյին Ռիո-Գրանդէյի ան-
կախութեան համար, — վորն անջատվել եր ըրազիլիական
կայսրութեանից, — և վոր յերկտասարդ հանրապե-
տութեանը կարիք ունի այնպիսի մարդկանց, վորոնք սպա-
տութեանը և ժողովրդի շահերն իրենց սեփական կշան-
քից ավելի բարձր են դասում:

Գարիբալդին, խորապէս հուզվելով այդ հանդիպումից,
վորոչեց իրեն հանձնել Ռիո-Գրանդական հանրապետու-
թեան տնօրինութեան: Հանրապետութեան նախադասն ու-
րախութեամբ ընդունեց Գարիբալդու և նրա ընկերների ա-
ռաջարկած ծառայութեանները և նրանց տվեց լայն լիազո-
րութեաններ՝ ծովում և ցամաքում պարտիզանական պա-
տերազմ մղելու համար:



Որորելով խարխալ զցեց փոքրիկ թեքակայմ նավը:
Ատլանտյան օվկիանոսի ալիքներն ուժգին խփում եյին ա-
փին: Բլուրի վրա կանդնած եր բարձրահասակ մի մարդ,
կարմիր շապիկով, յերկար մազերով, վորի ուսերին թափ-
ված եյին ալիքաձև վառ վոսկեղույն վարսերը: Նա արծը-
վի հայացքով դիտում եր ծովային անծայրածիր տարա-
ծութեանը: Տեսողութեանը լարած՝ նա ինչ-վոր բան եր
փնտռում: Հանկարծ հորիզոնում մի փոքրիկ բլիժ յերևաց:
Հետզհետե մեծանալով՝ այն սկսեց նավի ձև ընդունել:
Արևի ճառագայթներից դեմքը ձեռքով ծածկած, այդ
մարդը կլանված դիտում եր մոտեցող նավը, ցանկանալով
լմանալ, թե այն ի՞նչ դրոշակ ունի: Հիմա արդեն կարելի

յեր պարզ տեսնել, վոր նավը պատկանում եր բրազիլիա-
կան կայսրութեան: Հաջողութեան: Հենց այդ նավին եյին
սպասում: Դեռ վաղելիս մարդը դռնեց: «Բարձրացնել՝ խա-
րխալը», և նետվելով տախտակամածի վրա, հրամայեց ըն-
թանալ: Հարկավոր եր շտապել, այլապէս ձկնորսական
փոքրիկ թեքակայմ նավը չեր հասնի արագընթաց նավին:
Բարձրացնելով առաջատները՝ թեքակայմ նավը լողաց
դեպի այն: Թեքակայմ նավի կայմի վրայ հալարո ծածան-
վում եր Ռիո-Գրանդէ դու Սուլ հանրապետութեան դրոշա-
կը, իսկ կողքին փայլում եր «Մաձինի» մակագրութեանը:

Տասնվեց քաջեր հրամանատարի ղլխավորութեամբ
պատրաստվեցին անհամառար կռիւ: Խելահեղ խիզախու-
թեան և մի քանի հին հրացան—ահա այն ամենը, ինչ վոր
նրանք կարող եյին հակադրել բազմաթիւ լավ զինված հա-
կառակորդին: Ճարպիկ չարժումներ կատարելով՝ «Մաձի-
նին» ընդհուպ մոտեցավ թշնամու «Լուիզա» նավին: Հա-
կառակորդը դեռ ուշքի չեր յեկել, յերբ արեւից այրված
տասնվեց մարտիկ, վորոնք խայտարակեա և պատառոտված
հաղուստով եյին, Գարիբալդու առաջնորդութեամբ արդեն
անցան «Լուիզայի տախտակամածը և սկսեցին ահեղա-
բար ճոճել զինքերը: «Լուիզայի» անձնակազմը խուճա-
պի մասնակցով անձնատուր յեղավ, նույնիսկ չփորձելով
դիմադրութեան ցույց տալ: Հանրապետականներն առանց
վորեւե կրակոյցի զրաժեցին նավը: Գրավված նավի հինգ
նեղը—նավատիրները հայտարարեցին, վոր ուզում են ծա-
ռայել Գարիբալդու իշխանութեան տակ: Հանրապետական-
ները հաճույքով ընդունեցին նրանց առաջարկը:

«Հանրապետութեան անունից ձեզ հայտարարում եմ
ստրկութեանից ազատ: Այսուհետե դուք Ռիո-Գրանդական

բիւրնով: Հետեւյալ որովա առաւելոյն Գարեբաղլին աւելից մի քանի մղոն հեռավորութեամբ տեսաւ մենավոր մի շենք: Ինչքան վոր թույլ եր տալիս ջրի խորութեանը, նաւը մոտեցաւ ափին, բայց մինչև չենքը դեռ զգալի ջրային տարածութեան եր մնում: Մակույկները արվել էին «Լուրդայի» անձնակազմին, վորին Գարեբաղլին աղատել եր, աշխատել վոր ափ դուրս գալու հնարավորութեան չկար: Բոլորը նայում յին Գարեբաղլուն, նրանից սպասելով հարցի լուծումը: Հանկարծ նրա մոտայ գեմքը պայծառացաւ: «Գառարկ տակառները դուրս բերել տախտակամած: Դեհ, ձե՛ր տեսնեմ, տղերք ջան, — քաջաղերում եր Գարեբաղլին նաւաստիներին, — ախտեղ բերեք սեղանը»:

Բոլորը յեռանդով կատարում էին հրամանատարի ցուցումները: Տակառներն իջեցրին ջրի մեջ, դրանց ամեն մեկի մեջ դրին սեղանի մի վոտքը, և «լաստը» պատրաստ եր: Բայց ամեն վոք չի խիղախի ալդպիսի «նաւով» լողալ, այն ել ծովափնյա ուժեղ ալեկոծութեան կրկնակի գծի միջով: Տեսնելով վորոշ շփոթութեան՝ Գարեբաղլին հայտարարեց, վոր ինքը կգնա դեպի ափ: Նաւաստիներից մեկը հանձն առաւ ուղեկցել նրան, և յերկուսն ել, կարթածողով ճարպկորեն ուղղութեան տալով լաստին, ուղեւորվեցին դեպի ափը: Հետեւյալ որը «Սկորոպիլյայի» վրա ճոխ խնձույք եր: Տախտակամածի վրա կախված եր յեղան մի ահագին մսակույտ, վորն առժամանակ աղահոլում եր սննդարար և համեղ ճաշը:

Մովը դիտող նաւաստիները զեկուցեցին, վոր յերկուսն հայտ նաւեր են յերևում: «Ձենքերը և ոտքամթերքը տանել տախտակամած», «Բոլորդ զինվեցե՛ք», Բարձրացնել առաւաստները» — կարգադրեց Գարեբաղլին: Ձեռք

առնելով նախազուգութեան բոլոր միջոցները, նա սպասում եր նաւերին, վորոնք մոտենում էին «Սկորոպիլյային»: Ճեղքելով ալիքները՝ բրաղիլական նաւերից մեկն արագ հասնում եր Սկորոպիլյային: Թշնամու նաւի տախտակամածը լիքն եր զինված զինվորներով: «Անձնատուր յեղեք, թե չե կիջնեք ծովի հատակը», — դռնաց բրաղիլական սպան և առանց պատասխանի սպասելու հրաման տվեց՝ «կրակ»: «Սկորոպիլյայից» համազարկով պատասխանեցին: Այդ ժամանակ թշնամու յերկրորդ նաւը մի ուրիշ կողմից մոտենում եր «Սկորոպիլյային»: Բայց վերջինս հաջող մանյովը կատարելով՝ մի կողմ անցաւ և յերկուսն նաւն ել թողնելով իր հետևում: մի գծի վրա, դիպուկ կրակ բացեց: Թշնամու մի քանի զինվորներ, վորոնք պատրաստվում էին նետվել հանրապետական նաւի տախտակամածը, չկարողացան իրենց պահել և ընկան ջուրը: Մի քանիսներն ընկնում էին դարբաղլիականների զնդակներով խոցված: Բայց «Սկորոպիլյայում» մարդիկ շատ քիչ էին և այդ քաջութեան եր տալիս հարձակվողներին: Հրացանային հաճախակի կրակի պաշտպանութեան տակ նրանց նաւերն ելի՝ սկսեցին մոտ գալ: «Վերցնե՛լ սոսկի առաւաստները», — հրաման տրվեց Գարեբաղլին, վորպեսզի պահասի նաւի որորվելը: Բայց նրա հրամանը չկատարվեց: Ղեկավարը — նրա լավագուշտ նաւաստիներից մեկը — աեղն ու տեղը սպանվեց: Մընալով առանց ղեկավարի՝ նաւը կարող եր հեշտութեամբ ընկնել թշնամու ձեռքը: Ողտվելով սուրբից, թշնամին իջեցրեց մակույկները, վորոնցից մեկը մոտեցաւ «Սկորոպիլյային»: Վերցնելով թողնված զեկը, Գարեբաղլին շարունակում եր ղեկավարել մաշտը: «Թշնամին աջ կողմից

ե գալիս», — գոռաց Գարիբալդին: Մի քանի նախաստիններ խեղճան նետակեցին դեպի այդ կողմը: Ողուժ փայլատակեցին սրերը: Թշնամու զինվորներից մեկը ձեռքոված գլուխով ընկավ հենց «Սկորուպիլայի» տախտակամածի վրա: Մյուսները, չդիմանալով շեշտակի գրոհին, նահանջեցին: Մոտիկից զնդակոծվող մակուկները շտապում էին թափնովել իրենց նավերի հետևում: Աշխատելով «Սկորուպիլան» թողնել առանց ղեկավարի, թշնամին կրակը կենտրոնացրեց Գարիբալդու վրա, վորը շարունակում էր վարել դեկը: Հանկարծ նա ցնցվեց: Նրա ձախ այտը և պարանոցը վայրկենապես արյունոտվեցին: Կորցնելով գիտակցութունը, նա ղեկը բաց թողեց թուլացած ձեռքերից: «Կմեռնենք, բայց մեր Զուգեպոլիսին չենք հանձնի թշնամուն», — վորոշեցին գարիբալդիականները: Նրանք կոպում էին առջուծների պես: Ճակատամարտի հետևանքով, վորը մի Ժամից ավելի տևեց, թշնամին, չնայելով իր թվական գերակշռության, չփոթվեց և նահանջեց:

ներքին հաղթանակեց և մահը նահանջեց: Գլխակապան
 բժշկը Գարեբաբու ստրանոցից հանեց զնդակը և Գաբի-
 բալդին սկսեց արագությամբ առողջանալ:

[illegible]

մուր կապված է : Հարվածները տեղում եյին իրար հետեւից ,
Գարիբալդին դողողում էր բարեկութունից և զայրույ-
թից : Մվեն-ծվեն յեղած հաղուստի տակից հասում էր ար-
յունը : Հոգնելով, Մելտոնը ցած դրեց մտրակը : Մոտենա-
լով կապկապած դերուն, նա բռնեց Ջուզեպպեյի շապիկի
ոձիքից, քաշեց դեպի իրեն և Ֆլշալով ելի հարցրեց .
«Վերջին անգամ— ովքե՞ր են նրանք» : Գարիբալդին ի պա-
տասխան թքեց նրա յերեսին : «Ե՛յ, պահակներ, — հաղիվ
արտասանեց Մելտոնը, — տանջե՛լ սրան», և ապա, չունչ
քաշելով, ավելացրեց . «Իսկ յերբ կալանավորն ուղենա
խոտոտվանել, կանչեցե՛ք ինձ» :

Պահակները կալանավորին տարան մի ստորերկրյա
մուայլ, խոնավ շենք : Յերկար պարանի մի ծայրը կապե-
ցին իրար կապված նրա թևերից, դաստակներին մոտիկ :
Այնուհետև, վերցնելով պարանի մյուս ծայրը, վրն անց
էր կացրած առաստաղին մոտիկ կախված դերանի վրայով,
նրանք սկսեցին պարանը քաշելով բարձրացնել կալանա-
վորին : Հենց վոր Գարիբալդին կտրվեց դեռնից և նրա
մարմինն իր ամբողջ ծանրությամբ կախվեց իրար կապած
դաստակներից, ձևները դուրս յեկան հողակապերից : Իսկ
բանտապահները շարունակում էյին ձգել պարանը, Գարի-
բալդուն բարձրացնելով դեպի առաստաղը : Նրա աչքերը
լցվեցին արյունով : Սիրտը մարում էր անտանելի ցավից :
«Այդպես յես կախված եյի յերկու ժամ : Թևերիս արյունա-
շաղախ դաստակները և դուրս ընկած ուսերս պահում էյին
մարմնիս ամբողջ ծանրությունը : Ամբողջ մարմինս վառ-
վում էր չիկացած ածուխի նման... Յես ջուր խնդրեցի...
բայց ջուրը, դնալով ստամոքսս, վայրկենապես դուրջիա-
նում էր, կարծես այն լցնում էյին չիկացած յերկաթածո-

ղի վրա : Միայն կարդարով այն խոչտանդումների նկարա-
դրությունները, վրտնց յենթարկում էյին կալանավորնե-
րին միջին դարերում, կարելի չե դադափար կազմել, թե
յես ինչպես եյի տանջվում» — գրում է Գարիբալդին իր
հուշերում :

Յենթադրելով, վոր կալանավորը մեռած է, բանտա-
պահները թողին պարանը, և խոչտանդումների յենթարկ-
ված կալանավորի մարմինն արյունաշաղախ վիճակում ըն-
կավ ներքև : Բաց անելով աչքերը, Գարիբալդին ուղում էր
ուղղել իր մարմնի ջարդված անդամները, բայց չէր կա-
րողանում չափել վոչ վտանները, վոչ ել ձևները :

Այնուհետև, Մելտոնի հրամանով, դերուն հինդ-տասը
մղոն քշում էյին ճահճոտ տեղերում, ձևներն ու վտանները
կապած : Անթիվ ու անհամար թուեպօր մոծակները հար-
ձակվում էյին նրա վրա : Գարիբալդու դեմքն ուռավ նը-
րանց կծեւուց : Աչքերի փոխարեն նեղ խորշեր էյին մնացել :
Այսպիսի տեսքով, ամեն քայլափոխում սայթաքելով, նա
հասավ նոր կալանավայրը : Այնտեղ նրան ինչ-վոր մար-
դասպանի հետ նետեցին մի կամեղա : Մի քանի ամսվա ըն-
թացքում նրան տանում էյին մի բանալից մյուսը, փորձե-
լով ընկճել այդ խիղախ մարդու վուլին : Բայց իզո՛ւր : Հա-
մողվելով, վոր վոչ մի կերպ հնարավոր չե աննկուն կամքի
տեր այդ մարդուն տոխել, վոր մատնի իր ընկերներին, —
նրան ազատեցին բանալից :

Գարիբալդին չուտով վերադարձավ Ռիո-Գրանդե : Հան-
րապետության նախագահը նրան ընդունեց խիստ սիրալիկ
և նշանակեց նախատորմիղի պետ, — կապիտան-լեյտե-


նանաի աստիճանով: Ծիշտ ե, աղքատ հանրապետութեան
ամբողջ նավատորմը բաղկացած եր առայժմ յերկու կա-
ռուցվող ռազմանավակներէց, բայց այդ հանգամանքը չե-
ղիթեցնում նոր աղմիրալին: Իրեն հատուկ ենեղիթայով
նա ձեռնամուխ յեղով աշխատանքի: Գործերը շատ եյին:
Հարկավոր եր մարդիկ գտնել, շինարարական նյութեր
ձեռք բերել: «Հետաքրքիր եր այդ կառուցումը,— հիշում
ե Գարիբալդին,— վոմանք դնում եյին փայտ վորոնելու,
վոմանք— յերկաթ, յերկու թե յերեք ատաղձադործներ
տաշում եյին փայտը, մի նեղը կռում եր յերկաթը:

Հենց այսպես ել կառուցվեցին յերկու ռազմանավակ-
ները, մեկերէց սկսած մինչե կայմերի յերկաթե ողակա-
պերը»:

Յերկու ամսից հետո նավերն արդեն որորվում եյին
ջրի վրա: Նրանցից յուրաքանչյուրը զինված եր տասներ-
կու Փնաանոց յերկու թնդանոթներով: Յերկու նավերի
անձնակազմը բաղկացած եր վաթսուն հոգուց: Այստեղ
կային ամեն գույնի և ազգութեան մարդիկ, վորոնք յեկել
եյին հանրապետութեանն ոգնելու: Ռիո-Գրանդեյի յերկու
նավերի դեմ Բրազիլիական կայսրութիւնը դուրս եր բերել
իր նավատորմիդը, բաղկացած յերեսուն ռազմական ռու-
զատանավերից և մեկ շոգենավից, վոր մեծ ույժ եր այն
ժամանակվա համար:

Գործադրելով սրամիտ տակտիկա և հաժանափելով
Լոռ-Պաթոս ծանծաղ լճի վրա, վոր անմատչելի յեր բրա-
զիլիական մեծ նավերի համար,— Գարիբալդին անընդհատ
անհանգստացնում եր նրանց իր հանկարծակի և հան-
դուղն հարձակումներով: Բացի դրանից, նա իր նափա-
տորմիկի անձնակազմին ընտելացրեց ցամաքային ռազմա-

կան դործողութիւններին: Հարկավոր մոմենտին վաթսուն
հոգի տի եյին դուրս դալիս, թամբում եյին ձիերը, վոր
տեղական բնակչութիւնը հաճույքով տալիս եր նրանց,
և հեծելազորային ահարկու ջոկատը մրրիկի նման նետ-
վում եր թշնամու վրա:



Ջուզեպպե Գարիբալդի
Ապստամբութիւնը, վոր բռնկվել եր Բրազիլիայի հյու-
սիսային մասում, Սանտա-Կատարինա նահանգում, հան-
րապետական հրամանատարութեանը մղեց դեպի համար-

ձակ մի միտք,— Սանտա-Կատարինա ուղարկել ղինվորա-
կան մի արշավախումբ և միանալ ապստամբներին հետ,
կայսրության դեմ միասին պայքարելու համար։ Այս վը-
տանգավոր ձեռնարկումը պահանջում էր բացառիկ քաջու-
թյուն, խելամուռություն, ձեռներեցություն և արագու-
թյուն։ Գարիբալդին, վոր հրավիրված էր արշավանքին
մասնակցելու, առաջարկեց հետեյալ պլանը. այդ նահանգը
մտնել միաժամանակ յերկու կողմից— թե ցամաքից և թե
ծովից։ Ծովի կողմից կատարվելիք գործողությունները
Գարիբալդին վերջնում էր իր վրա։ Պլանն ընդունվեց։
Սակայն թշնամու նավերը փակել էին ա'յն լճից ծով դուրս
դալու ճանապարհը, ուր գտնվում էր հանրապետական նա-
վատորմիդը։ Գարիբալդին հաջողությամբ հաղթահարեց
այդ գեվարությունը։ Նրա ղեկավարությամբ յերկու հըս-
կայական, ութ-անխավոր սայլ շինեցին։ Դրանցից ամեն
մեկին լծեցին հարյուրական յեզ, ու արտասովոր թափորը
ճանապարհ ընկավ։ Յեզները հիսունչորս մղոն քարշ տվե-
ցին նավատորմիդը և բարեհաջող կերպով հասցրին մի ու-
րիշ լիճ, վորտեղից նավերը կարող էին դուրս գալ Ատ-
լանտյան օվկիանոսը։

Հենց վոր օվկիանոսային մակընթացություն յեղավ
ու ալիքները բարձրացրին նավերը, Գարիբալդին մեկնե-
լու նշան տվեց։ Նա ինքը գտնվում էր «Ռիո-Պարդո» նա-
վում։

Անցնելով առաինյա ուժեղ ալեկոծությունների գոտին՝
նավերն ուղևորվեցին դեպի Սանտա-Կատարինա։ Յերեկո-
յից փչում էր հարավային քամին։ Հանկարծ յերկինքը
մթնեց։ Արճազուլն ամպերը ծածկեցին հորիզոնը։ Քա-
մին քաջքում էր առապաստները։ Կանաչավուն ալիքները

կատաղաբար խիռւմ յին ռազմանավակներին։ «Ռիո-Պար-
դո» նավը, վոր չափից դուրս էր բռնված, ավելի խորն
էր թաղվում ջրի մեջ։ Ուշադրություն չդարձնելով նավի
որորվելու վրա՝ Գարիբալդին բարձրացավ առաջակայմի
գագաթը։ Աչալըջությամբ դիտելով խավարը, նա հարմար
տեղ էր փնտռում ցամաք դուրս դալու համար։ Կայմը
սաստիկ յերերվում էր, ամեն բոպե ապառնալով ցած զցել
համարձակ մարդուն։ Փոթորիկն ուժեղանում էր։ Նավը
դարձավ ալիքների խաղալիք, վորոնք լեռնանում էին,
նրան այս ու այն կողմ նետելով։ Այդ ալիքներից ամեն
մեկը կարող էր ջարդ ու փշուր անել նավը։ Հանկարծ
սոսկալի ցնցումը Գարիբալդուն պոկեց կայմից և չարտեց
նավից յերեսուն վոտնաչափ հեռու։ Նա քարի նման ջրա-
սուլյ յեղավ։ Մեծ դժվարությամբ դուրս գալով ջրի յե-
րեսը, նա տեսավ սարսափելի մի տեսարան։ Նավը կողքի
յեր ընկել, միայն մի չնչին մասն էր ջրից դուրս մնացել։
Շուրջն ալիքները դես ու դեն էին չարտում տակառները,
կայմերի կտորները, արկղները, գերանները, դռնակների
մասերը։ Տեղ-տեղ յերևում էին զլուխներ, ձեռներ, ու
նորից ջրասուլյ էին լինում։

Մարդիկ ջրաձգաբար կառչում էին առաջին հանդի-
պած առարկաներին՝ հենարան փնտռելով։ Նավը հետզհե-
տե ավելի յեր ջրասուլյ լինում։ Ջրից դուրս մնացած նա-
նավամասի վրա գտնվում էր Գարիբալդու լավագույն ընկե-
րը, Լուիջի Կառնելլան։ Նա յերկու ձեռներով ամուր բռնել
էր նավախելի ցցվածքից, վոտները դրել ջարդված չոուր-
վալին, վոր ինչ-վոր մի հրաչքով դեռ չէր չարտվել ծո-
վը։ Մահուդե հաստ բաձկոնը, վոր ամբողջովին թրջվել
էր աղի ջրով, ճնշում էր Կառնելլայի թևերը— վորը չէր

կարող լողալ: «Պինդ կաց, պինդ կաց,— դռաց Գարի-
բալդին, աշխատելով փոթորկի աղմուկում լսելի դարձնել
իր ձայնը:— Յես այստեղ եմ, յես գալիս եմ քեզ ողնելու»: Հասնելով նավին, չանդուտեղով ու արյունոտելով ձեռքե-
րը, նա բարձրացավ սուզվող նավի վրա և սկսեց պատռել
Լուիջի բաճկոնը: Բուժ դանակը դժվարությամբ եր
կտրում հաստ մահուղը: Յերեք-չորս ավելորդ վայրկյան-
ները ճակատագրական դարձան: Ալիքները նոր հարվածը
ջարդ ու փշուր արավ նավը: Յերե Գարիբալդին դուրս յե-
կավ ջրի յերեսը, Կառնիլյան արդեն չկար: Գարիբալդին
յերկար լողում եր նավի բեկորների շուրջը և բարձրաձայն
կանչում իր ընկերոջը: Բայց նա այլևս չտեսավ Լուիջի
Կառնիլյային: Քաջակերելով դեպի ավ լողացող ընկերնե-
րին, Գարիբալդին լողալով մոտենում եր մերթ մեկին ու
մերթ մյուսին, չմտածելով սեփական կյանքը փրկելու մա-
սին: Վորոտի ճայթյունները ցնցում էին ողը: Հոգնատանջ
Գարիբալդին հազիվ հասավ ափը: Այդ սև որը նա կորց-
րեց տասնվեց մարտական ընկերներին: Նրա լավադույն բա-
րեկամները զոհվեցին: «Ռիո-Պարդոյի» ամբողջ անձնա-
կազմից կենդանի մնացին տասնչորս հոգի: «Աշխարհն ինձ
անապատ եր թվում. յես նստել եյի ծովի ափին, գլուխս
հենել ձեռներին և լալիս եյի»,— այս տխուր խոսքերը ազ-
նիվ Գարիբալդին գրեց տասներկու տարուց հետո:

Այն ափը, ուր դուրս յեկան նավաբեկման յենթարկ-
վածները, գտնվում եր ապստամբների ձեռքում, Գարիբալ-
դին չուտով միացավ յերկրորդ նավի անձնակազմին և հա-
րեց Ռիո-դե-Ջանեյրուի գործերի ավանդարդին:

Այստեղ, Սանտա-Կատարինա նահանգում, թնդանոթա-
ձգության վորոտի տակ, ճակատամարտի վառուղի ծխում

Գարիբալդին հանդիպեց այն կնոջը, վորը դարձավ նրա,
հեղափոխականի դաժան և վտանգներով լեցուն կյանքի
արժանավոր ընկերը և մարտական հավատարիմ ուղեկիցը:

Այդ պատահեց ուկրաինոսում յեղած կատաստրոֆից մի
քանի շաբաթ անց: Գտնվելով «Խտապարիկա» յոթնդանո-
թանի նավում, վոր զբաղված եր բրազիլցիներից, Գարի-
բալդին հսկում եր ծովափը: Հաճախ նա այդ նավով անց-
նում եր Դելլա-Բարրա ֆերմայի կողքից, վորը գտնվում եր
հենց ափի մոտ: Նա լավ եր տեսնում շենքերը, դաշտերը,
հարավային լայնատերև ծառերը, մարդկանց, վորոնք
զրադվում էին տնտեսությամբ: Իսկ խաղաղ յեղանակին
պարզ լավում էին խոսողների ձայները: Գարիբալդին հա-
ճախ ափում տեսնում եր չորս կանանց, վորոնք ուրախ
զրուցում էին և արմավենու ճյուղերից կտուրի ծածկ էին
գործում: Նրանց մեջ աչքի յեր ընկնում բարձրահասակ,
վայելչակազմ, սևահեր մի աղջիկ: Հաճելի մի փոքր կոկոր-
դային խոսակցությունն ընդհատվում եր հնչուն ծիծաղով:
Տեսնելով «Խտապարիկան», նա բարձրացնում եր թուխ ձեռ-
ները և վողջունում նավը: Աղջիկը շատ դուր յեկավ Գա-
րիբալդուն, վորը Ֆերմայի կողքից անցնելիս հետաքրքր-
վում եր Անիտայով— հրաչյա աղջկանով:

Անիտա Ռիբեյրասն ամբողջ հոգով սիրեց Ջուզեպպեյին:
Առանց յերկար մտածելու, նա թողեց ընտանիքը, վորպես-
զի լինի Ջուզեպպեյի հետ: Վերջինիս իդեալները դարձան
Անիտայի իդեալները: Ինչպես Գարիբալդին, այդ բրազիլ-
ուհին ել վողեորությամբ և անյերկյուղ նվիրվեց ճշված
ժողովուրդների ազատագրության համար մղվող պայքա-
րին: Մերթ իբրև հասարակ նավաստի, մերթ վայրի ձի
նստած, կարճ հրացանը ձեռքին, մերթ իբրև համարձակ-

Եւրի ջոկատի հրամանատար, համհարդ, գլխության քույր, հետախույզ, հասարակ մարտիկ,— միշտ և ամենուրեք, արհամարհելով յերկյուղը, իր Զուգեպալեյի հետ կռւում եր հերոսին արժանի այդ կինը:



Անիտա Գարիբալդի

Հրամանատարությունից հրաման ստանալով՝ կռւի բռնվել ծովի վրա, Գարիբալդին յերեք նավերից բաղկացած էր փոքրիկ նավատորմիկով հարձակումներ եր գոր-

ծում կայսերական ռազմական նավատորմիդի վրա: Շրա խնդիրն եր նաև դրավել թշնամու այն նավերը, վոր բռնված եյին լինում պարենով և զինասարքով, վորոնց կարիքը խիստ զգում եր հանրապետության բանակը:

Մի անգամ Գարիբալդուն հաջողվեց հակառակորդից դրավել մի քանի ռազմանավակ, վորոնք բռնված եյին բրնձով, հացահատիկով և զենքով: Այդ ռազմանավակները հանրապետական նավատորմիկի ուղեկցութեամբ ուղևորվեցին բանակի գլխավոր կայանը:

Նավերն արդեն տեղ եյին հասնում, յերբ փչեց հյուսիս-արևելյան ուժեղ քամի, վորը խանգարում եր լինը մտնելուն: Մինչդեռ թշնամին, տեղեկություններ ստանալով, թե վորտեղ ե գտնվում հանրապետական նավատորմիկը, վերջինիս չըջապատելու համար ուղարկեց իր յերեք լավազույն մարտանավերը: Գիշերվա ընթացքում բրազիլիական նավերը մոտեցան, հարմար զիրքեր դրավեցին և լուսաբացին հրետանային ուժեղ կրակ բացին: Ռումբերը կարկուտի նման թափվում եյին հանրապետական նավերի վրա: Հմտութեամբ ուղղելով թնդանոթը Անիտան վառվող ջահն արագ մոտեցնում եր վառուդի անցքին: Հանկարծ թշնամու ռումբը փոս դրեց նավի տախտակամածի մեջ: Վորոտաց խլացուցիչ պայթյունը: Անիտան մյուսների հետ ընկավ պայթյունից: Գարիբալդին նետվեց դեպի Անիտան, Պարծելով, թե նա մեռավ: Բայց քաջարի կինը, վոր ընկել եր ողի հարվածից, անվնաս եր:

«Այստեղ քո տեղը չի: Գնա նավամբարը»,— կտրականապես պահանջում եր Գարիբալդին: «Յես կիջնեմ, բայց միայն նրա համար, վոր այնտեղից դուրս քչեմ վախկոտներին, վորոնք թաղնվել են»: Շեվ իսկապես, նա չու-

տող վերադարձավ, բերելով յերկու նավաստի: Ճակատա-
մարտի ժամանակ նավերն իրար մոտեցան: Անիտան՝ տախ-
տակամածի ծայրում ծուկնկ չոքած, փորձառու ռազմիկի
ճարակությամբ նշան եր բռնում կարարինով, և նրա զի-
պուկ զնդակները խոցում: Եյին թշնամիներին: Յերկու
կողմից ել բազմաթիվ սպանվածներ և վիրավորվածներ
յեղան: Թշնամին, վոր ավելի շատ ուժ ուներ, նեղում եր
հանրապետականներին: Չնայելով կորուստներին՝ Գարի-
բալդիականները շարունակում եյին համառ դիմադրու-
թյուն ցույց տալ: Թշնամու նավերն անսպասելի կերպով
հետ դարձան և արագ հեռացան: Մի հաջող կրակոցով
տեղն ու տեղը սպանվեց թշնամու եսկադրայի հրամանա-
տարը, և թշնամին փախավ: Ճանապարհը բաց եր: Ռուս-
բերից ծակծկված, վնասված հանրապետական նավերը կա-
րող եյին շարունակել իրենց ճանապարհը:

Գարիբալդու հերոսության, նրա ռազմական տաղան-
դի և խիզախության շնորհիվ Ռիո-Գրանդեական հանրապե-
տությունը յոթնամյա պատերազմի ընթացքում բազմաթիվ
սպանծալի կռիվներ և ճակատամարտեր չահեց: Փոքրիկ,
վատ զինված հանրապետությունը յոթ տարվա ընթացքում
համառ դիմադրություն եր ցույց տալիս տառն անգամ ա-
վելի ուժեղ հակառակորդին, պաշտպանելով իր անկախու-
թյունը: Բայց ուժերը խիստ անհավասար եյին, և վերջ-
նական հաղթանակը մնաց բրազիլիական կայսրության կող-
մը: 1842 թվին Ռիո-Գրանդեն կրկին դարձավ կայսերա-
կան մի նահանգ:

Այդ նույն թվականին Գարիբալդին թողեց այն յեր-
կիրը, վորի համար քանի՛-քանի անգամ վտանգի եր յեն-
թարկել իր կյանքը, զրկանքներ կրել: Վիմ ի՞նչ գործն

եր, վոր յես, ինչպես հունական մի փիլիսոփա, վոչինչ
չունեյի, բացի այն, ինչ վոր տանում եյի ինձ հետ: Ի՞նչ
արած, վոր յես ծառայում եյի աղքատ հանրապետության,
վորը վոչ վոքի վոչինչ չեր վճարում և վորից յես վորեւ
վճար ստանալ չեյի ցանկանա, յեթե նա անգամ հարուստ
լիներ: Մի՞թե յես չունեյի այն սուրբ, վորը զրնգում եր
կողքիս, այն հրացանը, վորը դրված եր լինում թամբիս
հետևի լայնքով: Մի՞թե ինձ հետ չեր Անիտան, իմ դանձը,
վորի սիրտը նույնքան բոցավառ եր, վորքան և իմը», —
բացականչում ե Գարիբալդին, վերհիշելով այն տարիներ-
ը, յերբ նա անշահախնդիր կերպով ծառայում եր Ռիո-
Գրանդեական հանրապետությունը:

Նա մենակ չղնաց Ռիո-Գրանդեյից: Նրա հետ եյին՝
իր սիրած Անիտան և յերկու տարեկան վորդի Մենոտտին:
Տղան ծնվել եր 1840 թվին, այն թերակղզում, վոր Լոս-
Պաթոս ծովալճակները բաժանում ե Ատլանտյան օվկիանոս-
սից, հնդիկի աղքատ խրճիթում: Մենոտտի ճակատին կար
մի ոպի, — նրա մոր հերոսական կյանքի մարտական տա-
րիների նշանը: Արշավանքներից մեկի ժամանակ հղի Անի-
տան ընկավ ձիուց, ընդմիջտ նշան թողնելով իր առջնեկի
լայն ճակատին: Կյանքը դաժանորեն դիմավորեց վոքրիկ
Մենոտտին: Դեռ յերեսա ժամանակ նա ավրեց պատե-
րազմի զրկանքները և դժբախտությունները: Գարիբալդու
բացակայության ժամանակ թշնամիները հարձակվեցին այն
վոքրիկ գյուղի վրա, ուր գտնվում եր Անիտան: Այդ յե-
ղավ յերեսա բերելուց տասներկու օր հետո: Սոսկալի
փոթորիկի ժամանակ կիսամերկ, անողնական Անիտան, յե-
րեսան զրկին, ձի նստեց և սլացավ դեպի անտառը: Այն-
տեղ, անտառում նրանց գտավ Գարիբալդին: Դրանից մի

քանի ամիս հետո Մենոստուն ե'լ ավելի ծանր փորձու-
թյուն եր ապաստւմ: Հանրապետական զորքերը նահան-
ջում եյին, նեղվելով թշնամու հակադասական բանակից:
Հարկավոր եր ձմեռ ժամանակ ամենադժվարին յերթ կա-
տարել լեռներէ միջով, հորդ և սառն անձրեւի տակ, ջրա-
ռատ, վարարած գետերի վրայով, անցնել կուսական ան-
տառի թափուտներն ու մացառուտները: Նահանջը տեւեց
տասն թափուտներն ու մացառուտները: Նահանջը տեւեց
քան ամբողջ որերով տասնջում եր տղամարդկանց, կանանց
ու յերեխաներին: Զուրը լցվում եր վրանները, վոր հաս-
ճեալ պատրաստում եյին գիշերելու համար: Գետերը տա-
նում եյին մարդկանց, նրանց ինչքը, մթերքները, զենքը:
«Բիչ կանայք,— ասում ե Գարիբալդին,— և ե'լ ավելի
քիչ յերեխաներ դուրս յեկան անտառից»: Գարիբալդին,
վոր շորերով փաթաթված յերեխային կապել եր պարսա-
նոցին, նրան տաքացնում եր իր մարմնի ջերմությամբ և
իր շնչառությամբ: Միայն ա'յդ փրկեց մանկանը, վորին
կենդանի տեսնելու հույսը կորցրել եր Անիտան:

Թողնելով Ռիո-Գրանդեն, Գարիբալդին և իր ընտա-
նիքը վերաբնակվեցին Մոնտեվիդեոյում, վորտեղ, ինչպես
հույս եր դրել Գարիբալդին, ավելի հեշտ կլինեիր կապ
հաստատել Իտալիայի հետ: Նա յերբեք չեր մոռանում իր
հայրենիքը: Նա շարունակում եր անդադար յերազել այն
ժամանակների մասին, յերբ իրեն կլիճակվի մահացու
պոտեմարտում հանդիպել իր հայրենիքի թշնամիներէ հետ:

Մոնտեվիդեոն Ուրուգվայի— Հարավային Ամերիկայի
ամենափոքր պետութեան—մայրաքաղաքն ե: Ուրուգվայի
հանրապետութեան իր անկախ դոյութեան սկսեց 1828
թվին: XIX դարի առաջին քառորդում Ուրուգվայի հզոր
հարեանները—Արդենտինան և Բրազիլիան—պայքար եյին
մղում այդ փոքրիկ յերկրին տիրանալու համար: 1817
թվին բրազիլական բանակը ներխուժեց Մոնտեվիդեո,
հաղթահարեց ուրուգվայցիներին համառ դիմադրութեանը
և Ուրուգվայը միացրեց Բրազիլիային:

Անցավ մի քանի տարի: Ուրուգվայում վերստին սկըս-
վեց աղգային—ազատագրական շարժումը: Յերեք տարի
մղվում եր Ուրուգվայի ժողովրդի ազատագրական պատե-
րազմը Բրազիլիայի տիրապետութեան դեմ: 1828 թվականը
հաղթութուն բերեց ուրուգվայցիներին: Բրազիլիան ըս-
տիպված յեղավ հաշտութուն կնքել և ճանաչել Ուրուգ-
վայի անկախութեանը: 1830 թվին Ուրուգվայի հանրապե-
տութունը հաստատեց իր սահմանադրութեանը, վորի
հիմունքով ընտրվեց հանրապետութեան նախագահը:
Յերկուսու սկսվեց յերկու կուսակցութեանների,— կարմիր-
ների (կոլորադոս) և սպիտակների (բլանկոս) պայքարը:
Ֆրոկտուոս Ռիվերան,— Ուրուգվայի առաջին նախագա-
հը,—գլխավորում եր կարմիրների կուսակցութեանը, վո-
րոնք հենվում եյին բուրժուական և մանր-բուրժուական խա-
վերի, մասամբ նաև նեղր բնակչութեան վրա:

Սպիտակների կուսակցութեանը, վորը ներկայացնում
եր խոշոր հողատերերի և անասնավաճառների շահերը, ու-
նեիր իր ղեկավարը հանձին Մանուել Որիբեյի:

1835 թվին նախագահի պոստում Որբեն փոխարինեց Ռիվերային: Կարմիրներն ապստամբություն բարձրացրին և ժողովրդական մասսաների ոժանդակությամբ 1838 թվին վոնդեյին ատելի նախագահին: Որբեն փախավ Արգենտինա: Արգենտինայի կառավարության գլուխը, գլխատառը Ռուլասը, վոր վաղուց վորոշել էր վոնդեյինը Ուլուգվայի անկախությունը, Որբեյին և սպիտակներին լայն ուղնություն ցույց տվեց և 1842 թվին արչավանք կազմակերպեց Մոնտեվիդեոյի վրա:

Հենց այդ տենդային ժամանակներում էլ Գարիբալդին ժամանեց Մոնտեվիդեո: Նա միջոցներ չունեւ և իր ընտանիքը պահելու համար ստիպւած յեղավ դառնալ չլիկ առևտրական: Քաջարի հրամանատարը և անվահեր նավապետը վերցրեց մանրավաճառի արկղը և սկսեց առևտուր անել:

«... Յես վաճառում եյի ամեն ինչ, իտալական խմորեղենից սկսած մինչև Ռուանի գործվածքները»,— դրում է Գարիբալդին: Այդ «առևտրական» գործունեյությունը, ինչպես նաև հետագայում մաթեմատիկայի դասատուի աշխատանքը, չէր ապահովում շատ թե քիչ տանելի տպւթաւ:

Գարիբալդին խիստ հետաքրքրւում էր այն դեպքերով, վորոնք ծավալվել էյին Ուրուգվայում: Նա ամբողջ հողով համակրում էր փոքրիկ հանրապետությանը, վորը վորոշել էր իր անկախությունը պաշտպանել տեղական և արգենտինյան ռեակցիայի վտանգություններից: Հանրապետական կառավարության առաջին իսկ հրամարով նա թողեց իր դործերը, վորպեսզի մասնակցի արգենտինյան գլխատառի դեմ ուղղված պայքարին:

Հանրապետության կառավարութիւնը Գարիբալդին նշանակեց յերեք նավից բաղկացած եսկադրայի հրամանատար և առաջարկեց դնալ ոգնելու Կորրիենտի բանակին, վորը դուրս էր յեկել Արգենտինայի դորքերի դեմ: Կորրիենտ նահանգը վեց հարյուր մղոնով հեռու յեր Մոնտեվիդեոյից: Ճանապարհն ընկած էր Պարանա գետի վրատեղից: Դեռ անցնել խնամու հրետանու կրակի տակ: Յեթե հարձակում դործեր թնամու նավատորմիդը, վորն իր ուժով բաղմապատիկ անգամ գերազանցում էր Գարիբալդու եսկադրան,— վոչ մի տեղից ուղնություն սպասել չէր կարելի: Զկար նաև ամին մոտենալու վորեւ հնարավորություն:

Արչավանքի բարդությունն ու վտանգավորությունը միայն ամելի հաստատուն դարձրին Գարիբալդու վճռակաւությունը, և եսկադրան, վոր բաղկացած էր «Պերեյրա», «Կոնստիտուցիա» և «Պրոսեդա» նավերից, ուղևորվեց դեպի Կորրիենտ: Արգեն անցել էյին յերկու հարյուր մղոն: Հորիզոնում յերեաց Մարտին-Գարսիա կղզին: Եսկադրան պետք է ճեղքեր ու անցներ մարտկոցների շղթան, վորոնք տեղավորված էյին կղզու վրա: Գրոհը և արագությունն ապահովում էյին հաջողությունը: Ոգտվելով բարենպաստ քամուց, բարձրացնելով բոլոր առագաստները, նավերը համարձակորեն սլացան դեպի առաջ: Պլանը ճիշտ էր. հակառակորդը, վոր չէր սպասում, թե հանրապետական նավատորմը կխիզախի այդպիսի վտանգավոր յելույթ կատարելու, իր առաջ տեսնելով Ուրուգվայի նավերը, չփոթվեց և անկանոն կրակ բացեց: Ռումբերը սվսվում էյին դարիբալդիականների գլուխների վերևում, պայթում էյին

ողբում, ընկնում ջուրը, միայն հաղվադյուռն դեպքերում
դիպչելով նավերին: Տալով մի քանի հոգի վիրավորված և
սպանված, եսկադրան անցավ վտանգավոր դոտին: Սակայն
դեռ յերեք մղոն էլ չէր հեռացել կղզուց, յերբ հեռվում
յերեաց թշնամու նավատորմիկը: Յոթը հիանալի լավ զին-
ված ռազմանավեր հասնում էին հանրապետականներին:
«Չնայելով, վոր յես գտնվում եյի մեծ վտանգի մեջ,— ա-
սում ե Գարիբալդին,— չեյի հուսահատվում, չեյի կորց-
նում իմ վողու արիությունը... Այստեղ խնդիրը վերաբե-
րում եր վոչ թե իմ կյանքին,— յես հաճույքով կգոհաբե-
րեյի այն,— այլ փառքին... պատվին: Համարձակ և քա-
ջաբար ղիմադրեմ նրան (թշնամուն)— այս եր իմ պարտքը,
այս եր իմ պարտականությունը...»

Իր նավերին հրամայելով վորքան կարելի յե մոտիկ
լինել ափին, Գարիբալդին ճակատամարտի բռնվեց: Յե-
րեք ուր անընդհատ շարունակվեց արյունահեղ մարտը:
Յերեք ուր թշնամու նավատորմիկը գորհ եր տալիս հանրա-
պետական եսկադրայի վրա: Արտասովոր քաջությամբ,
վորը հիացմունք եր պատճառում նույնիսկ թշնամիներին,
հանրապետականները հետ եյին մղում գորհները, ուժգին
պաշտպանվելով վրա տվող հակառակորդից և զգալի հար-
վածներ հասցնելով նրան: Յերրորդ օրվա վերջում Ու-
րուգվայի նավերը ծակծկվել էյին արկերից, ջուր եր հո-
սում բացված անցքերից: Թնդանոթի ռումբերն ու փամ-
փուշտները վերջնալուս վրա էյին— կրակելու վոչինչ չէր
մնում: Թշնամին տոնում եր հաղթանակը, բայց... վա-
ղաժամ: Գարիբալդիականները չեյին ել մտածում անձնա-
տուր լինելու մասին: Յերբ վերջացան արկերը, նրանք ի-
րենց աղմիռալի հրամանով հավաքեցին բոլոր յերկաթե և

պղնձե իրերը, մինչև իսկ մուրճերն ու մեխերը, և թըն-
դանոթները շարունակում էյին դեռ մի ամբողջ ուր ու գի-
շեր ռմբակոծել թշնամուն: Վերջապես, դենքի այս պաշա-
րն էլ սպառվեց: Այդ ժամանակ Գարիբալդին հրամայեց
ջարդել խարսխի շղթաները և վերջին անգամ լցնել թըն-
դանոթները: Լսվեց խլացուցիչ մի համադարկ: Յերկաթի
ծանր կտորները, ծուռումուռ տրայեկտորիաներ գծելով,
ընկնում էյին թշնամու նավերի տախտակամածների վրա:
Դրանից հետո հանրապետականների նավերի վրա հրեղեն
սյուներ բարձրացան: Շուրջն ամեն ինչ ծածկվեց թանձր,
բարկ ծխով, վորի պաշտպանության տակ հանրապետա-
կաններն ափ դուրս յեկան և անհայտացան, չնկատվելով
թշնամու կողմից: Յուցաբերելով պարտիզանական պատե-
րադի դարմանալի ընդունակություններ, խճողելով հետ-
քերը և մոլորեցնելով իրեն հետապնդող զորքերին, մերթ
ղիմադրելով թշնամուն և մերթ հարձակվելով նրա վրա,
Գարիբալդին թշնամու խորը թիկունքով իր ջոկատը տա-
նում եր Կոլորինետ:

Մինչդեռ Գարիբալդին գտնվում եր արգենտինյան մի
հեռավոր նահանգում, ռազմական իրադարձություններն
ուրուգվայցիների համար չափազանց անբարենպաստ ե-
յին անցնում: Արոյո-Գրանդեյի մոտ տեղի ունեցած կռիվ-
ներում հանրապետական բանակը ջարդվեց և նահանջեց
մինչև հանրապետության մայրաքաղաքը: Հենվելով ինտեր-
վենտների սվինների վրա, սպիտակներն Որիբեյի առաջ-
նորդությամբ մոտեցան քաղաքին և զիրք բռնեցին Մոն-
տեվիդեոյից վոտով գնալու մեկ ժամվա ճանապարհի վրա:
Սպիտակների գրաված տերիտորիայում ուրում եր դաժան
տեղորդ:

Մինչև Ուրուգվայի մայրաքաղաքը սպիտակների ճա-
նապարհը հեղեղվեց խոլերայի արյունով:

Իմանալով Հանրապետական զորքերի պարտության մասին, Գարիբալդին շտապեց դեպի Մոնտեվիդեո, ուր տեղի յեր ունենում ժողովրդական ուժերի մորելիզացիա, թշնամուն հակահարված տալու համար։ Ժողովուրդը զենք եր ստանում և մարտական դրուժինաներ եր ստեղծում։ Բնակչությունը յեռանդով պատրաստվում եր պաշտպանության։ Քաղաքում անդուլ կերպով ամրություններ եւ յին կառուցվում։ Նեղրերը, վորոնք ազատություն եյին ըստացել, վրդեփրված դուրս յեկան հանրապետությունը պաշտպանելու։ Նրանց հինգ հազարանոց բանակը մի ահարկու ուժ եր կազմում։ Ժամանելով Մոնտեվիդեո և ստանալով կառավարության համաձայնությունը իտալական վտարանդի-հեղափոխականներից ջոկատ կազմակերպելու մասին, Գարիբալդին իր հայրենակիցներին կոչ արեց «զենք վերցնել, լեզիոն կազմել և մինչև մահ կռվել ա՛յն մարդկանց համար, վորոնք նրանց այնքա՛ն սրտաբաց հյուրընկալություն եյին ցույց տվել»։

Գարեբաղու կոչին արձագանք տվին զանազան յերկըր՝
ներսի և ազգերի լավազույն մարդեկի :

Ուրուգվայի բոլոր ծայրերից հեղափոխականները հա-
վաքվում եյին Գարիբալդու լեգիոնը: Յերկու յերեք շա-
բաթից հետո չորս հարյուր մարտիկներ պատրաստ եյին
դիմադրել թշնամուն: Հանրապետութեան ղինլորական մի-
նիստըն իտալական լեգիոնի հրամանատարին տվեց զնդա-
պետի աստիճան: 1843 թվի մարտի 28-ին յեղավ մարտա-
կան մկրտութեանը: Լեգիոններնը, դուրս դալով քաղաքի
ամրութիւններից, քաջաբար դրոհ տվին թշնամու վրա, —

զորը թվով գերազանցում էր նրանցից, — և լիակատար
 հաղթանակ տարան:

Հաղթանակ տարան։
Գարիբալդիականները ցնծությամբ վերադարձան Մոն-տեպիդեո, բարձրացնելով ուրուզվայցիների տրամադրու-թյունը և նրանց հավատ ներշնչելով, վոր պայքարը հաջող լիք է կունենա։ Գարիբալդու Լեզիոներներն մասնակցեցին ծո-վում և ցամաքում տեղի ունեցած բազմաթիվ ճակատամար-տերին. գործելով վճռականորեն ու քաջաբար, միշտ գրո-հելով և հարձակվելով, նրանք պարտություն չեյին կրում Ուրուզվայում տեղի ունեցած պատերազմում։ Գարիբալդին միշտ գտնվում էր իր մարտիկների առջևում։ Լեզիոներները վիրոնց նա վրդեհորում էր իր անվահերուժյան և քա-ջության ուրինակով, պատրաստ էյին գնալ նրա հետևից, ուր ել վոր նա տաներ։

ուր եւ վոր նա տանները :
Պահանջելով, վոր մարտական սրայմաններում լինի ան-
վերապահ հնազանդություն և խիստ կարգապահու-
թյուն : Գարիբալդին կոխներկից ազատ ժամերին հավասար ընկեր
եր լեզվոններենի հետ : Գարիբալդին նրանց հետ բաժանում
եր մարտական կյանքի բոլոր դժվարություններն ու զբո-
ղանքները, ուտում եր նույն կերակուրը, ինչ վոր նրանք,
ստանում եր շարքային ղինվորի մթերաբաժին, քնում եր
նրանց հետ նույն վրանում, հաճախ քաղցած և ծարավ եր
լինում : Սերն ու ջերմ բարեկամությունը Գարիբալդուն
կապում եյին իր մարտիկներին հետ : Լինելով կարեկցող
և զգայուն, նա մեղմ ու բարի վերաբերմունք եր ցույց տա-
լիս նաև այն զինվորներին, վորոնք իր մոտ գերի եյին
ընկնում : Բայց Գարիբալդին ամբողջ հոգով առում ու ա-
համարհում եր դավաճաններին ու մատնիչներին : Յերբ ըս-
տեղծում եր լեզվոնը, այնտեղ սողոսկեցին դավաճանները,

վորոնք նպատակ ունեյին դավադրություն կազմակերպել, սպանել Գարիբալդուն և լեգիոնի հետ անցնել թշնամու կողմը: Դավադրությունը հայտաբերվեց հենց լեգիոններ- ների ոգնությամբ: Դժվար եր նկարագրել Գարիբալդու և մարտիկների ցասումն ու գայրույթը: Վճահական միջոցներ ձեռք առնվեցին, վորպեսզի մինչև վերջ վոչնչացվեն թըշ- նամիները, վորոնք սողոսկել էին լեգիոններնեի շարքը: «Մարքիվելով դավաճաններից, — գրում է Գարիբալդին, — լեգիոնն ել ավելի կարգի ընկավ»: Գարիբալդին անխնա դա- տաստան եր տեսնում լրտեսների, դավադիրների, դավա- ճանների նկատմամբ, դտնելով, վոր չկա մի ավելի մեծ չարագործություն, քան դավաճանությունը սեփական շար- քերում:

Թե խոշոր ճակատամարտերում և թե մանր ընդհա- րումներում գարիբալդիականները միշտ հաջողությամբ նեղում ու ջարդում էին թշնամուն:

Գարիբալդիականներին ամենամեծ փառքի արժանացրեց Սայլոո Սանտ-Անտոնիոյի մոտ տեղի ունեցած հռչակավոր ճակատամարտը, վորը պատերազմի յեւքը վորոշեց հողուտ հանրապետության:

1846 թվի փետրվարի 8-ի առավոտյան Գարիբալդին իր լեգիոնի և յերկու հարյուր հեծելակների հետ դուրս յեկավ արչավանքի: Նրա ջոկատները գնում էին Ուրուգվայ գետի ափով: Թշնամին սպառնում եր յերկու թևերից, և հարկա- վոր եր լինում զգուշություն պահպանել: Յերեկվա ժամը տասներկուսին Զապելի հովիտի խորքում յերևաց հակա- ռակորդի հեծելագործ: Շուտով ամբողջ վայրը ծածկվեց ճիւղվորներով: Յուրաքանչյուր ճիւղվորի հետևում ճիւղ- գավակին նստել եր ելի մի զինվոր: Հազար յերկու հարյուր

հեծելագորայիններ ամբողջ թափով օլանում էին դարե- բալդիականների վրա: Հեծելագորի հետևից շարժվում եր հետևակ զորքը: Լեգիոնը դտնվում եր բաց վայրում: Միակ պաշտպանություն կարող եր ծառայել ծածկը—մի խախուտ կառուցվածք չորս սյուններից և ծղոտե կտուրից: Գարիբալ- դին դեպի առաջ ուղարկեց իր հեծելակներին, վորոնք պետք է կանգնեցնեյին թշնամուն, մինչև վոր լեգիոնը ծածկի մոտ յեկման դիրք բռներ: Փոքրիկ ջոկատը սլացավ դեպի թշնամին. թշնամու հեծելագորը, հարձակվելով հանրապե- տական հեծելագորի վրա, ճնշեց և հետ չարտեց նրան. բաժանվելով յերկու խմբի և դեպի առաջ թողնելով իր հետևակ զորքը, հեծելագորը սկսեց թևից անցնել հանրա- պետականների թիկունքը: Գարիբալդին, վորն առաջ եր պետականների թիկունքը: Գարիբալդին, վորն առաջ եր անցել, վորպեսզի ավելի լավ տեսնի կովի ամբողջ դաշտը, հասկացավ թշնամու տակտիկան և սլացավ դեպի լեգիոնը: Հենց ծածկի մոտ Գարիբալդու ձին սպանվեց: Զիւռ հետ ընկավ նաև Գարիբալդին: Վրա հասավ վտանգավոր մի մո- մենտ, վորը կարող եր ճակատագրական վախճան ունենալ: Տեսնելով իրենց հրամանատարին դետնի վրա փուլած, ճիւղ- տակ, լեգիոններները կարող էին նրան սպանված համարել, և այդ անխուսափելիորեն շիթթություն կառաջացներ: Զը- նայելով վնասվածքների պատճառած ցավին, Գարիբալդին վեր թռավ և պիստոլետից կրակեց ողի մեջ, ցույց տալով, վոր ինքը կենդանի յե և անվնաս: Հարձակման նշան տալով, նա բացականչեց՝ «Խտալացիներ, այս որը հռչակելու յե ձեզ», — և իր մարդկանց տարավ կռիվ: Գարիբալդիա- կանները մի փոքր դեպի առաջ վազելով, համադարկ տը- վին, գրեթե բոլորովին մոտիկից գնդակահարելով թըշ- նամիներին: Նրանց հրացանները, բացի գնդակներից,

լցված էյին նաև Գործք քարերով, վորոնք կարտեչի նման խփում էյին դինվորներին: Կարմիր շապկավորները կրակը վռնէնացնում եր գրոհողների առաջին շարքերը: Հաջող կրակոցը ձիուց ներքև դցեց այն սպային, վորը թշնամու հետևակ զորքի հրամանատարն եր: Գարեբալդու վոգեռած լեզրոններնրը նետվեցին դեպի առաջ: Հետևակ զորքը չգիմացաւ գրոհին և փախուստի դիմեց, բայց հեծելազորը թևերից ամբողջ թափով թռչում եր նրան ողնելու: Լեզրոնը հաղիվ եր կարողացել շարափոխվել, յերբ բռնկվեց ե՛լ ավելի կատաղի կռիվը: Հակառակորդը կիսով չափ ձիերից իջած և կիսով չափ հեծյալ շարքերով, ամբողջ ուժերով հարձակվեց լեզրոններնրի վրա: «...Անձնատուր յեղեք, կարմիր շապկավորներ, ձեր մեկի դեմ մենք հինգ ենք»— գոռում եր հակառակորդը, բայց գարեբալդեաներնրը կռվում էյին աներկյուղ: «Թվում եր, թե Գարեբալդու հոգին գտնվում ե իտալացիներից ամեն մեկի մեջ. այնտեղ, ուր յերեւում եր Գարեբալդին, մեր ուժերը հարյուրապատիկ աճում էյին, իսկ նա լինում եր ամենուրեք... նա կարողանում եր վոգեռել և կռվի հանել նույնիսկ այնպիսի մարդկանց, վորոնք կարծես թե արդեն ուժասպառ էյին յեղել. յես տեսա յերիտասարդներ, վորոնք ութը և նույնիսկ տաս վերք էյին ստացել բայց շարունակում էյին կռվել»,—գրում ե հակառակորդին մասնակցած Սակկին:

Հանրապետական հեծելազորի մի մասը կարողացավ ուշքի գալ հարվածից և թիկունքից հարձակվեց թշնամու վրա: Թշնամին, վոր հարձակում չեր սպասում և չգիտեր, թե ինչ ուժեր են դրոհել իր վրա, չփոթվեց և կանգ առավ: Ուղտվեղով դրանից, գարեբալդիականներն ուրազա-

ցրին հսկիչ պահակախմբերը և ներխուժեցին ճամբարը: Թշնամին խուճապի մատնվեց, չկարողացավ դիմադրել և դարձրեց իր փոշիների խուճապը: Մտնելով գետի մոտ գտնվող խիտ թռչունների, մարտիկների պառկեցին: Գարիբալդին հրամայեց պատրաստ պահել հրացանները, բայց առանց իր հրամանի չկրակել: Մինչև ջուրը մի տասնյակ քայլ եր մնում: Լեզիոներները, վոր կրել էին ծառավի տանջանքները, պատրաստ էին իրենց կյանքի կեսը տալ մի կում ջրի համար, սակայն բոլորը մի մարդու պես շարունակում էին անշարժ և լուռ մնալ, կատարելով հրամանատարի հրամանը: Այդ իսկական հերոսություն եր: Կատաղած հակառակորդն արդյունքում ուշքի չեկավ և սկսեց հետապնդել: Չտեսնելով լեզիոներներին, վորոնք պառկած էին թփերում, թշնամին դալիս եր խիտ զորասյուններով: Ահա արդեն առաջին շարքերը մտան թփուկները: Կարելի չեր լսել մարդկանց հեծն ջնջառությունը, իսկ դարձրեց իրականները չեյին կրակում, և յերբ սպասելը տանջալից դարձավ և թվում եր, վոր սյուլս մի վայրկյան ել չի կարելի սպասել, լսվեց Գարիբալդու հրամանը՝ «կրակել»: Թշնամու յերեսուն զինվորներ ընկան առաջին համազարկից: Թշնամին, վոր հետապնդվում եր ուրաղանային կրակով, սկսեց փախչել առանց հետ նայելու: Միայն այդ ժամանակ դարձրեց իրականները, վոր ուժասպառ էին յեղել տասներկու ժամվա ճակատամարտից, տանջվել վերքերից ու ծառավից, խելադարների նման նետվեցին դեպի գետը, վոր ջրում եր լուսնի դունատ լույսի տակ:

Ուրուգվայի ժողովուրդը և Մոնտեվիդեոյի հանրապետության կառավարությունն ըստ արժանույն ղեկավարե-

ցին Գարիբալդու և նրա զինակիցների ոգնությունը: Յերբ Գարիբալդին ժամանեց Մոնդեվիդեո, ամբողջ բնակչությունը դուրս յեկավ դիմավորելու քաջ ռադիկներին, վորդունելով նրանց հետևյալ բացականչություններով.

«Կեցցե գեներալ Գարիբալդին: Կեցցեն նրա ընկերները: Կեցցե հայրենիքը»:

Ուրուգվայի հանրապետությունն ավելի քան չորս տարի կռվում եր սպիտակների բանակի և արգենտինական զիկտատորի զորքերի դեմ: Այդ պայքարում, վոր Ուրուգվայի ժողովուրդը մղում եր իր ազատության և անկախության համար, Գարիբալդու լեզիոնին պատվավոր տեղ ե պատկանում: Ընդգծելով հեղափոխության իդեալները, վորոնք թանգ էին իր համար, Գարիբալդին դրոշակի վրա նկարել տվեց Վեզուվ հրաբուխը՝ հեղափոխական եներգիայի սիմվոլը, այն եներգիայի, վոր յեռում եր իտալիայի ժողովրդական մասսաների մեջ: Գարիբալդիականներն այդ դրոշի տակ հերոսական սխրագործություններ էյին կատարում և լեզիոնն անթառամ փառքի արժանացրին:

Գարիբալդիականների ուժը, անվահերությունն ու հերոսությունը հիմնվում էին այն բանի վրա, վոր նրանք անձնվիրությամբ և անչահախելի կերպով ծառայում էին հեղափոխական գործին: Նրանց հերոսական տրադիցիաներն այժմ ել շարունակում են ապրել ֆաշիստ բարբարոսների դեմ քաջարար պայքարողների շարքերում: Պատահական չեր, վոր Գարիբալդու անունը պատվով եր կրում իտալական հեղափոխականների գումարտակը, ինտերնացիոնալ բրիգադի ամենապանծալի դրամատիկ

մեկը, վորը խիզախաբար պայքարում եր հանրադեմական
իսպանիայի ազատութեան և անկախութեան համար:



Այն բաղամայա պայքարը, վոր մղվում եր հարավ-ա-
մերիկական հանրապետութիւնների անկախութեան և ա-
զատութեան համար, ավելի ևս հաստատուն դարձրեց
Գարիբալդու հանրապետական համոզմունքները: Այդ յեր-
կար տարիների ընթացքում նա հասկացաւ, վոր միայն
զինված ժողովուրդը կարող ե արտաքսել ոտարեւիրացի-
ներին և տապալել ճորտատեր-կալվածատերերի ու տեր-
տերների իշխանութիւնը:

Գարիբալդու արարը մոտենում եր իր վախճանին:
Իտալիայում բարձրանում եր արդային-ազատագրական
չարժման նոր ալիքը:

Յերբ Իտալիայի վերահաս հեղափոխական փոթորկի
առաջին արձագանքները հասան Մոնտեվիդեո, Գարիբալ-
դին անհապաղ պատրաստվեց հայրենիք վերադառնալու:
«Այն նպատակը, վորի համար յես վորոչեցի ձեռնարկել
այդ ճանապարհորդութիւնը, — ասում ե նա, — կայա-
նում եր նրանում, վոր ապստամբութեանն ոժանդակեյի
այնտեղ, ուր արդեն բռնկվել եր այն, և այդ աղստամ-
բութիւնը տարածեյի այն վայրերում, ուր այն դեռ
չկար»:

Հիմա Զուզեպպե Գարիբալդին արդեն այն անփորձ
յերիտասարդը չեր, վորը հեռացել եր Իտալիայից, այլ
ազատութեան վաստակավոր մարտիկ եր, քաջ զորապետ,
վորը կոխվել եր ճակատամարտերում և դիտեր իր հետեից

տանել մասսաներին՝ Ժողովրդի յերջանկութիւնը նվաճե-
լու համար:

ՀԱՅՐԵՆԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Այն իրադարձութիւնները, վորոնք Իտալիան մոտեց-
րին 1848 թվի հեղափոխութեանը զարգանում եյին շեշտա-
կի թափով: Աղգային-ազատագրական շարժումը, վոր XIX
դարի սոաջին տասնամյակներում արտահայտվում եր հե-
ղափոխական առանձին պոթիւններով, դավադրութիւն-
ներով, մասնակի ապստամբութիւններով, հետզհետե հա-
մազգային բնույթ եր ընդունում:

Արդյունաբերութեան վերելքի հետ միասին, — վորը
քառասնական թվականներին նկատելի հաջողութիւններ
եր ձեռք բերել, — աճում ու ամրապնդվում եր բուրժուա-
զիան:

Իտալիայում կապիտալիզմի զարգացմանը խոչընդոյն
արդեւ եր հանգիստանում յերկրի մասնատվածութիւնը:
1815 թվականին յեվրոպական միապետների կոնգրեսը, վոր
կայացաւ Վիեննայում, Իտալիան բաժանեց ութը պետու-
թիւնների:

Սև, կատաղի ռեակցիան մոլեգնում եր ամբողջ Յեվրո-
պայում: Իտալիայում նա արտահայտվեց մի առանձին
ուժով: Իտալական պետութիւնների գահերի վրա ելի
նստեցին այն թագավորները, վորոնք արտաքսվել եյին այն
ժամանակ, յերբ Նապոլեոն I նվաճեց Իտալիան: Յերկ-
րի կենտրոնում մի ամբողջ մարդ Իտալիայի հնադարյան
մայրաքաղաք Հոմի հետ միասին նորից բնկաւ պապի իշ-
խանութեան տակ: Հարավում, յերկու Սիցիլիաների թա-
գավորութիւնում իշխում եր բուրժուաների դինաստիան:

Իտալիային փաստորեն տիրում էր Ավստրիան: Բացի այն, վրո Ավստրիան ստացել էր Լոմբարդական-Վենետիկյան թագավորությունը, նա իր համար անսահմանափակ տիրապետություն էր ապահովել Մոդենա, Պարմա, Տոսկանա հերցոգություններում, վրոնց թագավորներն ազգական կերպով կապված էին Հաբսբուրգյան տան հետ, այսինքն Ավստրիական կայսր Ֆրանց I հետ: Ավստրիան բռնազբաղվել էր բերդերի հռչակավոր քառանկյունին, շատ քաղաքներում կայազորներ տեղավորել, իսկ յերկու Սկեյլիանների թագավոր Ֆերդինանդի հետ ռազմական դաշնագիր կնքելու միջոցով իր գերիշխանությունն էր հաստատել նաև այդ պետությունում: Վերադարձած միապետերը (նրանք բոլորը, բացի Սարդինիայի թագավորից, ոտաբերկրացիներ էին) դաժան, դադանային բռնություններ էին գործադրում: Հատկապես ստեղծված զինվորական դատարանները մահվան դատավճիռներ էին հրապարակում, հազարավոր մարդկանց դատապարտում խոշտանգումների, հրապարակային մասնաշաղկապ ծեծի և ուրիշ շատ, վրչ պական ծանր պատիժների: Հարյուր հազարավոր խալացիներ, իրենց հայրենիքի անկախություն համար պայքարողներ տառապում էին բանտերում և զննաններում, մեռնում ու կորչում էին տաժանակիր աշխատանքի վայրերում—քարահանքներում:

Իտալական հայրենասերները դեպի կախաղան էին զնում «Կեցցե ազատ Իտալիան», «Կեցցե հանրապետությունը» լոզունգներով:

Ազնվականությունն էլի՝ ստացել էր իր հին արտոնություններն ու իրավունքները: Դպրոցները, վրոնք, ինչպես հնում, հանձնվել էին հոգևորականությունը, դարձել էին

տեղիտություն և կրոնական մոլեռանդության ոջախներ: Գրաքննությունը, վր կրկին ընկել էր կաթոլիկական յեկեղեցու ճանկը, խեղդում ու վրչչացնում էր ամենմի կենդանի միտք, կենդանի խոսք: Պապական մարդում դործում էր միջնադարյան ինկվիզիցիան: Թե ինչպիսի հրեշավոր խավաբամոլություն էր ծավալվել Իտալիայում, այդ ցույց է տալիս թեկուղ այնպիսի մի փաստ, ինչպիսին էր ծաղկապատվաստման և Հոմը զիչերը լուսավորելու խոտագույն արգելումն այն պատվակով, վր դրանք իբր թե հանրապետական նորմուծություններ են:

Դրությունը վատ էր նաև Սարդինիան—Պյեմոնտյան թագավորության մեջ, ուր իշխում էր «սեփական» խալական թագավորը, Սալոյան դինաստիայի ներկայացուցիչը:

Լրտեսություն, մատնություններ, խուղարկություններ, միջամտություն բնակչության մասնավոր կյանքին և դործերին, մարդկանց հալածում և հետապնդում—այսպես էր այն ռեժիմը, վր հաստատվել էր Ավստրիական բռնագրավիչների կողմից ստրկացված Իտալիայում: Ավստրիայի սահմանած ծանր հարկերն ու մաքսային տուրքերը, անվերջ, ապրիրնի դանձումներն արդեւակում էին առետրի և արդյունաբերության վերելքը:

Առանձնապես անտանելի յեր քաղաքային ստորին խավերի և դուղացիության դրությունը: Իտալական ժողովրդի թշվառությունը չտեսնված չափերի հասավ: Մընդամենը թերքների վրա ուժից վեր հարկեր դրվեցին և ժողովուրդը թանդության պատճառով չեր կարող առաջին անհրաժեշտության առարկաներ զնել: Քաղաքներում և դուղերում, ճանապարհների վրա ամենուրեք թափառում էին

հյուծված և սովալլուկ մարդիկ, հաց և աշխատանք փրկող
ուսմ: Ժողովուրդը տանջվում էր միապետութան, յեկե-
ղեցու և ոտարեկրացիների յեռակի լծի տակ:

Ապենինյան թերակղզում Ավստրիայի մռայլ տիրապե-
տութան յերեսուն տարվա ընթացքում տեղի եյին ունենում
անվերջ խռովություններ, մասսաների հուզումներ, ապս-
տամբություններ: Բայց ավստրիական ղինվորականությու-
նը դաժանությամբ ճնշում էր այդ ապստամբությունները:
Ճնշումն ու ստրկացումն ուժեղացան և ավելի ևս զարհուրե-
լի դարձան: Դրա հետ միասին ազգային-ազատագրական
պայքարի և Իտալիայի միավորման դադափարներն սկսեցին
թափանցել բնակչության ավելի լայն մասսաների գիտակ-
ցության մեջ: Դրան նպաստում էր «Յերիտասարդ Իտալի-
այի» մասսայական ագիտացիոն աշխատանքը:

1831 թվին Ջուզեպպե Մաձինու ստեղծած «Յերիտա-
սարդ Իտալիա» կազմակերպությունն առաջադրեց «Հան-
րապետություն և միասնական Իտալիա» լոզունգը: Հիմնա-
կանում արտահայտելով մանր և միջին բուրժուազիայի շա-
հերը՝ այդ կազմակերպությունն աղբեցություն ուներ
նաև արհեստավոր պրոլետարիատի վրա: Այն տարիներում
իտալական յերիտասարդ բուրժուազիայի առաջավոր մասը
հեղափոխականորեն էր տրամադրված: Նա շահագորգուված
էր կալվածատեր-ճորտատերերի ֆեոդալական իրավակարգի
վոճնացումով, — վորը իսնդարում էր Իտալիայի արտա-
դրողական ուժերի զարգացմանը և միասնական ազգային մի
պետության մեջ նրա համախմբվելուն:

«Յերիտասարդ Իտալիան» արագ աճում էր ի հաշիվ
մանր-բուրժուական ինտելիգենցիայի, մանր և մասամբ
միջին բուրժուազիայի, ստորին սպայության, մանր կալ-

վածատեր ազնվականութան, արհեստավորների և գյուղա-
ցիների (վերջիններս չափազանց քիչ եյին):

«Յերիտասարդ Իտալիայի» գործունեյությունը, բացի
ազիտացիոն-սրբապաշտական հաստիքի լայն աշխատանքից,
առաջին իսկ տարիներում նշանավոր դարձավ մի շարք ա-
պրտամբություններով, վորոնք խեղդվեցին ժողովրդի ար-
յան մեջ: Հարյուրավոր խիզախ, բոցաշունչ հայրենասեր-
ներ մահապատժի յենթարկվեցին:

Բայց վոչ արյունոտ տեղորը, վոչ էլ դաժան բռնու-
թյունները չեյին կարող կանգնեցնել աճող հեղափոխական
պայքարը, վորը քառասնական թվականներին ժողովրդա-
պայքարը, վորը քառասնական թվականներին ժողովրդա-
կան բնույթ ընդունեց: Ոգում զգացվում էր հեղափոխու-
թյան վոթորկային շունչը: Յեթե մասսան ատելությամբ
էր վերաբերվում տեղական բռնակալներին, ապա առանձ-
նապես ուժեղ էր նրա ատելությունը դեպի ավստրիական
ոկուպանտները:

«Ոտարերկրյա տիրապետության նկատմամբ Իտալա-
կան ազգի զգլանքն իր զազաթնակետին հասավ» — ասում
է Գարիբալդին:

Վախենալով վերահաս հեղափոխությունից, մի շարք
միապետներ կանխազգուշաբար շտապեցին վորոչ զիջումներ
անել, վոր խաբեն ժողովրդին: Սակայն լայն մասսաներն
արդեն հարել եյին շարժմանը, և կարկատած զիջումներն
անգոր եյին հեղափոխությունը կանգնեցնելու:

1848 թվի հեղափոխության ժամանակ, բացի «Յերի-
տասարդ Իտալիայից», արդեն գոյություն ուներ նաև մի
ուրիշ բուրժուական կուսակցություն, վորը չափավոր-լե-
բերակական էր և իր շարքերում միավորում էր արդյունա-
բերական և առևտրական խոշոր բուրժուազիային, ինչպես

նաև բուրժուացած կալվածատերերին։ Այդ կուսակցու-
թյունը վախենում եր ժողովրդական մասսաներից և հեղա-
փոխությունից, ինչպես կրակից։ Նրա սրահանջները հան-
գում եյին սահմանադրական միապետություն հաստատե-
լուն և իտալիան Սալոյան Դինաստիայի և իտալացի թա-
գավոր Կարլ-Ալբերտի չուրջը համախմբելուն։

Վորպես հակակշիռ «Յերիտասարդ իտալիային», վոր
պահանջում եր իտալիան համախմբել հեղափոխական ճա-
նապարհով, ներքևից, և պայքարում եր հանրապետության
համար,— միապետական բուրժուազիան աշխատում եր
միավորումը կատարել վերևից, «խաղաղ» ճանապարհով։
Նոր կուսակցության առաջնորդն եր կոմս Կալուրը։ Շատ
տարիների ընթացքում նա զբաղվում եր Սարդինյան (Պյե-
մոնտի) պետության պրեմյեր-մինիստրի պոստը։ Կալուրը
և նրա կուսակցությունը կատաղի պայքար եյին մղում
«Յերիտասարդ իտալիայի» և բուրժուազիայի հեղափոխա-
կան մասի դեմ, վորին գլխավորում եյին Մաձինին և Գա-
րիբալդին։




1848 թվի հունիսի 23-ին Նիցցայի բնակիչները վաղ
առավոտից խմբվում եյին նավահանգստում։ Տոնական աղ-
մուկ եր, ուրախություն։ Հենց նավամատույցի ծայրում
կանգնած եյին յերկու կանայք։ Նրանցից մեկը, վոր սե-
վահեր եր, մեծ և գեղեցիկ աչքերով, մտադբաղ չոյում եր
մեծ վորդու գլուխը,— վորի ճակատին մի սպի կար։ Մյուս
յերկուսին բռնել եր գեղեցիկ, ալեհեր մի պառավ։ Նրանց
աչքերի առաջ տարածված եր ծովի զմրուխտե հեռուն։ Հան-

կարծ մարդիկ ուրախության բարձրագույն ճիչեր արձակե-
ցին։ Հեռվում յերևաց սպիտակավուն նավը։ Սևահեր կի-
նը—այդ Անիտան եր— յերջանկության ժպիտը յերեսին
մակույկ նստեց և գնաց նավին դիմավորելու։ Ափում կանդ-
նածները տեսան, թե ինչպես այդ կնոջը բարձրացրին
տախտակամած և վոսկեգանգուր մի տղամարդ առաջ նետ-
վեց ու գրկեց նրան։

«Փա'ռք մեր Գարիբալդուն։ Փա'ռք հերոսին, Կեցցեն
ազատության մարտիկները» — դոչում եր բազմությունը։

Ամբողջ քաղաքը վայրկենապես իմացավ Գարիբալդու
ժամանման մասին։ Ժողովուրդը շտապում եր դեպի նա-
վակայան, ուր կանգնած եր «Հույսը» — այն նավը, վորով
վաթսույնյերեք աքսորականներ անցել եյին ուլկիանոսը,
վոր հետո, վերադառնալով հայրենի յերկիրը, նրա համար
սեփական արյան գնով ազատություն նվաճեյին։

Նիցցայի բնակիչներն իրենց հռչակավոր հայրենակցին
հանդիսավոր ընդունելություն ցույց տվին։ Գարիբալդու և
նրա լեդիոնի ամերիկական պանծալի արչավանքները, իտա-
լական հեղափոխականների հերոսական պայքարը հարավ-
ամերիկական հանրապետությունների անկախության հա-
մար՝ բուռն հիացմունք եյին առաջացրել ստրկացված իտա-
լիայում։ Յերկիրն անհամբերությամբ սպասում եր իր
հռչակված զավակին։ Հիմա, յերբ ամբողջ իտալիան հա-
մակված եր Վալսուրիական ինտերվենտների և սեփական
բռնակալների դեմ ուղղված պայքարի միավորիչ պոռթ-
կումով, ժողովուրդը Գարիբալդու մեջ տեսնում եր իր
մարտական առաջնորդին, վորն ընդունակ ե բարձրացնել
ազգային ազատագրության դրոշմ։



Ժողովուրդը վողջունում է Գարիբալդին

1848—1849 թՎԱԿՆՆԵՐԻ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գարիբալդին դեռ յերեք չէր զգացել այնպիսի յեր-
ջանկութիւն, ինչպէս հայրենիք ժամանելու այդ որերին:
Իսկական հայրենասերի համար ի՞նչը կարող է ավելի թանգ
լինել, քան ժողովրդի սերն ու վստահութիւնը:

Իտալացիք ել հենց այդպիսի զգացմունքներ եյին տա-
ծում դեպի Գարիբալդին, և այդ լավագույն պարզեան եր
տասչորս տարվա աքսորի համար: Կամավորներն սկսեցին
բոլոր կողմերից հավաքվել նրա մոտ: Մի քանի որից հե-
տո, հրաժեշտ տալով մորը, կնոջն ու յերեսաներին, նա
մեկնեց Ճենովա: Այստեղ ևս, ինչպէս Նիցցայում, բնակ-
չութիւնը խիստ սիրալիր ընդունեց նրան: Գարիբալդու
ժամանելուն այլ կերպ վերաբերվեցին բարձրագույն իշխա-
նութիւնները:

Յենթադրելով, վոր Ալբերտ թագաւորն անկեղծորեն
ձգտում է իտալիան ազատագրել ավստրիացիներից, Գարի-
բալդին, հանրապետության այդ համոզված կողմնակիցը,
պատրաստ եր հանուն հայրենիքի ազատագրության կռիւի
նույնիսկ թագաւորական դրոշի ներքո և մոռանալ, վոր
այդ նույն Ալբերտ թագաւորը 1834 թվին նրան գնդակա-
հարության եր դատապարտել:

Գարիբալդին, ինչպէս և այն ժամանակների շատ հե-
ղափոխականներ, հավատալով թագաւորի «լիբերալիզմին»,
մոլորության մեջ ընկան: Թագաւորը հեղափոխութիւնից
ավելի շատ եր վախենում, քան ավստրիական ոկուպանտ-
ներից: Գարիբալդու հեղափոխական հռչակն ու ժողովրդ-
դականութիւնը նրա նկատմամբ թշնամական տրամադրու-
թիւնն առաջացրին թագաւորի մեջ: Յերբ Գարիբալդին

ներկայացավ պեմոնտյան բանակի գլխավոր կայանը, վորպեսզի իր ծառայութունն առաջարկի, ավստրիացիներին դեմ պայքարելու համար, թագավորը սառն ընդունեց նրան և ուղարկեց Տուրին, վոր Գարիբալդին այնտեղ «սպասի զինվորական մինիստրի հրամաններին»:

Այդ նախերգանքն եր այն բաղմամբիւ խոչընդոտների, վոր մենք ամենաբերք հանդիպում եյինք մեր ճանապարհին, ուր իշխում եր համարմամբան դադարաբը, ուր, սակայն, իշխանությունները լիբերալիզմ եյին ցույց տալիս ավելի շուտ ժողովրդի հանդեպ ունեցած յերկյուղից, քան ներքին համոզմունքներից զրոգւած»:

Ահա թե Գարիբալդին ինչպիսի դառն մտքերի հանդեց Պեմոնտի թագավոր Կարլ-Ալբերտի և նրա մինիստրների հետ տեսնվելուց հետո:

Գարիբալդին թեև հասկացավ թագավորի մեքենայությունները, — իսկ թագավորը նրան Տուրին եր ուղարկում, վոր ազատվի նրանից, — բայց նա դեռ չեր գիտակցել Ալբերտ թագավորի դավաճանության ամբողջ ելությունը, — Ալբերտ թագավորի, վորը պատրաստվում եր իտալիան ծախել ավստրիացիներին: Թագավորի նենգությունը չսառեցրեց հայրենասերի ջերմ զգացմունքները: Վոճրադործություն համարելով ձեռները ծալած նստելն այն ժամանակ, յերբ իր յեղբայրներն արյուն են թափում ոտարերկրյա թշնամիների դեմ մղվող կռիւի դաշտերում, Գարիբալդին մեկնեց Լոմբարդիայի մայրաքաղաքը — Միլան: Ուրիշներից ավելի շատ զգալով ոտարերկրյա տիրապետության ծանր լուծը, միլանցիներն առաջինը դուրս յեկան ավստրիական բռնազրավիչների դեմ: Միլանում ժողովրդի ցատումը բռնկվեց դեռ 1848 թվի հունվարի սկզբին: Ավստրիա-

կան բանակի գլխավոր հրամանատար, ութսուն տարեկան կռվամուկ Ռադեցկին, վոր իր ձեռքում եր պահում ամբողջ իշխանությունը, Լոմբարդական-Վենետիկյան թագավորության մեջ «Պաշարողական դրության տեռորիզմ» եր հաստատել: Զգալով աճող հուզումը, նա առիթ եր փնտրում, վորպեսզի արյունահեղութուն սարքի: «Յերեք արյունոտ որերը մեզ յերեսուն տարվա հանդիստ կտան» — ասաց նա: Մասսաների յեւույթի պրովոկացիա սարքելով՝ նա այնուհետև արյունոտ բռնություններ դործագրեց: Սակայն պարզ եր, վոր ժողովրդական մասսաների մեջ կուտակվել եր հեղափոխական հուժկու եներդիան, վորը միայն մի կայծի եր սպասում, վոր բոցավառվի և ծավալվի:

Պայթյուն առաջացնող այդպիսի մի կայծ հանդիսացավ 1848 թվականի մարտյան հեղափոխությունն Ավստրիական կայսրության մեջ: Հենց վոր Վենեսայում առաջացած հեղափոխության լուրը հասավ Միլան, քաղաքում արտաքուրաքուր արագությամբ բարիգաղներ կառուցվեցին և ամբողջ բնակչությունը, զինվելով ինչ վոր պատահեր, հազմադեպ վոգելորությամբ ու միասնությամբ ապստամբեց: Մարտի 18-ին քաղաքում ապստամբները զբաղեցին իշխանությունը:

Ռադեցկու յոթանասունհինգ հազարանոց բանակը յոթըն որվա ընթացքում փորձում եր ճնշել ապստամբությունը, բայց հերոսական ժողովրդական մասսաները, լիակատար հաղթանակ տանելով հսկայական կանոնավոր բանակի դեմ, Ռադեցկուն ստիպեցին նահանջել, ցույց տալով, թե ինչպիսի սխրագործությունների յե ընդունակ ժողովուրդը, յերբ պաշտպանում ե իր հայրենիքի անկախությունը:


Ատելի ոկուպանտներին արտաքսելուց հետո Լոմբար-

դիայում ժամանակավոր կառավարութիւն կազմվեց: Մարտի 22-ին Լոմբարդիան պատերազմ հայտարարեց Ավստրիային: Ոտարերկրյա բռնազրավիչների դեմ ուղղված պատերազմի ժողովրդականութիւնն այնքան մեծ եր, վոր իտալական մյուս պետութիւնների միապետներն ու կառավարութիւնները ստիպված եյին իրենց զորքերն ուղարկել Միլանին ողնելու: Յեթե նրանք այդ Հանեյին, ժողովրդական մասսաների հեղափոխական ցասումն իր ամբողջ ուժով կթափվեր նրանց դէմին:

Միլանի կառավարութիւնը Գարիբալդուն ղեկերալի տիտղոս տվեց և նրան լրացորեց կամավորների զումարտակներ կազմակերպել: Գարիբալդին ամբողջ յեռանդով ձեռնամուխ յեղավ ժողովրդական բանակի կազմակերպման, վորն ուժեղ եր իր հայրենասիրութեամբ և հեղափոխական գործին նվիրված լինելով: Բայց այստեղ ևս նրան հանգիստ չէին թողնում թագավորի հետապնդումները: Միլանի՝ Պեմոնտի ղեսպանը վճռականապէս հակառակ եր, վոր «կարմիր շապկավորները» ջոկատներ կազմակերպվեն, այն ել Գարիբալդու առաջնորդութեամբ:

Վորովհետև Լոմբարդիայի ռազմական ուժերը զործում եյին Պեմոնտի զորքերի հետ միասին, վորոնց հրամանատարն ինքը, Ալբերտ թագավորն եր, ապա միլանցիները ստիպված եյին հաշիւ առնել այդ պահանջները: Սկսեցին ամեն տեսակ խռնդոտներ հարուցել Գարիբալդու դեմ, նրան զենք ու հագուստեղեն չէին տալիս: Մարդկանց զոնե մի կերպ հազցնելու համար հնարամիտ Գարիբալդին ողտվեց իրերի այն պահեստներից, վոր փախչելիս թողել եյին ավստրիացիները: Ավստրիական զինվորների քաթանե շորերից բլուզներ կարվեցին կամավորների հա-

Հրոսթային Իտալիայի քարտեզը 1860 թվին:



մար: Մի կերպ զինելով և հազցնելով իր ջոկատները, Գրիբալդին շարունակում էր կամավորներ հավաքագրել: Հուլյս դնելով ժողովրդի աջակցության վրա, նա իր ազդեցատուորներին ուղարկեց հովիտներն ու լեռները, վորպես-պի նրանք բնակչությանը վոտքի հանեն թշնամիների դեմ. նա առանձնապես ուղում էր դործին ներգրավել հուժկու լեռնցիներին, վորոնք հռչակված էյին իրենց անվախությամբ: Բայց նրան չհաջողվեց իրադործել այդ պլանները: Դավաճան թագավոր Ալբերտը, վորն առիթ էր փնտռում, վորպեսպի կործանի հեղափոխական շարժումը, թույլ տվեց, վոր ավստրիացիները ջարդեն իր բանակը և Կուստոց-ցայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո թշնամու առաջ բացեց ռազմաճակատը:

Մարքսն ու Ենդելսը, վորոնք ուշադրությամբ հետևում էյին Իտալիայում կատարվող դեպքերին, վրայուն կերպով մերկացրին Պյեմոնտի թագավորի վարչելի դավաճանությունը:

Ռադեցկին հարձակվում էր առանց դիմադրության հանդիպելու: Միլանը վտանգի մեջ էր:

Արագությամբ տանելով յերեք հազար կամավորներին, Գրիբալդին շտապում էր ողնության հասնել մատնված քաղաքին: Բայց նրան կանխեցին: Թագավորն ոգոստոսի 4-ին խայտառակ զինադադար կնքեց և Միլանը տվեց ավստրիացիներին: Արյունոտ բռնակալ Ռադեցկին, վրեժխնդիր լինելով, քաղաքը մատնեց հրի ու սրի: Այն կամավորները, վոր դեմ, վորոնք չէյին ցանկանում ցած դնել ղեկը, ուղարկվեց հեծելազորային կորպուսը, վորին հրամայվեց չբջապատել և վոչնչացնել նրանց:

Գրիբալդին մի կոչով դիմեց իտալացիներին: Նա բուցաշունչ խոսքերով դատապարտեց թագավորի ստոր դավաճանությունը, — թագավորի, վորի մեղքով Իտալիան ելի դառնում էր ստրուկների յերկիր, — և ժողովրդին կոչ աբեց պայքարել մինչև վերջին շունչը:

«... Յեթե Սարդինիայի թագավորը հանցագործությունների և ստորությունների միջոցով պահեց իր թագը, ապա յես ու իմ ընկերները մեր կյանքը պահպանելու համար չուղեցինք ստորության դիմել:

...Հիմա, յերբ դուք միահամուռ կերպով ընդունել եք բարձրագույն ճշմարտությունը, վորը պահանջում է վոչնչացնել բռնակալներին, հիմա, յերբ մերկացված են դավաճանները, վորոնք հեղափոխության սանձն իրենց ձեռքն էյին վերցրել այն կործանելու նպատակով, — հիմա ժողովուրդն այլևս խաբեբայություն չի ուղում:

... Մենք առյուծների պես անդադար կկռվենք Իտալիայի անկախության համար մղվող սուրբ պատերազմում ու մեր վերջին շունչը կտանք հայրենիքին»:

Կոչը դրվեց 1848 թվի ոգոստոսի 13-ին, յերբ Պյեմոնտյան բանակն անցել էր Սարդինյան թագավորության սահմանից ներս, յերբ Պիոս IX պապը և իտալական բոլոր միապետները հետ կանչեցին իրենց զորքերը: Անհաշտ Գրիբալդին այսպիսով իր մի բուռ մարտիկների հետ մենմենակ մնաց ավստրիական բազմազգար բանակի դեմ:

Նա իր ջոկատները ճարակությամբ տարավ Լոմբարդիայի խորքը, ուր լեռնային վայրը թույլ էր տալիս պարականոն կործողություններ ծավալել: Բնակչությունը խիզախ հայրենասերներին հաճույքով տրամադրում էր փախադարձական միջոցներ, նրանց պարեն էր մատակարար-

բում: Թշնամու հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ
Լուինոյի մոտ: Գարիբալդու ջոկատում հազար հոգի յեւ
չեր մնացել: Յրվել էյին փոքրոգիները, վորոնք չեյին դե-
մացել աւընդհատ յերթերի ծանրություններին, պարտի-
զանական կյանքի դժվարություններին և զրկանքներին, չե-
յին հավատում, վոր հնարավոր է պայքարել թշնամու յո-
թանասունհինգ հազարանոց բանակի դեմ: Մնացել էյին ա-
մենահուսալի և նվիրված մարդիկ, վորոնց համար հայրե-
նիքի բարորությունն ու յերջանկությունը թանգ եր ամեն
ինչից:

Ավստրիական զորասյունը գրավում եր Բեկաչիո դյու-
ղը— մի շատ հարմար դիրք, վորն իշխում եր ամբողջ վայ-
րի վրա: Հավատարիմ լինելով միշտ առաջինը հարձակվե-
լու իր տակտիկային, Գարիբալդին չորս հարյուր հոգուց
հարվածային խումբ կազմեց և հարձակվեց հակառակոր-
դի յերկու հազարանոց ջոկատի վրա: Ավստրիացիները դի-
մադրում էյին, թվում եր, թե դերափոխությունը նրանց
կողմն է թեքվում: Բայց ահա թշնամու թեւն անսպասելիո-
րեն ցնցվեց և քայքայվեց: Այդ մնացած կամավորներն ե-
յին, վորոնք անցնելով պատերի և մի շարք ցանկապատերի
վրայով, հարձակվեցին ավստրիացիներին վրա: Ընկնելով
հակատից և թեկից տեղացող կրակի հարվածի տակ, ամբս-
տրիացիները չդիմացան և դիմեցին խառնիճաղանձ վա-
խուտի, թողնելով վիրավորվածներին, զցելով զենքերն
ու զինասարքը: Գարիբալդիականների հետ ծանոթանալը
թշնամու վրա նստեց հարյուր սպանված և ութսուն դերի:
Կամավորները նետվեցին հետապնդելու թշնամուն, բայց
ավստրիացիներն այնքան աջադ էյին փախչում, վոր նրանց
հասնել չհաջողվեց: Գարիբալդու հաղթանակը ցնծություն
պատճառեց բնակչությանը:

«Այդ տպավորության տակ,— գրում է Գարիբալդին,—
իմ մեջ հարություն առավ յերկար տարիներ փայփայած
հույսս,— իմ հայրենակիցներին հանել պարտիզանական
պատերազմի: Այն կարող եր լինել առաջին խթանը կանո-
նավոր զորք չունեցող յերկրի ազատագրության համար:
Պարտիզաններ կդառնար ամբողջ ազգը, վորը հաստատա-
պես և անչեղորեն ձգտում եր դեպի ազատագրություն»:

Հաջողությունը նոր արիություն և ուժ բերեց, և
փոքրիկ ջոկատը շարունակում եր քաջաբար կռվել ինտեր-
վենտների դեմ:

Ավստրիական զլխավոր հրամանատար Ռադեցկին վո-
րոշեց վերջացնել հաչիվն մի բուռ քաջերի հետ, վորոնք
անընդհատ անհանգստացնում էյին նրա բանակը և նրան վոչ
մի որ հանդիստ չեյին տալիս: Նա կազմակերպեց մի քանի
բազմահազար ջոկատ և սկսեց թեւանցման շարժումը, վոր-
պեսզի չըջապատի Գարիբալդուն և նրան զրկի Պլեմոնտի
և Շվեյցարիայի կողմը նահանջելու ամեն մի հնարավորու-
թյունից: Թվում եր, թե անբռնելի և անխոցելի Գարիբալ-
դին այս անգամ չի կարող ազատվել ավստրիական դիշա-
տիչի ճանկերից: Կամավորների խիզախությունը, տեղափո-
խությունների արագությունը, Գարիբալդու բացառիկ հը-
նարամտությունը խախտեցին Ռադեցկու պլանները: «Կար-
միր շապիկները», հետ մղելով հակառակորդի հարձակու-
մերը, ճեղքեցին սվինների յերկաթե ողակը և անցան Շվեյ-
ցարիա, ստիպելով Ռադեցկուն կատաղությունից պոկել իր
մաղերը: Գարիբալդին վերադարձավ Նիցցա: Ապաքինվե-
լով քայքայիչ դողերոցքից, վորով առաջ ել եր հիվան-
դացել, նա դնաց ձենովա:

Այստեղ նա հանդիպեց Սիցիլիայի պատգամավորու-

թիւնը, վորը նրան հրապարակեց իր վրա վերցնել Նեապոլի
թագավոր Ֆերդինանդի դեմ կռիւղ ապստամբական ուժերի
հրամանատարութիւնը: Գարիբալդին առանց յերկար մտա-
ծելու մեկնեց Սիցիլիա: Բայց վենետիկն ավելի շատ եր ըզ-
գում նրա ոգնութեան կարիքը: Վենետիկի հանրապետական
կառավարութիւնը, հենվելով ժողովրդական մասսաների
ոգնութեան վրա, չարունակում եր դիմադրել ավս-
տրիական բանակներին: Գարիբալդին փոխեց մարշրուտը և
դարձավ դեպի Վենետիկ: Նա պետք ե դնար Ապենինյան
բարձր լեռների վրայով, վորտեղից ձմեռ ժամանակ դժ-
վար եր անցնել: Նոյեմբեր ամիսն եր: Ճանապարհները
ծածկված եյին խոր ձյունով: Դաժան սառնամանիքի պատ-
ճառով մարդիկ դուրս չեյին դալիս բնակարաններից: Այս
ու այն կողմ ցրված գյուղերը կտրվել եյին ամբողջ աշ-
խարհից: Փոքրիկ ջոկատը գնում եր մինչև ծնկները ձյան
մեջ թաղվելով: Պատառոտված շորեր հագած, ցրտից
սառչելով, մարտիկներն անցնում եյին մի լեռնանցքից մյու-
սը: Նրանց հողմահար դեմքերն ահարկու եյին և վճռա-
կանութիւն ու անհողողող կամք եյին արտահայտում:
Վոչ մի հառաչանք, վոչ մի բողոք: Մարդիկ լուռ քայլում
եյին քամու վայրի վրոնցի, ժամանակ առ ժամանակ ընկ-
նող լեռնային սառցակոշտերի դղրոցի տակ, քայլում եյին
իրենց քաջ հրամանատարի հետևից, յենթակա լինելով ա-
մեն բոպե հսկայական բարձրութիւնից անհատակ անդուն-
դը գլորվելու վտանդին: Յերբեմն ստիպված եյին լինում
ամբողջ օրը վոչինչ չուտել: Գյուղերի բնակիչներն ել, վո-
րոնք բարյացակամ եյին վերաբերվում դեպի հայրենատե-
րեր, հաճախ ուտելիք չեյին ունենում: Վերջապես, ջոկատը
հասնում էր Ռիմոնտիսի — այդ անկողնին մօտ լիւի հյուսիսային մասը:

Պիոս IX պապը, իմանալով գարիբալդիականների մոտենա-
լու մասին, արդեւեց նրանց մուտքն իր տիրութիւնները և
ուղարկեց չվեյցարական վարձկանների մի խոշոր ջոկատ,
վորը պետք ե զենքով հետ քշեր վտանգավոր հյուրերին:
Բայց ժողովրդի սիրելի ժամանման լուրն արդեն տարած-
վել եր և բնակիչներն ապստամբութեան սպառնալիքով
պապին ստիպեցին վերացնել արդելքը:

Գարիբալդիականները, վորոնց ցնծութեամբ ընդունեց
ժողովրդը, մտան քաղաք: Ջոկատը համալրվեց կամա-
վորներով և հասավ Ռավեննա: Ռավեննայում կրկնվեց նույն
պատմութիւնը: Գաղաքի դարբասների մօտ զինված պահա-
կախումք եր կանգնել: Մասսաների տրտունջն ու ցասումը
բաց արին դարիբալդիականների ճանապարհը դեպի քա-
ղաք:

Ջոկատը տեղավորվեց Ռավեննայում, վորպեսզի հան-
դըստանա, կամավորներ հավաքի և պատրաստվի հետագա
արշավին, յերբ հանկարծ վերահաս դեպքերը բողբոջին
փոխեցին գործի ընթացքը:

Կրծքից դաշույնի հարված ստանալով՝ սպանվեց պա-
պական կառավարութեան մինիստր-նախագահ Պելլեգրինո
Ռոսսին: Ժողովրդին կատաղաբար առող այդ մինիստրի
մահը տեղի ունեցավ այն ժամանակ, յերբ արդեն հրա-
պարակվել եր ձեռք դցած մի գնեւերալի նամակը, վորով
Ռոսսին առաջարկվում եր «կարտեչով վոչնչացնել Գարի-
բալդու դունդը»: Ռոսսիի սպանութիւնն ընդհանուր ա-
պրտամբութեան աղդանշան դարձավ: Հուլիս չղնելով
յերկնային ուժերի միջամտութեան վրա, պապը գրիմ ա-
րավ, շորերը փոխեց ու փախավ նեապոլյան Գաետա բեր-

դը, Ֆերդինանդի, — ռումբ-թաղավորի մոտ, վորին այդպես եր. անվանել իտալական ժողովուրդը՝ Մեսսինայի ապստամբութեան չլսած, դադանային ճնշման համար:

Գարիբալդին հիմա չեր ել ուղում հեռանալ պատահան մարդից: Հեղափոխական բնադրն ապում եր նրան, վոր հենց Հռոմում ե վորոշվելու իտալիայի հեղափոխական բախտ, և նա, ջոկատը թողնելով Չեղենում, զնաց հնադարյան մայրաքաղաքը: Հռոմի նոր կառավարութունը չարդարացրեց Գարիբալդու հույսերը: Այդ կառավարութունը նույնպես չեր վստահում նրան և իրեն համար վրտանդավոր եր համարում մոտիկ վայրերում պահել զինված հայրենասերներին ա՛յն մարդու առաջնորդութեամբ, վորի միայն մի խոսքը կարող եր վառել Հռոմը: Միայն կառավարութունը ոխակ չեր անում բացահայտ կերպով թշնամութուն արտահայտել ազգային ազատութեան հերոսի նկատմամբ: Կառավարութունը Գարիբալդու լեզիոնն ընդունեց Հռոմի դրքի մեջ, բայց Գարիբալդին իսկույն հրաման ստացավ մեկնել Ֆերմո նավահանգիստը, մի խուլ վայր, վորը հեռու յե Հռոմից:

«Լեզիոնը 500 հոգուց ավելի չպիտի ունենա», — ապում եր զինվորական միջնադրի հատուկ հրամանը:

«Հռոմում իշխում եր նույն վոգին, ինչ վոր Միլանում և Ֆլորենցիայում, — սպանիչ կերպով գրում եր Գարիբալդին այդ ճիվաղային կառավարութեան մասին: — Իրը թի իտալիան վոչ թե մարտիկների, այլ շատախոսների և չարչիների կարիք ե զգում: Ժողովրդին խաբելու համար բռնակալութունը վորոշ ժամանակով կառավարութունը տրամադրեց չաղակրատներին, գիտենալով, վոր թուլթակները միայն ճանապարհ կհարթեն ամենազարհուրելի ու-

ակցիայի համար, վոր առաջանում ե ամբողջ թերակըղում»:

1848 թվի դեկտեմբերին լեզիոնը յերրորդ անգամ անցավ Ապենինյան լեռները: Տերտերներն ու ճիզվիտները, վորոնք Գարիբալդուն համարում եյին իրենց մահացու թշնամին, ամենուրեք նրա դեմ եյին հանում տեղական բնակչութեանը, նրան պատկերելով իբրև թուկից փախած, դժոխքի ծնունդ, իսկ ջոկատը — ավաղակների շայկա: Տեղ-տեղ իր ազդեցութունն եր դործում այն թշնամական ազդեցության, վոր մղում եյին «արյունաբերները, խաբեբաները, սրիկաները և ոտարեկրյա պետութեանների դործակալները», — ինչպես տերտերներին ու կուսակալներին անվանում եր Գարիբալդին, վորը մանկութեանից ապում եր նրանց: Յերբ ջոկատը մոտենում եր Մաչերատին, բնակիչները փակեցին դարբասները և հրաժարվեցին ջոկատին ներս թողնելուց: Դիսցիպլինան, կարգ ու կանոնը, դեպի բնակչութունը տածած հարգանքն աղաղությամբ պարզում եյին խաբեբայութունը, և Գարիբալդիականները դրկաբաց եյին ընդունվում: Յերբ լեզիոնները վերադառնում եյին, Մաչերատի բնակիչները, դիտակցելով իրենց մեղքը, ուղարկեցին մի պատգամավորութուն, վորը դարիբալդիականներին խնդրեց կանգ առնել քաղաքում: Նրանց ամենասիրալիք ընդունելութունը ցույց տրվեց: Վաղաքացիները միջոցներ հավաքեցին և կամավորների համար հազուստ ձեռք բերին: Հետադառնալով, Սահմանադիր ժողովի ընտրութունների ժամանակ մաչերատցիները միահամուռ կերպով իրենց քվեները տվին Գարիբալդուն, վորպես իտալիայի ամենահավատարիմ ղավակներից մեկին, ընտրելով նրան Մաչերատա քաղաքի պատգամավոր:

Մասաները դժգոհություն եյին արտահայտում Հոռ-
մի նոր կառավարութեան ուղորդունիլովի և անդործունե-
յութեան դեմ, իսկ այդ կառավարութեանը ժողովրդից ծա-
ծուկ պատրաստվում էր դավաճանական համաձայնու-
թեան դալ պապի հետ: Այդ ժամանակ Գարիբալդին և
Մաձինին ժամանեցին Հոռմ: Վերջինս ժամանեց Տոսկանա-
յից, վորը հանրապետութիւն եր հռչակել և վորոշել եր
տոսկանական 39 պատգամավորներին ուղարկել Սահմանա-
դիր ժողով: Այդ ակտով հաստատվում էր Հոռմում գու-
մարվող Սահմանադիր ժողովի համազգային նշանակու-
թյունը:

Ամենաուժեղ ազիտացիայի ազդեցութեան տակ, վոր
Գարիբալդին և Մաձինին ծավալել եյին Հոռմի բնակչու-
թեան ամենալայն խավերի մեջ, վճռվեց Սահմանադիր ժո-
ղովի ընտրութիւններէ հարցը: Ժողովի բացման ուրը Գա-
րիբալդին հիմնադրեց: Հին ռեվմատիկով անկողին դցեց
նրան, բայց այդ չեւ կարող խոչընդոտ հանդիսանալ իր քա-
ղաքացիական պարտականութիւնները կատարող հեղա-
փոխական ենտուղիաստի համար: «Այդ յեղալ 1849 թվի
փետրվարի 8-ին: Ինձ, ռեվմատիկական ցավերով կաշ-
կանդվածիս, իր ուսերի վրա նիստերի դահլիճ տարալ իմ
համհարզ Բուենոն», — պատմում է Գարիբալդին առաջին
անգամ Սահմանադիր ժողով իր այցելելու մասին:

Դատարկ խոսակցութիւնները ջղայնացնում եյին Գա-
րիբալդուն, վորը պարզ վորոշումներ և յեռանդուն գոր-
ծողութիւններ եր սպասում: Յեւ նա հանդես յեկավ մի
ճառով, վորը կոչ եր անում անհապաղ ձեռնամուխ լինել
հեղափոխական գործերի իրականացման: «Այժմ մենք
պարտաւոր ենք առաջադրել և լուծել կենսական, սկզբ-
բունքային մի հարց: Հասկաղել, թեկուղ մի ակնթարթ,

ըստիս հանցադործութիւնն է: Այժմ իտալական ժողովրդի
մի յերրորդ մասը ստրկացված է, մեր միլիոնավոր յեղ-
բայրները տառապում են, տանջվում ու հեծեծում: Իսկ
մենք ի՞նչ ենք անում: Այստեղ դրաղվում ենք ձեռնա-
դիսկուսիաներով: Յես հաստատ համոզված եմ՝ քանի
վոր կառավարման նախորդ ձեւը վոչնչացված է, ուրեմն
Հոռմի համար այժմ միակ հարմար ձեւը հանրապետու-
թիւնն է»: Այս խոսքերն ընդունվեցին ծափահարութիւն-
ներով:

Փետրվարի 9-ին հռչակվեց Հոռմի հանրապետութիւն-
նը: Պապի աշխարհիկ իշխանութիւնը վերացվում եր:

Իտալական մյուս պետութիւնները — Վենետիկի հան-
րապետութիւնը, Ճենովան և Ֆլորենցիան հետեցին Հոռ-
մի հեղափոխական որինակին:

Այն ուրերում, յերբ Իտալիայում բարձրացել եր հե-
ղափոխական ալիքը, Ավստրիայում և Ֆրանսիայում հե-
ղափոխութիւնը ջղաճգութիւնների մեջ եր: Իտալական
ազգային-ազատագրական շարժման հաջողութիւններն
անհանգստացրին յեւրոպական ռեակցիային, վորը հեղա-
փոխական պայթիւններից հետո ուղքի յեր յեկել: Ներքին
և արտաքին հակահեղափոխութիւնն ուժեր և միջոցներ
եր հավաքում իտալական հանրապետութիւնների վրա
արշավելու համար:

Ապրիլի 24-ին Ֆրանսիական ռազմական նախատորմիդը
դէներալ Ուգլինտի հրամանատարութեամբ տասը հազա-
րանոց մի դեսանտ հանեց Իտալիա: Ֆրանսիայում իշխող
Լուի Նապոլեոնն ինտերվենտների այդ բանակն ուղարկել
եր Հոռմը գրավելու, հեղափոխական-դեմոկրատական
հանրապետութիւնը վոչնչացնելու և պապին նորից դահ

նստեցնելու համար: Լուի Նապոլեոնը— Ֆրանսիայի նախագահը և նրա ապագա կայսրը— իտալական ժողովրդի նկատմամբ ուխտադրություն և ներգություն ցուցաբերեց: Վախենալով, վր չլինի թե «հեղափխական վարակը» սահմանից անցնի Ֆրանսիա, նա վորոշեց խեղդել Հռոմի հեղափոխությունը, Ֆրանսիական պառլամենտին հայտարարելով, թե եքսպեդիցիոն կորպուսն իտալիա յե ուղարկելու ավստրիական ռկուպանտները դեմ պայքարելուն, նա դրա համար համաձայնություն ստացավ: Իրականում Ֆրանսիական զորքերն ուղարկվում էին իտալիայում հեղափոխությունը ջախջախելու համար: Ուղիներն սկզբում փորձեց խորամանկություն մտնել Հռոմ: Նա հավաստիացնում էր, թե յեկել և Հռոմի հանրապետությունը պաշտպանելու ավստրիական վտանգից: Քոորամանկությունը ձախողվեց:

Հռոմում տարբեր կերպով ընդունեցին իտալական յերկրում Ֆրանսիական զորքերի յերևալու լուրը: Վամանք պնդում էին, թե Ֆրանսիացիներին պետք և ընդունել վորպես բարեկամների. մյուսները կասկածում էին Ուղիներոյ անկեղծության նկատմամբ և պահանջում էին «ուժի դեմ ուժ հանել»: Ֆրանսիական բանակի ներխուժման իսկական իմաստն ըմբռնող Մաձինու կարծիքը հաղթանակեց, և Մահմանադիր ժողովր վորոշեց զինված դիմադրություն ցույց տալ այդ բանակին:

Հռոմի քաղաքացիներն արտասովոր խանդավառություն մկսեցին ամրացնել քաղաքը: Կառուցվում էին թմբեր, բարիկադներ, նորոգվում էին դարբասները, բարձր տեղերում թնդանոթներ էին դրվում: Կյանքը տենդային կերպով յեռում էր—քաղաքն անձանաչելի դար-

ձավ: Այն ամենն, ինչ վոր կարող էր ծառայել պաշտպանության, մորլիզացիայի յենթարկվեց: Ձուլման վառարանները, սղնձի և փականադործական արհեստանոցները, դարբնոցներն աշխատում էին անդադար: Թընդսոթներ, արկեր էին ձուլում: Վառող էին պատրաստում, հրացաններ, սվիններ, սրեր շինում: Յերեխաները, կանայք, ծերերը նույնպես աշխատում էին առանց ձեռները ծալելու: Վոչ վոք չեր ուզում անտարբեր մնալ ժողովրդական վոդեորություն այդ որերում:

Հռոմը, վոր դարձել էր դեմոկրատիայի պայքարի դրոշ ազատությունը խեղդողների դեմ, ձգողական ուժ դարձավ բոլոր նրանց համար ովքեր թանդ էին դնահատում միասնական և ազատ իտալիայի չահերը: Հայրենասեր—հեղափոխականները բոլոր կողմերից շտապում էին դեպի Հռոմ, վորպեսզի մտնեն հանրապետության պաշտպանների շարքերը: Գարիբալդին իր լեգիոնով անհամբեր սպասում էր, վոր իրեն կանչեն մայրաքաղաք: Անցավ յերեք որ—հրաման չկա: Կառավարությունը Մաձինու գլխավորությամբ կարծես մոռացել էր նրա գոյությունը: Գարիբալդին չեր յենթադրում, վոր կառավարությունը նախապատվություն և տվել զինվորական մի վարությունը նախապատվություն և տվել զինվորական մի մասնազետի: Վախենալով այն հսկայական ազդեցությունից, վոր Գարիբալդին ուներ մասսաների վրա, նրա հեղափոխական թափից, վճռականությունից, վորով նա դեպի առաջ էր գնում բոլոր խոչընդոտները հաղթահարելով, —կառավարությունը հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատար նշանակեց սակավ ընդունակ Կեներայ Ռոսսելլուն:

Այստեղ արտահայտվեց Մաճինու մանր-բուրժուական եյությունը, նրա անվճռականությունը, տատանումները, վորոնք մեծ վնաս հասցրին հանրապետությանը:

Յերբ Փրանսիական զորքերն Ուղինոյի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Հռոմ, կառավարությունն անհանգստացավ և մեջտեղ յեկավ հրամանը, վորը պահանջում էր, վորպեսզի խիզախ Գարիբալդին զնա Հռոմ: Գարիբալդին ձենովայից դուրս յեկավ վաթսուն հոգուց բաղկացած մի ջոկատով, իսկ Հռոմ բերեց հազար յերկու հարյուր մարտիկ: Մարդիկ դեպի Հռոմ ելին ձգտում, վոր հաղթեյին կամ մեռնեյին: Ապրիլի 7-ին Գարիբալդու լեգիոնը ժամանեց նշանակված վայրը: Լեգիոներները վստահ քայլում եյին հնադարյան քաղաքի փողոցներով: Առջևից ձիով գնում էր այն մարդը, վորին հույսով և հավատով եյին նայում հռոմայեցիները: Լայնեղր, սև գլըխարկի տակից կարմիր շապկի վրա եյին թափվել հուրհրան վոսկե մազերի փնջերը: Կարմիր աստառով սպիտակ պանչոն, վորով ծածկված էր հուժկու Ֆիդուրը, փողփողում էր քամուց: Կապույտ, վառ աչքերը նայում եյին ուղիղ և շիտակ: Հուրհրան-կարմիր մորուքն ու բեխերը մարտական արտահայտություն եյին տալիս բրոնզե դեմքին: Ամեն կողմից լսվում եյին հազարավոր մարդկանց հուժկու բացականչությունները՝ «Գարիբալդին, Գարիբալդին»: Այս անունն իշխում էր բոլորի վրա: Թնդում եյին բացականչությունները:

Գարիբալդին յերջանիկ էր: Յեթե Հռոմի կառավարիչները չունեցան այնքան հասկացողություն և վճռականություն, վոր հանրապետության պաշտպանությունը վրստահեյին նրան, ապա ժողովուրդը նրան ընդունեց իբրև

իր ընտրյալը, — վոր ընդունակ էր հետ մղել ինտերվենտներին, — և նրա նկատմամբ լիակատար վստահություն արտահայտեց: Իսկ դա ամենազլխավորն էր: Գարիբալդին պատրաստ էր կռվել ժողովրդի դործի համար, թեկուզ իբրև հասարակ զինվոր:

Լեգիոներները տեղավորվեցին կույսերի լքած վանքում: Առաջադրություն ստանալով կազմակերպել քաղաքի պարիսպների պաշտպանությունը, Գարիբալդին անխոնջ կերպով, առավոտից մինչև գիշեր մարտական պատրաստության էր բերում տասնութը կիլոմետրանոց քարե ողակը, վորով չըջապատված էր Հռոմը: Նա հիանալի ուսումնասիրեց սպասվող մարտի վայրը: Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատար Ռոսսելլուն զարմանք պատճառեց այն, վոր Գարիբալդին իր լավագույն զորամասերը տեղավորել էր վոչ թե ամրությունների մոտ, այլ բարձր բլուրի վրա գտնվող Պամֆիլի վիլլայի ընդարձակ այգիներում: Ոժտված լինելով հիանալի ըմբռնողությամբ և վայրի տակտիկական առանձնահատկությունները կատարելապես ոգտագործելու կարողությամբ, Գարիբալդին մի անդամից հասկացավ, թե ինչ առավելություն ունի իր դրաված բարձրությունը, վորն իշխում է քաղաքի պարսպի վորոշ մասի վրա: Դիրքերի վաշտուն ընտրությունը վճռական նշանակություն ունեցավ ծավալված ճակատամարտերի վերջավորության համար:

Գարիբալդու լեգիոնին միացրին մի ջոկատ, բաղկացած դանազան հասակ ունեցող և դանազան դբադմունքի տեր մարդկանցից, վորոնք սովոր չեյին ռադմական դործին: Գարիբալդու հրամանատարության տակ ընդամենը կար յերկու հազար հինգ հարյուր հոգի:

Թշնամին իր ուժերը մոտեցնում եր քաղաքի պարիսպներին: Առջևից, ինտերվենտներին ճանապարհ ցույց տալով, դնում էին իտալական քառանյակները՝ խաչելու թյունը ձեռներին: Ուղինոն վորոշեց չեչտակի հարված տալ և մի անդամից վերջացնել դործը: Յերկու զորասյուններ առաջ անցան ու յերկու կողմից դրոհ տվին, մըտադիր լինելով Վատիկանի յերկու կողմից ներխուժել Անտեիկի և Կավալլեդիերի դարբասներից և միանալ քաղաքի ներսում, Պետրոսի հրապարակում: Կավալլեդիերի դարբասի մոտ Սան-Մարիո Բաստիոնի մարտկոցները թշնամուն ղիմավորեցին աշխարհի ումբակոծությամբ, վոր նույնիսկ Փրանսիական փորձված ղինվորները չղիմացան ու հետ շարավեցին:

Այդ ժամանակ յերկրորդ զորասյունը հասավ մինչև Անտեիկի դարբասը, իսկ ինտերվենտների գլխավոր ուժերն իրենց հրետանու ուժեղ կրակի պաշտպանության տակ համառորեն չարունակում էին մոտենալ: Անտեիկի դարբասի մոտ բռնկվեց կռիվը: Հիանալի վարժված ֆրանսիական հրետավորների գլխուկ հրաձգությունը շարքից դուրս բերեց Հոռմի հրետաձիգներից չատերին և պաշարվածների մարտկոցները թուլացրին կրակը: Այդ ժամանակ թշնամին գլխավոր ուժերի ամբողջ մասսայով նետվեց հանրապետական դիրքերը ճեղքելու: Գարիբալդին գլխավորակալանից ուշադիր հետևում եր ռազմական դործողությունների ընթացքին, սպասելով վճռական մոմենտի: Այժմ այդ մոմենտը վրա յեր հասել: Առաջակալներ նշանակելով սպառնալիքի տակ գտնվող անցքերում և թևերում, նա սասանիչ արագությամբ հարձակվեց թշնամու կենտրոնի վրա: Գրոհը գլխավորում էին «Մոնտե-

վիդեոյի վազերը» (լեգիոներներ, վորոնք Գարիբալդու հետ յեկել էին Ամերիկայից): Ամենուրեք, ուր յերևան էին դալիս այդ փորձված ռազմիկները, թշնամու շարքերը խիստ նոսրանում էին:

Մերթ այստեղ ու մերթ այնտեղ փողփողում եր հըրամանատարի կարմիր պլաշը: Թվում եր, թե Գարիբալդին գտնվում ե ամենուրեք: Ուշադրություն չդարձնելով վերքից հոսող արյան վրա, նա յերևում եր այնտեղ, ուր ամենից ուժեղ եր լինում կռիվը, ուր պահանջվում եր վորդեհել մարտիկներին, բարձրացնել նրանց մարտական լավում էին մարտելով հնչյունները: Այդ նվազախմբին էին նվազում Հոռմի պարիսպների վրա և մարտիկներին վորդեհողում դեպի մարտական սխրագործություններ: Արհեստավորները, բանվորները, ուսանողները, վոր կաղմում էին Գարիբալդու շուկատները, հետևելով քաջարի մոնտեվիդեցիներին, իրենց քաջությամբ հետ չեյին մընում նրանցից և արժանի էին իրենց հերոսական հրամանատարին: Ձեռնամարտը տևեց մի ժամից ավելի: Փրանսիական ղինվորները փախան, Գարիբալդու ձեռքում թողնելով յերկու հարյուր վաթսու ղերի:

Փրանսիական գլխավոր հրամանատար Ուղինոն դեռ չեր հավատում, վոր ճակատամարտը տանուլ ե տրված, և կռվի նետեց վերջին ռեզերվները: Փրանսիացիները մինոր

բրիգադա սկսեց նեղել դարիբալդիականներին: Չորս ժամ-
վա ճակատամարտից հետո Փրանսիացիներին հաջողվեց
հետ մղել ուսանողական ջոկատը և չարժվել նրանց դիր-
քերի խորքը. ծավալելով հարձակումը, Փրանսիացիների
մի գումարտակ կապիտան Պիկարի հրամանատարու-
թյամբ դրավեց քաղաքի պարսպի մոտ գտնվող ամրացված
մի շենք, վորը դարձրեց հենակետ հետագա դրոհների
համար: Պամֆիլի վիլլայի լեռնային դարավանդով շեշ-
տակի իջնում եյին Գարիբալդու լեզիոնի պահեստի զորա-
մասերը: Վոչինչ չէր կարող դիմադրել նրանց հուժեղու-
դրոհին: Ութը հարյուր կամավորներ վազքով դուրս եյին
գալիս Սան-Պանկրացիո դարբասից: Ֆրանսիացիների բրի-
գադըն ուղղակի կտոր-կտոր արվեց: Ֆրանսիական կա-
պիտան Պիկարը չկարողացավ միանալ փախչող զորքերին
և ընկնելով անելանելի դրության մեջ, գումարտակի հետ
միասին անձնատուր յեղավ:


Ինտերվենտների բանակի գլխավոր հրամանատարն
այլևս չէր մտածում Հռոմ մտնելու մասին, այլ տենդային
կերպով միջոց էր փնտռում անվնաս մնացած զորքերի հետ
հեռանալու համար:

Գարիբալդին արագությամբ առաջ անցավ, փակեց
հակառակորդի ճանապարհը, չթողեց, վոր նա ուշքի գա-
ւ սկսեց շրջապատել նրան: Թշնամին առանց կանգ առ-
նելու փախավ մինչև Կաստել-Գիդո— Հռոմից քսան կիլո-
մետր դեպի արևմուտք: Գարիբալդին իր լեզիոնի մի դո-
րամասով և հեծելակների մի փոքրիկ ջոկատով կրակակոխ
հետապնդում էր թշնամուն: Ուղինոյի բանակը վերջնա-
կանապես ջախջախելու համար նա խնդրեց իրեն որա-

մադրել այն զնդերի մի մասը, վորոնք դեռ չեյին յեղել
կռվում:

Կառավարությունը նորից կործանարար անվճռակա-
նություն ցուցաբերեց: Մաձինին յենթադրում էր, վոր
Լուի Բոնապարտի բանակի վոչնչացումը Ֆրանսիայում
առաջ կբերի թշնամական տրամադրություն և նրան կը-
ղարձնի Հռոմի մահացու թշնամին: Գործելով վորպես ո-
պորտունիստ, Մաձինին դեռևս հույս էր դնում, վոր ի-
րեն կհաջողվի համաձայնության գալ Փրանսիական զոր-
քերը հեռացնելու մասին. նա հրաժարվեց ոժանդակ զոր-
քեր տրամադրել Գարիբալդուն: Այդ ժամանակ Գարիբալ-
դին վորոշեց Փրանսիացիների վրա հարձակվել իր հրա-
մանատարության տակ յեղած ուժերով: Մայիսի 1-ին,
մանատարության տակ յեղած ուժերով վեց հարյուրական հոգուց բաղկացած
լեզիոնը բաժանելով վեց հարյուրական հոգուց բաղկացած
յերկու ջոկատի, նա յերկու կողմից մոտեցավ Փրանսիա-
կան ճամբարին: Սպասվում էր հազար յերկու հարյուր
լեզիոնների անհավասար կռիվը յոթը հազար Փրանսիա-
ցիների դեմ: Բայց ճակատամարտ տեղի չունեցավ: Ու-
ղինոն զիջերով փախավ: Գարիբալդիականները արագու-
նակ հակառակորդի հետևից և հասան նրան:
Թյամբ ընկան հակառակորդի հետևից և հասան նրան:
Բարոյալքված Ուղինոն զինադադար խնդրեց և պարլամեն-
տյորներ ուղարկեց: Մաձինին անհապաղ համաձայնեց
զինադադարին և դրանով իսկ ի չիք դարձրեց ճակատա-
մարտի հաղթական արդյունքները: Յեթե կառավարու-
թյունը լսեր Գարիբալդուն և Ուղինոյի ջախջախումը
հասցներ մինչև վերջ, ապա դրանով կկանխվեր Լուի Նա-
պոլեոնի յերկրորդ ինտերվենցիայի վտանգը:

Տոնելով հաղթանակը՝ հռոմայեցիք զարդարեցին
քաղաքը, հրավառություն կազմակերպեցին: Հանրապետա-
կան Հռոմը ցնծության մեջ էր:



Հակահեղափոխության սուրբը նուրից բարձրացալ
հանրապետության վրա :

Մայիսի 4-ի խաղաղ, աստղաշող գիշերը քաղաքի դարբասներից լուռ շարքերով դուրս ելին դալիա ջոկատները։ Սվինները փայլում էին լուսնյակի լույսի տակ։ Գարիբալդին հպարտութամբ նայում էր պանծալի հաղթողներին։ Դեռ յերեկ խաղաղ կյանք վարող յերկու հազար հինգ հարյուր քաղաքացիներ, — ընտանիքների հայրեր, յերիտասարդներ, ծերեր, թողնելով ամենորոյա զբաղմունքները, ընտանեկան ոջախը, անվեհեր կերպով դուրս եկան, վորպեսզի կրծքով փակեն թշնամու ճանապարհը, վորպեսզի՝ պաշտպանեն հեղափոխության նվաճումները։

Փարիբալըին լեզիոնը տանում եր Հռոմի հնադարյան
ճանապարհով, վորպեսզի անցնի թխնամու թիկունքը:
Դադարքի ժամերին վարժական պարապմունքներ եյին
կազմակերպում, վորովհետեւ շատերն անպատրաստ եյին
ռազմական գործում:

Մայիսի 6-ին Պաղեստինայի մոտ տեղի ունեցած ճա-

Լատամարտում զարիբալիւկանները ջարդեցին նեապոլ-
ցիներին վեց հազարանոց ջոկատը և նրանց փախուստի
մատնեցին: Շարունակելով հաջող դործողութիւնները,
Գարիբալդին նեապոլցիներին ստիպեց կռւի բռնվել Վել-
լետրիի մոտ, ուր գտնվում էր հակառակորդի շտաբը և
գլխավոր հրամանատարութիւնը: Այստեղ զարիբալ-
դիականները ջախջախիչ հարված հասցրին թշնամուն
և միայն անասելի ջանքերի գնով էր, վոր Ֆերդինանդին
հաջողվեց իր ձեռքում սրահել քաղաքը: Ելի՛ մի հարված
և հաղթանակը լիակատար կլինէր: Իդո՛ւր էր Գարիբալդին
սլահանջում հանրապետական գլխավոր հրամանատար
Ռոսսելլուց, — վորը յեկեկ էր ռազմաճակատ, — վորպէսզի
բոլոր ուժերով հարձակվեն Վելլետրիի վրա, չըջատեն
նեապոլյան քայքայված բանակը և ստիպեն անձնատուր
լինել, իսկ թագավորին գերի վերցնեն: Վերջնական հաղ-
թանակի այդ միակ ճիշտ ուղին մերժեց ղեներալ Ռոսսել-
լին, վորն անընդունակ էր տիրող դրութիւնն ընմբռնելու:
Խորովելով թշնամու կեղծ դեմոնստրացիաներից՝ նա վըճ-
ռականապէս հրաժարվեց դրոհից: Գիշերը թշնամին ան-
նկատելի կերպով փախավ: Աղմուկ չբարձրացնելու հա-
մար ձիու սմբակներին լաթեր եյին կապել, թնդանոթնե-
րի անիվներին — ծղոտ, իսկ ղինվորները վտարբերիկ եյին
գնում. ճամբարում վառվող խարույկները քողարկում է-
րին նահանջը: Հանրապետականներն առավոտյան մտան
Վելլետրի. թշնամին հեռու յեր, հարմար մոմէնտը ձեռ-
քից բաց էր թողնվել:

Քից բաց եր թողնվել է:
Հանրապետությունը քաղութ էր Մաճինու սխալի պը-
տուղները, Մաճինու, վոր ռազմական գեկավարությունը
վստահել էր անչնորհ գեներալ Ռոսսելլուն, վորին Մաճի-

Մաճինու գլխավորած կառավարության սխալ քաղաքականությունը, հրամանատարության անհորհրդությունը կանխորոշեցին հանրապետության բախտը: Ֆրանսիական զենեքալ Ուդինոն, ստանալով ռոմանով ուժեր և միաժամանակ լուր Նապոլեոնի հրամանը զինադադարը խզելու մասին, հարյուր հազարանոց մի բանակով չրջապատեց Հոմբը և Հոմբեական հանրապետության կառավարության հետ խոսեց լիտի տոնով: Պաշարողական հզոր հրեշտանու թնդանոթները ահարկու յերախներն ուղղվեցին

Յաստամը տիրեց ժողովրդական գործավարին, յերբ նա ժամանեց մայրաքաղաք, — Հռոմը բալորովին չէր նախապատրաստվել պաշտպանության: «Այսրիկդ, յերբ քաղաքի դեմ սպառնալիք ստեղծվեց, մինչև հունիս ամիսը չըմտածեցին պաշտպանության վորեւ միջոցները մասին» — դառնությամբ գրում եր Գարիբալդին: Նա անհանդիստ վիճակում չըջում եր փողոցներում, յեւք փնտռելով ըստեղծված դրությունից: Յերկիրը հասնում եր կործանման: Հանրապետությունը փրկելու վերջին հնարավորություններն եյին՝ մօբիլիզացիայի յենթարկել ժողովրդի բոլոր ուժերը, անխնա պայքար մղել Հռոմի ներսում յեղած պալաճանների և մատնիչների դեմ, առաջին հերթին հողեվորականության դեմ, հաստատել ուժեղ և վըճռական իշխանություն: Կառավարությունը և գեներալ Ռոսսելլին դրան ընդունակ չեյին, և Գարիբալդին վորոշեց հանրապետության համար վտանգավոր այդ ուժերին

իր ձեռքը վերցնել կառավարման դեկը: «Տեսնելով, վոր կործանումն անխուսափելի յե, յես պահանջեցի դիկտատուրա, ճիշտ այնպես, ինչպես կյանքի վորոշ դեպքերում կպահանջվեր այն նավակը վարելու համար, վորին փոթորկահույզ ալիքները չպրտում են ժայռերի վրա»:

Գարիբալդու առաջարկը ծաղր առաջացրեց: Յեւ միայն մի քանի ուրից հետո, յերբ Ուզինոն դրավեց պաշտպանության կարեւորագույն կետերը և դուռնոցն ակներև արար անհուսալի դարձավ, շփոթված կառավարությունը հրաման տվեց Գարիբալդուն գլխավոր հրամանատար նշանակելու մասին: Այս ուշացած ձեռնարկումն արդեն անկարող եր փոխել գործի ընթացքը: Այնուամենայնիվ Գարիբալդին, գիտակցելով ամբողջ պատասխանատվությունը, հնարավոր չհամարեց հրաժարվել նշանակումից և ընդունեց այդ:

Հունիսի 3-ի ուշ գիշերով Փրանսիական մի դումարտակ զաղտագողի մոտեցավ «Չորս հողմերի» դարբասին: «Կեցցե՛ Իտալիան» — գոչեցին Փրանսիացիք և դարբասից ներս նետվեցին: Իտալական հսկիչ զորամասն այդ գոչից խաբված, հանկարծակիի բերվեց, և թշնամիները հեշտությամբ տիրացան հռոմայեցիների պաշտպանական կետին:

Ուխտադանց Ուզինոն ռազմական դործողությունների դիմեց զինադադարը վերջանալուց 24 ժամ առաջ: Սկսեց վորոտալ պաշարողական հրետանին: Ռումբերը ծակում էին տների կտուրներն ու պատերը, սպանում ու խեղում մարդկանց, վորոնք հանգիստ քնել էին: Թնդանութային կրակոցների առաջին իսկ ձայները լսելուն պես

Գարիբալդին ձի նստեց և սլացավ դեպի հիմնական դիրքերը, վորոնցից կախված եր մայրաքաղաքի պաշտպանության հաջողությունը: Անխոն գնեցրաւն ամբողջ արագությամբ սլանում եր փողոցներով, վորոնք լեփ-լեցուն էին անհանգստացած մարդկանցով: Հանկարծ կանգնեցնելով քափ-քրտինք կտրած ձին, նա «Չորս հողմերի կաղինոյի» վրա տեսավ Փրանսիական դրոշակ: Ինչ կերպ ել լինի, վերադարձնե՛լ իշխող դիրքերը: «Չորս հողմերի կաղինոն» և Կորսինի վիլլան վորոշում են Հռոմի բախտը:

Մի քանի րոպեյից հետո լեզիոնը սվինային դրոհի նետվեց: Մարտիկները վողենչված նայում էին «Չորս հողմերի կաղինոյին»: Մարդիկ գնում էին, անտեսելով սպանիչ կրակը, գլուխները հպարտ բարձրացրած, թև-թևի տված, իրար կողքի քայլելով: Այնտեղ, ուր ընկնում եր մեկը, նրա տեղը բռնում եր մյուսը: Շարքերը խտանում էին և լեզիոնը գնում եր ամրաքայլ, ինչպես զորատեսի հրապարակում. բոլորը գիտեցին — Հռոմը կփրկվի, յեթե հաջողվի հետ դրավել այդ դիրքերը, և կընկնի, յեթե թշնամին հաստատվի այդ դիրքերում: Վորոտանման «ուռան» արձագանքվեց Կորսինու այգիներում և բակերում, մի ակնթարթ խլացնելով հրաձգության կատաղի դղրդյունը: Վորպես ուրազան՝ գարիբալդիականները հարձակվեցին ինտերվենտների վրա, անցան արգելքների առաջին շարքը և շեշտակիորեն նետվեցին դեպի մարմարե հոյակապ սանդուխքը: Հակառակորդը, թաղնվելով սյուների, արձանների, ծառերի հսկայական բների հետևում, զնդակների կարկուտ եր թափում: Գնդակները թռչում էին կտուրներից, պատուհաններից, դռներից: Սակայն վոչինչ չեւ կարող կանգնեցնել լեզիոններին:

Նրանք իրենց առաջ տեսնում էին կարմիր աստառով սպիտակ պլաշը, լսում էին միայն հրամանատարի ձայնը և գնում էին այնտեղ, ուր փողփողելով նրանց կանչում էր պլաշը: Մարդիկ, արհամարհելով մահվան յերկյուղը, բարձրանում էին աստիճաններով, թռչում էին ներքև՝ դնդակների պարսով խոցումված: Բայց ահա դարիբալ-դիականներից մեկը սեաթույր նժույդով բարձրացավ սանդուխթի վրա: Խթանված ձին ահագին ցատկումներով բարձրացավ յերկրորդ հարկի սրահը: «Կեցցե՛ հեղափոխությունը», «Կեցցե՛ աղատությունը»: Տասնյակ դնդակներ խոցեցին հերոսի գլուխը, կուրծքը, սիրտը: Հեծելակի հետ միասին ընկնելով, գլուխը խփելով աստիճաններին՝ ձին սպանվածների և վիրավորվածների մարմինների վրայով դեպի ներքև գլորվեց: Լեզիոներները «Կեցցե ազատ Խտալիան» գոչելով, մեկը մյուսից առաջ անցնելով, դրավում էին յերկրորդ հարկը: Առջևում, դնդակներից ծակծկվելով, փողփողում էր սպիտակ-կարմիր պանչոն: «Կարմիր դե՛լ, կարմիր դե՛լ» — սնոտիապաշտական սարսափով լողաղակում էին Փրանսիացիները և փախչում գեներերը թողած:

Ուղինոն նորանոր ջոկատներ էր ուղարկում, վորպեսզի ինչ գնով էլ լինի, իր ձեռքում պահի վիլլան: Այնտեղ, ուր դարիբալդիականները վոջնչացնում էին մի վաշտ, Ուղինոն յերկու նոր վաշտ էր ուղարկում: Լուսաբացից մինչև գիշեր, փոխարինելով միմյանց, դրոհ և յին տալիս կարմիր շապկավորները: Կորսինի վիլլան չորս անգամ Փրանսիացիներից անցնում էր իտալացիներին: Ամենասարսափելի ճակատամարտերից մեկը աեղի անցավ «Նավը» — ճակատի ամենակարևոր մասը գրա-

վելու համար: Կռվով զրազվելով այդ դիրքը, դարիբալ-դիականները մեռնում էին, բայց չէին նահանջում: Շուրջը դիակների լեռներ էին գոյանում: Փրանսիացիք անընդհատ դրոհում էին «Նավը», բայց չէին կարողանում հաղթահարել լեզիոներների տոկունությունը: Բուր լեզիոներները միատեսակ քաջություն մահվան հետ լիքավոր, իմանալով, վոր իրենց անխուսափելի մահ է սպասում, կատարում էին Գարիբալդու հրամանը՝ «Չըխնայելով ձեր կյանքը, մինչև վերջին բոլեն պահեցե՛ք «Նավը», վորովհետև միայն այդ պատերի ներսում հընարվոր է պաշտպանել Հոռմը, ազատել քաղաքացիներին և մեր ղենքի պատիվը»:

Քաջություն և հերոսություն հրաչնքներ էին կատարում իտալական հեղափոխության զինվորները, բայց վոչ խելահեղ համարձակությունը, վոչ անձնուրացություն հերոսությունը չէին կարող հաղթահարել տասնյակ անգամ ավելի ուժեղ հակառակորդին, վորն ամրացել էր իշխող բարձրությունների վրա: Գարիբալդին վերջինը հեռացավ «Չորս հողմերի կաղինոյից»: Այդ ուր քաջերի մահով ընկան նրա զրեթե բոլոր սպաները:

Հուլիսի 3-ի հռչակավոր ճակատամարտը ժողովրդի զործի համար պայքարողի — լեզենդ Գարիբալդու պատմության ամենապանծալի եջերից մեկն է:

Գրավելով քաղաքի վրա իշխող դիրքերը, ինտերվենտները սրատարաստվում էին հաղթականորեն մտնել Հոռմ: Անցավ մեկ-յերկու ուր, — հարյուր հազարանոց բանակը վոչ մի քայլ դեպի առաջ չչարժվեց: Այդ ժամանակ կատաղած Ուղինոն սկսեց քաղաքը պաշարել ռազմական արվեստի բոլոր կանոնների համաձայն: Հոռմը

կտրվեց մնացած ամբողջ աշխարհից : Պատշաճողական
թնդանոթները գիշեր-ցերեկ ուժակոծում էին պարխու-
ները, դրանց մեջ խողովներ բաց անում : Հրետանին
արկեր եր տեղում պաշարվածներն չկրա :

ինչի սուր կարիք եյին զդոմ, բայց բոլորն եւ առաջւա
նման համակված եյին զիմադրելու լճառականութեամբ :

վել: Բաստրոնները, վոր ծակծկվել էյին արկերից, ըս-
տառնում էյին ամեն բոպե փլչել: Կրակի զիծը յեկամ մի
սուրհանդակ. «Գարիբալդին պետք է շտապ գնա Կապիտո-
լիում»: Հերոսը մտավ ժողովի դահլիճը, իր հետ բերե-
լով վառոդի ծխի հոսը, ամբողջովին մրոտված ու
փոշոտված: Գնդակներով ծակծկված և սվիններով սլա-
տառոտված պանջոյի վրա սառել էր արյունը: Ծոված
սուրը դուրս էր ցցվել պատյանից: Պատդամալորները
վոտքի կանգնելով վողջունեցին հանրապետության պաշտ-
պանին: Ուղացիաների վորոտի տակ Գարիբալդին ամբիոն
բարձրացավ: Հիմա, յերբ Հոռմի բախտը վողջված է,
նրա ինչի՞ն են պետք այլ հրճվանքներն ու ուղացիաները:
Յեթե իր ժամանակին նրան լսեյին, չառ բան այլ կերպ
կկատարվեր: Ժողովի այն հարցին, թե կարելի՞ յե
արդյոք դեռ հաջող դիմադրություն ցույց տալ, նա
ռազմիկին հատուկ ուղղամտությամբ և քաջությամբ
պատասխանեց. «Վոչ: Յեթե թույլ տանք, վոր քաղաքի
կեսը վոջնչանա և բոլոր կամուրջները պայթեցվեն, ապա
կարելի յե անկումը հետաձգել մի քանի օր, բայց
վոչ ավելի», — այս խոսքերից հետո Գարիբալդին դուրս
դնաց Կապիտոլիումից, շտապելով վերադառնալ կուլի
դաշտը:

Հուլիսի 2-ին ժողովը հայտարարեց պաշտպանու-
թյունը դադարեցնելու մասին: Անընդհատ թնդանոթա-
ձգությունից և ռազմական տենդային կյանքից հետո ար-
տասովոր հանդարտություն տիրեց: Հուսահատությունը
համակեց Հոռմի բնակիչներին, վորոնց դաժան դատա-
տան էր ստասում: Փողոցներն ամայացան: Տներ, վո-
րոնց պատերը ծակծկված են, լուսամուտները ջարդված,

քարուքանդ ճանապարհներ, ալստեղ և աշնտեղ ջարդված
ծառեր, ավերակների յերկար շարքեր — այս բոլորը ցույց
էր տալիս քաղաքի տխուր վիճակն ու ամայությունը:
Շատ մարդիկ կային միայն Վատիկանի մեծ հրապարա-
կում: Հալարավոր զինված մարդկանց մեջ, ձիու վրա
նստել էր Գարիբալդին: Սիրված հրամանատարը բարձ-
րացրեց ձեռքը, և մարդկային ալեկոծվող ծովը մի ան-
գամից լռեց: Կանգնելով ասպանդակների վրա, Գարի-
բալդին սկսեց խոսել. նա զենքը չի տա թշնամուն, այդ
զենքը դեռ կժառայի ժողովրդին: Նա հեռանում է Հոռ-
մից, վորպեսզի մի անգամ ևս փորձի փոխել հայրենիքի
դրությունը: «Ընկե՛ր զինվորներ, — մի փոքր խալոտ և
հուզված ձայնով ասում էր Գարիբալդին, — ձեզանից
նրանց, ովքեր ուզենան գնալ ինձ հետ, յես առաջարկում
եմ քաղց և ծարավ, ցուրտ և շոգ, մշտական տաքնապ,
վառոդի և այլ պաշարների բացակայություն, բայց սը-
վինային հարձակումներ, ղեղեր-ցերեկ արագ յերթեր,
անքնություն մինչև ուժասպառություն — առանց հան-
դուտի և առանց ոթեանի, մի խոսքով՝ ովքեր սիրում
են Իտալիան, թող դան իմ հետևից»:



Տիրուրենտի ճանապարհով իջնում էյին չորս հազար
մարտիկներ: Հեռեւում մշուշապատվելով չքանում էր
Հոռմը: Լուռ քայլող մարդկանց ապագան նույնպես
պատած էր անհայտության խավարով: Արդեն լուսաբա-
ցի կապտավուն աղջամուղջում նշմարվում էր, վոր դո-
րասյան ամբողջական մթին զանդվածը բաղկացած էր

Ազատութեան անխոնջ մարտիկը՝ դեպի Վենետիկ եր
գնում: Անցնելով ամբողջ կենտրոնական Իտալիան, նա իր
կամաւորներին տանում եր ողնելու Վենետիկի բազմա-
տանջ յեղբայրներին, վորոնք շարունակում էին հերոսա-
բար դիմադրել ավստրիական ոկուպանտներին:

Քսանյոթ որ տեեց յերթը, վոր հերոսական մի
սիրապործութիւն եր հանուն ճնշված հայրենիքի: Չար-
մանալի արշավն ավարտվեց Սան-Մարինո հանրապետու-
թեան սահմանների մոտ: Հուլիսի 31-ին ջոկատը հասավ
մինչև Սան-Մարինո: Հետեից ընդհուպ գնում էին
ավստրիացիների խոշոր ուժերը: Փոքրիկ հանրապետու-
թեան կառավարութիւնը Գարիբալդուն խնդրեց չմտնել
նրա տերիտորիան, վորովհետև ավստրիացիներն ոկուպա-
ցիայի կենթարկելին այդ հանրապետութիւնը: Իսկ
ավստրիացիների հսկայական բանակի հետ կռվի բռնվել
նշանակում եր Փիղիկական վոջնչացման մատնել Իտա-
լիայի անկախութեան համար կռվող բազմաթիւ մարտիկ-
ներին, առանց վորեւե արդշունք ստանալու ազատութեան
դործի համար: Այդ ժամանակ Գարիբալդին իր իրդաւ
ջոկատին դիմեց հրաժեշտի հետեյալ խոսքերով. — «Զին-
վորներ, յետ ձեզ աղատում եմ ինձ հետ ճանապարհը շա-
րունակելու պարտականութիւնից: Վերադարձեք ձեր
հայրենիքը, բայց հիշեցեք, վոր Իտալիան չպիտի լինի
խայտառակ ստրկութեան մեջ և վոր ամէլի լավ ե մեռնել,
քան ոտարեկրացիների սարուկներ լինել»:

Ենդելսը փայլուն դնահատական ե ամէլ Գարիբալդու
այդ յերթին. «... Ավստրիացիք թերադնահատեցին այդ
մարդուն, վորին նրանք անվանում են ավազակների առա-
ման. մինչդեռ, յեթե նրանք նեղութիւն քաշելին ուսում-

նասիրելու Հռոմի պաշարման ե Հռոմից Սան-Մարինո նը-
րա արշավի պատմութիւնը, ապա նրանք Գարիբալդուն
ձհամարեյին արտասովոր ռազմական տաղանդի, ականա-
վոր անվահերութեան տեր մի մարդ...»¹⁾:

Ոգոստոսի 1-ի դիշերը Գարիբալդին, դողով հիվան-
դացած Անիտան, Չիչերուակիոն, Ուզորասին ե յերկու
հարյուր մարտիկներ, վորոնք չէին ուզում բաժանվել ի-
րենց առաջնորդից, ծածուկ հեռացան Սան-Մարինոյից
և արագ յերթով հասան Ադրիատիկ ծովը: Ծովափնյա
մի գլուղում նրանք դտան ձկնորսական 13 բեռնանավ: Գի-
շերը փոթորիկ եր ծովի վրա ե նավակներին չեր հաջող-
վում ծով դուրս գալ: Լուսանում եր. իսկ ձկնորսները
դեռ չէին կարողանում նավակները դուրս բերել նափա-
հանգստից: Վերջապես, Գարիբալդուն իրեն հաջողեց խա-
րիսի ձեւը ե ամրացնել պահանջված տարածութեան վրա:
Մարդիկ տեղ բռնեցին, ե նավակները սկսեցին ընթանալ
դեպի Վենետիկ: Ծովում Անիտան իրեն բոլորովին վատ
զգաց: Մի ամսից հետո նա պետք ե յերեխա ունենար:
Արշավի չտեսնված զրկանքներն ու ծանրութիւնները քայ-
բայել էին նրա ուժերը: Իզուր եր Գարիբալդին խնդրում
վոր նա Սան-Մարինոյից վերադառնա սուն, — Անիտան
հաստատ վորոշել եր ուղեկցել նրան դեպի վենետիկյան
բարեկազմերը: Տանջվելով ցավից ե ծարավից, հերոսու-
հին տոկուն կերպով ե անտրտունջ տանում եր տանջանք-
ները: Գիշերը ծովը բոլորովին հանգարտեց: Պայծառ
լուսինը լուսավորում եր լեւի-լեցուն նավակները, վորոնք
դանդաղ լողում էին Ադրիատիկայի իտալական ամի յեր-

1) К. Марке и Ф. Энгельс, сочинения, т. XI, ч. 2, стр. 183.

կարությամբ: Գարիբալդին աշխատում էր դուրս գալ լուսնի լույսի գոտուց, վերադառնալով ամբողջ ծովի վրա նա- վարկող ավստրիացիք չհայտարերեյին նավակները: Հան- կարձ փայլատակեց հրթիռի կարմիր պոչը և բոլոր կողմե- րից յերկինքը լուսավորվեց հրթիռային լույսերով: Թշնա- մու նավը, վոր հայտարերել էր դարիբալդիականներին, շարունակելով ազդանշանների միջոցով կանչել ավստրիա- կան նավատորմիդը, թնդանոթային կրակ բացեց նավակ- ների վրա: Թշնամու նավատորմիդով շրջապատված նա- վակները դարձան դեպի ափը: Դրանցից միայն չորսին հաջողվեց փախ հասնել, մնացածները մասամբ ջրասույդ արվեցին, մասամբ դերի ընկան: Գարիբալդին մեռնող Անիտային գրկած, թռավ ափը: «Բարեկամներ, — դիմեց նա կենդանի մնացած ընկերներին, — յեթե բոլոր միասին գնանք, անխուսափելիորեն կկործանվենք: Մեկ-մեկ ցր- վենք տարբեր կողմեր և ապաստարան փնտռենք»: Հրա- ժեշտ տալով ամուր գրկվեցին մարտական ընկերները: Շատերի համար այդ վերջին հրաժեշտն էր:

Ավստրիացիք գինյորներով և ժանդարմներով հեղե- դեցին ամբողջ ուսյունը: Ձուկատները խուղարկում էյին տները, պանդոկները, չրջում էյին անտառներում և դաշ- տերում, փնտռելով «կարմիր դեին» և անհայտացած հե- դափոխականներին:

Անտառի յեղրում տեղի ունեցավ արյունոտ մի վող- բերդութուն: Իննը հողի բահերով փոս էյին փորում: Մյուսները հրացանների կաթերով խփելով մոտ էյին բե- րում զժբախտներին: Վերջինների հաղուստը սպառնալու- վել և արյունոտվել էր զազանային ծեծից: Մարմիններից կտորներ էյին կախվել, սարսափելի վերքեր բացվել: Ագ-

նիվ Ձիչերուակկիոյի — Գարիբալդու փառապանձ գի- նակցի արհեստ դուռը ծածկված էր մուգ-կարմրավուն, թաց բծերով: «Ե՛հ, հերիք և ինչքան վոր աշխատեցիք, — ծաղրանքով ասաց ավստրիական կապիտանը, — գրավեյ տեղերը, փմեն մեկն իր փոսի մոտ»: Վոտների վրա հա- գիվ կանգնող մարդիկ, հավաքելով վերջին ուժերը, հա- տատաքյալ մոտեցան սեկն տվող փոսերին: Նրանք հպարտ բարձրացրել էյին իրենց գլուխները և համարձակ նայում էյին մարդասպաններին: Ձիչերուակկիոն աչքը չե- ր հե- ոացնում իր վորդիներից: Յերիտասարդական դեմքերն ա- հեղ հանդստություն էյին պահպանում: Կրտսեր վորդին հեղ հանդստություն էյին պահպանում: Կրտսեր վորդին ընդամենը 13 տարեկան էր: Նրանց հայացքներն իրար հանդիպեցին: Մանկական խոշոր աչքերում յերկյուղ չը- հանդիպեցին: Մանկական խոշոր աչքերում յերկյուղ չը- կար: Վորդին արժանի յեր հորը, և ժողովրդի գործի հա- մար պայքարողի սիրտը վերջին անգամ լցվեց յերջանկու- թյամբ: «Հեղափոխությունը չի մեռնում: Կեցցե ազա- րտալիան...»: Լսվեց համաբարկը...

Նահատակի մահով մեռավ նաև Ուգո Բասսին: Տե- րներն իրենց այդ գոհին չլսված, դաժան չարճարանքե- րի յենթարկեցին: Խոշտանգումները շարունակվեցին ամ- բողջ գիշերը, վորից հետո կիսամեռ մարմինը տարան դնդակահարելու:

Գարիբալդին հնդկացորենի արտերի միջով խնամքով տանում էր իր թանկագին բեռը: Նրա անբաժան ուղեկից լեյտենանտ Լեջիերոն առաջ գնաց՝ վայրը հետախուզելու և ապաստարան գտնելու: Վորոշ ժամանակից հետո Գա- րիբալդին լսեց կամացուկ շննջոց: Լեջիերոն և մի ուրիշ մարդ, ցածր կոացած, դալիս էյին: Լեջիերոն իր հետ բերեց Նինո Բոննետին, Գարիբալդու սպային: Վերջինս

այդ վայրերի բնակիչ է, արդեն մի քանի ամիս բուժվում է իր ծննդավայրում: Այստեղ նա գիտե ամեն մի յեւ ու մուտք: Լավ ծանօթ է տեղական բնակիչներին հետ և կարող է անգնահատելի ծառայութիւններ մատուցել հետապնդվող փախստականներին: Նինո Բոննետը նրանց տարավ մի չքավոր գյուղացու խրճիթ: Վերջապես, խեղճ Անիտան կարող եր հանդստացնել ծարավը: Առանց յեւկար կանգ առնելու շարունակեցին հանապարհը, անցան Կոմաչիո հովտի մի մասը և հասան Մադրիդի քաղաքը: Սայլը, վորի վրա պառկած եր Անիտան, վեր-վեր թռչելով ու զզրգալով մոտեցավ մի փոքրիկ շենքի: Գարիբալդին և նրա բարեկամները, բռնելով ներքնակի անկյուններէրից, զգուշութամբ բարձրացրին Անիտային, տարան տուն և պառկեցրին անկողնում: Անիտայի ձեռքը թուլացած կախ ընկավ: Կնոջ գեղեցիկ դեմքը ծածկվեց մահվան դունատութամբ, բայց շրթունքները դեռ ինչ-վոր շնչում էյին: Գարիբալդին, վատ բան զգալով, ծնկաչոք յեղալ ու կոթնեց իր սիրելի ընկերոջ վրա: «Մենոտաի, յերեխաներս, մնաք բարով, Զուգեպպե, մնաք բարով բոլորը...» — հաղիվ լսելի ասում եր Անիտան: Վշտահար Գարիբալդին կանգնած եր իր լալադույն բարեկամի ու մարտական ընկերոջ մահճի առաջ: Անիտան մեռավ մարտական պոստում, հեղափոխական մարտիկի մահով: Հիմա, յերբ այլևս չկար Անիտան, արժի՞ արդյոք ապրել: Բայց սովեւում սպասվում եր նոր, եւ ալելի դատան պայքար հանուն հայրենիքի, հանուն ազատության, հանուն հեղափոխության սրբազան դործի: Ժողովրդի հանգեպ, հայրենիքի հանգեպ իր պարտքը գիտակցելն ուժ տվեց Գարիբալդուն:

Հետապնդվելով պապական և ավստրիական զինվորների կողմից, Գարիբալդին յերեսուցյոթն ուր դնում եր գետի Պլեմոնտ: Քանի-քանի անգամ նրա կյանքը մազից եր կախված լինում: Ինտերվենտներն ու պապականները վտառք հանեցին ամբողջ յերկիրը, վորպեսզի բռնեն իրենց ալը սարսափելի թշնամուն: «Առանձնապես ջանադիր եյին տերտերները, վորոնք աշխատում էյին ամբիոնից և խոստովանարանում տղետ դյուղացիներին քարոզ տալ աստ-ծու բարձրագույն փառքի մասին», — դարչանքով վերհիշում եր Գարիբալդին: Բայց ժողովրդական մասսաները պահում էյին իրենց ընտրյալին: Ամենադժվար բոլակներին տասնյակ և հարյուրավոր մարդիկ նրան փրկում էյին փորձանքից:

Գարիբալդին հենց վոր վոտ դրեց Պլեմոնտի թաղա-վորության հողը, վորտեղ կարծես թէ նա իրեն պետք է ասպահով զգար, — նրան բանտարկեցին: Մեծ հայրենասե-րի և Իտալիայի միավորման համար մարտնչողի ձեռքակալության լուրը վայրկենապես տարածվեց ամբողջ Պլեմոնտում: Ժողովրդի ցասման ուժն այնքան մեծ եր, վոր կառավարութիւնն ազատեց Գարիբալդուն, բայց առաջարկեց հեռանալ յերկրից: Մի ուր լինելով Նիցցայում, տեսնելով մորն ու յերեխաներին, հերոսը յերկրորդ անգամ աքսոր դնաց:

Իտալական ժողովրդի թշնամիները — միապետները, կալ-վածատերերը, տերտերները, միապետական բուրժուա-յիան ավստրիական ու ֆրանսիական ինտերվենտների սը-վիններով խեղդեցին 1848-1849 թվականների իտալական հեղափոխութունը:

Վորոնք էյին հեղափոխության պարտության պատ-

ճառները: Այն ժամանակ իտալական սըրտլետարիատը դեռ խիստ սակավաթիվ էր: Գյուղացիութունը Մաձինոյ և «Յերիտասարդ Իտալիայի» սխալ քաղաքականության հետևանքով մի կողմ եր կանգնած հեղափոխական շարժումից: Լիրերալ բուրժուազիան, վորը պայքարում էր իտալիան հեղափոխական ճանապարհով համախմբելու դեմ, զավաճանական վարք էր ցուցաբերում և մատնում էր հեղափոխության շահերը:

Նորից անցնելով իշխանության դուռը բնակալիներն իրենց հաղթանակը նշանավորեցին տառնյակ հաղար կախադաններով և մահապատիժներով, ժողովրդի արյան հեղեղներով:

ՆՈՐ ՄԱՐՏԵՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

1849 թվի սեպտեմբերի 16-ին Պյեմոնտի «Տրիպոլի» ռազմանավը, վոր «յերախտագետ» թագավորը «սիրավիր կերպով» տրամադրել էր Գարիբալդուն, բարձրացրեց խորիսները և մեկնեց հյուսիսային Աֆրիկա: Նավը մանրակրկիտ հսկողության տակ տանում էր Հռոմի պաշտպանին, վորն աջսրվել էր հայրենի յերկրից: Գարիբալդին իր համար աջսրավայր ընտրեց Թունիսը: Այնտեղ Իտալիայի մոտիկ յերկրում նա կարող էր հետևել իր հայրենիքի կյանքին, իրազեկ լինել Ապենինյան թերակղզում կատարվող բոլոր իրադարձություններին: Անդրզվիլի հեղափոխականը հաստատապես հավատում էր, վոր հետո չէ հեղափոխական նոր փոթորկի ժամը, յերբ նա կանցնի այն յերկու հարյուր կիլոմետր ծովային ճանա-

պարհը, վորով Թունիսը բաժանված է Սիցիլիայից, և փսկույն կգրավի իր տեղը մարտական սրտում:

«Մոնտեվիդեոյի և Հռոմի հերոսը» (Մարքս) վոչ միայն իտալական միապետների, կալվածատերերի ու հոգևորականների արհավիրքն էր, այլև նրան տուում և նրանից վախենում էին յեվրոպական բոլոր թագավորներն ու քառավարողները: Ֆրանսիայի տիրակալ Լուի Նապոլեոնի սաղաքանքով Թունիսի կառավարությունն արգելեց Գարիբալդու մուտքը Թունիս: Նույն նալն աջսրականին տալով Մադոտալենու կղզին, բայց մի քանի ուրից հետո «կոլոմբո» ռազմանավը ժամանեց այնտեղ և հրաման բերեց այն մասին, վոր Գարիբալդին հեռանա կղզուց ու տեղափոխվի Ջիրբալտար: Ջիրբալտարի անգլիական նահանգապետի խոսքը կարճ յեղավ,— հեռանալ վեց ուրվա ընթացքում: «Յես պետք է մեկնեյի նույնիսկ այն դեպքում, յեթե ստիպված լինեյի ծովը նետվել»,— գրում է Գարիբալդին:

Տանժերում վեց ամիս դտնվելուց հետո Գարիբալդին, վոր այլևս չէր կարող տանել հարկադրական անգործունեյությունը, 1850 թվի հունիսին մեկնեց Ամերիկա: Ճանապարհին վերսկսվեց հին ռեվմատիզմը, և Նյու-Յորքի նավահանգստում նրան «նավից իջեցրին ինչպես բեռան հակ»: Հսկայական, ժխորային ու բազմամարդ Նյու-Յորքում Գարիբալդին սուր կերպով էր ապրում մենակության ղղացումը: Աշխատանք դտնելու համար նա ծեծում էր յործարանների դռները, չլնում էր նավաշինարաններում, հաճախում նավահանգիստ: Մի անգամ ափում նա մոտեցավ բեռնաթափվող նավերին: «Յես զնացի ղրանցից առաջինի վրա,— հիշում է Գարիբալդին,— ու խնդրեցի

Բայց վերոյհետև յերկրում տիրում եր ռեակցիան և բնավ չեն փոխվել իտալական կառավարություններէ թըշնամական վերաբերմունքը դեպի իրեն, ուստի նա իտալիայում մնալ չեր կարող: Գարիբալդին վերոջեց բնակվել Ապենինյան թերակղզուն մոտիկ վորեն վայրում:

Սարդինիայից վոչ հետու, նրա հյուսիս-արևելյան ծայրի մոտ, հենց Միջերկրական ծովի կապուտակ ակիքների վրա բարձրանում են Կապրերա փոքրիկ կղզու վայրի ժայռերը: Մուսլ կղզին հրապուրում եր իր փաթմամ ու բնական գեղեցկութամբ: Գարիբալդին հաճուքով ընտրեց հենց այդ կղզին: Նավարկության տարիներում նա վերոյ խնայողություն եր արել: Այդ փողով նա կառուցեց մի փոքրիկ քարե տնակ, տափարակ կտուրով և աչտարակով: Տան մոտ նա բանջարանոց և այգի դրեց և յեռանդուն փորում եր մարգերը, բանջարեղեն աճեցնում, սլողատու ծառեր մշակում, յերբեմն ել գնում եր ծով, ձուկ վորսալու, կամ վորսորդությամբ եր զբաղվում:

1848-1849 թ. թ. հեղափոխության սրբորությունից հետո հաջորդ տասնամյակում իտալիայում տիրում եր դաժան ռեակցիան և տեռորը:

Սկսվեց դասակարգային ուժերի ավելի խիստ սահմանազատում և կուսակցությունների շերտավորում: Մաճինու հանրապետական կուսակցությունը, վոր բաղկացած եր ամենաբազմազան տարրերից, անխուսափելիորեն հասավ պառակտման (1851 թ.): Մի կողմից այդ կուսակցությունից հեռացան առավելապես հեղափոխականորեն տրամադրված անդամները: Նրանց այլևս չեր բավարարում Մաճինու անորոշ ծրագիրը, ինչպես նաև սխալ քաղաքականությունը գլուղացիության նկատմամբ: Մյուս

կողմից կազմակերպության անդամներէ մի մասը կտրականապես դարձավ դեպի աջ, հրաժարվելով հեղափոխական ճանապարհից և թողնելով կուսակցությունը:

Պյեմոնտի թագավորության կառավարության գլուխ անցավ Կալուրը, միապետական բուրժուազիայի և բուրժուականացած կալվածատերերի առաջնորդը, իտալիան Սալոյան դինատտիայի շուրջը համախմբելու թունդ կողմնակիցը և հեղափոխության թշնամին:

Պյեմոնտ-միլիտար Կալուրն արտաքին քաղաքականութայն մեջ դիվանագիտական բարդ խաղ եր խաղում և յերկրի ներսում շարունակ խորամանկությամբ քաղաքական ինտրիգներ եր լարում: Նա ձգտում եր Պյեմոնտի դահի վրա Կալը-Ալբերտին փոխարինած Վիկտոր Եմմանուել թագավորին ժողովրդի առաջ հանդես բերել իբրև յերկիրը համախմբող, մասնանների մեջ ժողովրդականացնել իտալիան «վերևից», խաղաղ ճանապարհով միավորելու դադափարը:

Պատրաստվելով Ավստրիայի դեմ մղվելիք պատերազմին, վորը խիստ ժողովրդականություն եր վայելում, թագավորն ու Կալուրը յեռանդով վորոնում էյին ռազմական դաշնակիցներ, — նախ՝ վորպեսզի հենվելին ոտաբերկրյա զորքերի վրա, յեթե պատերազմի ժամանակ պայթեր հեղափոխությունը և սպառնալիք առաջանար միապետության դոյության դեմ, յերկրորդ՝ նրանք հույս չէյին գնում սեփական ուժերի վրա՝ ավստրիական հզոր կայսրության դեմ մղվող պայքարում: Այս տեսակետից ամենաարժեքավոր դաշնակից եր հանդիսանում Լուի Նապոլեոնը, վորը հակահեղափոխական հեղաշրջման ճանա-

պարհով դարձել եր Յրանսիայի կայսր, Նապոլեոն Բո-
նապարտ III անունով:

Նպատակ ունենալով յեվրոպական խոչորագույն պե-
տությունների կողմից բարյացակամ տրամադրություն
ստեղծել դեպի Պլեմոնտը և նրանցից աջակցություն ստա-
նալ Ավստրիայի դեմ մղվելիք պատերազմում, Կալուրը
կազմեց տասնհինգ հազար հոգուց բաղկացած մի բանակ,
վորպեսպի այդ բանակը Ղրիմի 1854 թվի պատերազմում
Յրանսիայի և Սնդլիայի կողմից կռվեր Ռուսաստանի դեմ:

Ռուսաստանի դեմ ուղղված պատերազմին մասնակցե-
լը,— Ռուսաստանի, վորի հետ Պլեմոնտը վորեւե բաղխում
կամ հակասություն չուներ,— ծայրահեղ դժգոհություն
առաջացրեց այդ յերկրում: Գաղանային տեռորը «հան-
դըստացրեց» վրդովված մասսաներին:

1857 թվին մի խումբ նախկին մաճինիստներ— Մա-
նինին, Պալլավիչինոն, Լաֆարինան— հիմնեցին «Ազգային
միությունը»: Նոր կազմակերպությունն աշխատում 'եր
«Խաղիւի և Վիկտոր-Եմմանուէլը» նշանաբանով: Նա ա-
ջակցություն եր ստանում Կալուրից, վորն աշխատում եր
«Ազգային միության» միջոցով իտալական դեմոկրատիան
մոտեցնել թագավորական տան հետ:

Ռեակցիայի տարիներն անհետևանք չանցան նաև
Գարիբալդու համար, վոր ապրում եր իր մենավոր կըղ-
ղում: Ընկնելով անցյալ տարիների իր բարեկամ Պալլա-
վիչինոյի յեռանդուն ազդեցության ազդեցության տակ
ու յենթարկվելով ասի տրամադրության, վորն այն ժա-
մանակ բնորոշ եր շատ իտալացիների համար (թե ան-
հրաժեշտ ե Ավստրիայի դեմ պատերազմելու համար ող-
տապործել լավ զինված թագավորական բանակը), Գարի-

բալդին վորոշ տատանումներից հետո խոստացավ աջակցել
Միությանը: Բոլոր իտալական հեղափոխական դեմոկրատ-
ները խիստ անհանգստացան ու տխրեցին Գարիբալդու
քաղաքական լուրջ սխալից, վորը ջուր եր լցնում միապե-
տության ջրագացին:

Սակայն «Ազգային միությանը» չհաջողեց ջարա-
շահել Խաղիւայի ամենաժողովրդական գործիչի անունը,
վորովհետեւ Գարիբալդին անձնապես յերբեք չեր մասնակ-
ցում Միության աշխատանքին, և ըմբռնելով նրա ունե-
ցիոն եյությունը՝ ի լուր ամենքի հայտարարեց, վոր խը-
ղում ե իր կողմ Միության հետ:

Հիսունական թվականների վերջում Յեվրոպայում
նկատելիորեն աշխուժացավ հեղափոխական շարժումը: Դա
միապետական կառավարություններին ստիպեց արագաց-
նել պատերազմը: Պատերազմով առանձնապես շահա-
դրգոված եր Փրանսիական կայսր Նապոլեոն III-ը: Նա
պատերազմը միակ միջոցն եր համարում վերահաս հեղա-
փոխությունը հետաձգելու համար:

1858 թվին տեղի ունեցավ Կալուրի և Նապոլեոն III-ի
հանդիպումը, վորի ժամանակ համաձայնություն կնքվեց
Ավստրիայի դեմ միասին պատերազմելու մասին: Համա-
ձայնության դադունի կետն ասում եր, վոր պատերազմի
բարենպաստ վախճանի դեպքում Վիկտոր-Եմմանուէլն իր
թագավորությանը կմիացնի Լոմբարդիան և Վենետիկը,
իսկ Նապոլեոն III-ը Պլեմոնտին ողնություն ցույց տալու
համար կստանա Սալոյա և Նիցցա իտալական քաղաք-
ները:

Կալուրը սկսեց տենդային կերպով պատերազմի պատ-
շառութիւն: Մարդված քաղաքագետը, հաշվի առնելով Գա-

րիբալդու արտասովոր աղբեցութիւնը ժողովրդական մասսաների վրա, նպատակ դրեց նրան մասնակից դարձնել պատերազմին և հենց դրանով քողարկել պատերազմի իսկական բնույթը, ցույց տալով, վոր դա իբր թե ամբողջ ազգի պայքարն է ոտաբերկրյա բռնակալների դեմ:

1859—1860 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1859 թվականի փետրվարին Կալուրը Գարիբալդուին կանչեց Տուրին: Նրանից թաղցնելով Նապոլեոն III-ի հետ կնքված ռազմական համաձայնութեան իսկական բովանդակութիւնը, Կալուրը նրան առաջարկեց կամավորներէ ցուցակադրութիւն սկսել և կամավորական ջոկատներ կազմակերպել: Գարիբալդին, վոր արդեն այն ժամանակ վոչ մի լավ բան չէր սպասում վոչ թագավորից, վոչ Կալուրից, վոչ ել մանավանդ դաշնակից Նապոլեոն III-ից, վորը զաժանորեն խեղդել էր Հռոմի հանրապետութիւնը, այնուամենայնիվ Կալուրին համաձայնութիւն տվեց: Գարիբալդին գտնում էր, վոր տվյալ ետապում ամենից կարեւորը՝ յերկիրն օկուպանտների անտանելի ճնշումից ազատելն է:

Բավական էր, վոր Գարիբալդին հանդես դար և հայտարարեւ կամավորներ հավաքագրելու մասին, վորպեսզի կամավորների բազմութիւնները չտապելին նրա մոտ: Մարդիկ գալիս էին Իտալիայի բոլոր ծայրերից, վորպեսզի կռիւն ժողովրդական զորավարի դրոշի տակ: Յեւ ահա այստեղ ամբողջովին պարզվեց Կալուրի գաւրջելի նենդութիւնը: Նրա հաշիվների մեջ բնաւ չէր մըտնում հեղափոխական փորձված մարտիկի ղեկավարու-

թյամբ ժողովրդական բռնակ տեղծելը, — վորը կը խախտէր վոչ միայն ավստրիական բռնադատիչներին, այլև միաժամանակ իտալական թագավորներին: Կալուրն անհապաղ միջոցներ ձեռք առաւ:

Գարիբալդուն առաջարկեցին «մնալ հետին պլանում և առիթներ չտալ դիվանալիտական մեղադրանքներէ համար»: Կամավորների կորպուսի կազմակերպումն ու կառավարումը հանձնարարվեց գեներալներից մեկին: Ամենից առողջ և մարտունակ կամավորներին ուղարկեցին կանոնավոր զորամասերը, իսկ Գարիբալդու տրամադրութեան տակ թողին նրանց փոքր մասը, — այնպիսիներին, վորոնք այնքան ել պիտանի չէին զինվորական ծառայութեան համար: Այնուհետև Գարիբալդին հրաշալի կերպով ըմբռնեց այդ ամբողջ խորամանկութիւնը: Նա դրում էր. «Տուրինում կարճ ժամանակ իմ գտնվելուց հետո, ուր ինձ պահում էին իտալական կամավորներ դրավելու համար, լիս շուտով հասկացա, թե ում հետ դործ ունեմ և ինձնից ինչ են ուզում»:

1859 թվի ապրիլի 22-ին Ավստրիան Պյեմոնտի թագավոր Վիկտոր-Եմմանուել II-ին պահանջ ներկայացրեց զինաթափվել յերեք օրում: Այդ պահանջը չկատարելն ակնհայտ էր, բայց ավստրիական կայսր Ֆրանց-Իոսիֆն այլ արեց դիտավորյալ կերպով. դիտենալով, վոր պատերազմն անիտապիելի յէ, նա վորոշեց չձգձգել այն, քանի վոր թշնամու ուժերն որեցոր ամբալնդվում էին:

Ապրիլի 29-ին Ավստրիան պաշտոնապես պատերազմ հայտարարեց և ավստրիական բանակն անցաւ Պյեմոնտի թագավորութեան սահմանը:

Այդ ժամանակ Գարիբալդու հրամանատարութեան տակ
կար ընդամենը մօտ յերեք հազար կամավոր:

Կապուլուն ամեն կերպ խոչընդոտներ եր հարուցում՝ կամապուրների կորստւան ավելացնելու դեմ: Հրամանադրի համաձայն այն բոլոր կամապուրները, վորոնք մնացել էյին հալաքահետերում, պետք է միացվելին Գարիբալդու ջո-կատին, վորը դրեճոմ եր ալտարիացիների դեմ: «Յես դրեցի Կապուլին, վոր ապենինյան այդ հրաձիղներն ու-ղարկվեն ինձ մօտ, բայց չուտով համոզվեցի, վոր նա չի ուղում ավելացնել իմ ղինվորներին թիվը»: Այսպիսով Գա-րիբալդին իր հիշողություններում պատուում է Կապուլը՝ դիմակը:

Ալստրիական զորամասերի հետ մի քանի հաջող ընդհարումներ ունենալուց հետո Գարիկալը թաղավորից հրամանադիր ստացավ անցնել Լադո-Մալիորե լճի ռալյոնը և գործողություններ ծավալել այստրիական բանակի աջ թևի դեմ: Չնայելով, լճի ալյուան հրաձիգների յերեք հազարանոց կորպուսը դժբեր ունենալու սարսափելի թշնամու— դեներալ Ուրբանի քառասուն հազարանոց բանակի հետ, Գարիբալդին շատ դոհ եր. վերջապես, նա ազատվում էր գլխավոր հրամանատարության ծանր խնամակալությունից և կարող եր տեղափոխվել ու գործել բոլորովին անկախ:

1859 թվի մայիսի 17-ին Գարիբալդին անցավ սահմանային Տիչինո դետռ և թշնամուն հետ չղրտելով, մտավ Լոմբարդիա: Գարիբալդիականների յերևալու լուրը հայրենասիրական զգացումները և տրամադրությունների բացառիկ պոթկում առաջացրեց: Վաղեղի քաղաքի բնակիչները զինաթափեցին ավստրիական փոքրիկ կալազորը և

[illegible]

Վարեղեցից Կոմո տանող ճանապարհին Ուրբանը յերկու անգամ կռվի բռնակցի, և յերկու անգամն էլ կատաղի ճակատամարտից հետո ավստրիացիք փախան, խողովելով գետերենքեր և զենքեր: Հարձակումը և Կոմոյի առումն աչինքան առաջ կատարվեցին, վր յերբ դարերալլեականները մտան քաղաք, տեսան տարրերնակ մի պատկեր: Փողոցներում— վոչ մի մարդ, բոլոր պատուհաններն ու դռները պինդ փակված էին, վոչ մի լույս— համատարած խավար: Պարզից, վր Կոմոյի բնակիչները, չսպասելով Գարիբալդու աչքան առաջ դալուն, կարծում էին, թե ավստրիացիք վերադարձել են ու թաղնվել էին տներում: Մի ակնթարթում ամեն ինչ փոխվեց: Փողովուրդը թափախվեց ակնթարթում ամեն ինչ փոխվեց: Փողովուրդը թափվեց փողոցները, շուրջը պայծառ խորույկներ վառվեցին, վեց փողոցները, շուրջը պայծառ խորույկներ վառվեցին, յերթ շուրջը նվաղեց, սկսվեց ընդհանուր ցնծութուն: Ազատարարներին դիմավորելը դարձավ ժողովրդական տոն:

տոն : Կոմոյում զարիբարբեկանները զտան զենքի և պա-
րենի հակաթան պաշար , վոր թողել էյին ավատրիացի-
ները : Այդ խիստ բաւ էր , վորովհետեւ կամավորները ռազ-
մամթերքների ծայրահեղ կարիք էյին զգում : Պյեմոնտ , 117

հրամանատարութիւնն ամենից քիչ հոգում եր ալայան հրաձիգների մատակարարման մասին, «մեծահոգարար» թողնելով, վոր նրանք մատակարարվեն թշնամու հաշվին: Գարիբալդու ժամանելուն պես իմբարդիայի դյուղերում և քաղաքներում ժողովուրդը սկսեց տարերային կերպով դուրս գալ ուղուականների դեմ: «Կոմո լճի մոտ գտնվող բոլոր մարդերն անցնում եյին մեր կողմը, — ասում ե Գարիբալդին: — Սմենուրեք բնակչութիւնը զենք եր պահանջում, վորպեսզի մասնակցի հայրենիքի համար մղվող կռիվներին: Բայց մենք զենքի, մանաւանդ արկերի պահասութիւն ունեյինք, և վոչ միայն հետու եյինք Պյեմոնտից — մեր ռազմական գլխավոր բաղայից, այլև նրա հետ ամեն մի կապ դրեթե բոլորովին խզված եր»:

Կարելի չե չկասկածել, վոր Պյեմոնտի կառավարութիւնը դիտմամբ զենք չեր տալիս Գարիբալդուն, գիտե՞նալով, վոր այդ զենքով պիտի զինվի ժողովուրդը, իսկ դրանից կառավարութիւնն ավելի շատ եր վախենում:

Ձենքի պակասութիւնը խանգարում եր պարտիզանական կովի ծախարման և տեղական բնակիչներից ջոկասներ կազմելուն: Յեւ յերբ ալստրիական զենեքալ Քլեբանը ստիպված յեղավ ընդհանուր հարձակում քկսել, Գարիբալդին իր յերեք հազարանոց ջոկատով չեր կարող գտրել նրա ճանապարհը և շրջապատել ալստրիական բանակը: Հարկավոր յեղավ սահմանափակել միայն թշնամուն հետապնդելով, վոր և կատարվում եր մեծ հաջողությամբ:

Գարիբալդու հաղթական յերթը հնարավոր դարձավ, վորովհետե թե քաղաքի և թե դյուղի բնակչութիւնն ակտիվորեն ոժանդակում եր նրան:



Գարիբալդին կովի դաշտում:

Բնակչութիւնն ամեն ինչով ողնում էր զարիբալիւս-
 փաններին: Գարիբալդին սաայօրներ չունէր: Գլխավոր
 չափն անպատասխան էր թողնում նրա բոլոր դիմումնե-
 րը՝ սաայօրական ջոկատ ուղարկելու մասին: Յեւ յերբ
 հարկավոր էր լինում անցնել գետերը, բոլոր չափահաս
 բնակիչները դուրս ելին դալիս կամուրջներ կառուցելու:
 Գյուղական և քաղաքային բնակչութիւնը միշտ աղբիւրի
 ծառայութիւններ էր մատուցում ալպյան հրաձիգներին:
 Այդ բացատրւում էր ճիշտ մոտեցումով գեպի մասսայա-
 կան-բացատրական աշխատանքը, վոր Գարիբալդին կա-
 տարում էր գյուղացիների մեջ: Գալով այս կամ այն վայ-
 րը, նա մանրամասն պարզում էր գյուղացիութեան դրու-
 թիւնը, բնակչութեանն աղատում էր ծանր հարկերից,
 վերացնում էր ավատրիացիների սահմանած հարկերը և
 այլն, բնակիչներին բացատրելով աղբային-քաղատաղբա-
 կան պատերազմի խնդիրները:

Գարիբալդու ուղմական հաջողութիւնները և դրանց
 առաջացրած ժողովրդական լայն շարժումը մահացու
 սարսափի մատնեցին թաղավորին և նրա մինիստրներին:
 Կովուրի վոհմակը, համաձայնութեան դալով իր դաշնա-
 կից Նապոլեոն III-ի հետ, մշակեց հրեշավոր մի պլան,
 վոր կործանի ժողովրդական հերոսին: Մի գեղեցիկ ուր
 Գարիբալդին, վոր դանդաղ էր գեպի Ռեձատ տանող ճա-
 նապարհին, թաղավորական գլխավոր շտաբից հրաման
 ստացավ գրավել Լոնատո կետը: Այդ դործողութիւնն ա-
 պահովելու համար—հաղորդում էր հրամանը,—ողնութեան
 և ուղարկված հեծելազորի և հրետանու յերկու դունդ:
 Այդ դավաճանական հրամանի նպատակն էր ջախջախել և
 վռնջացնել Գարիբալդուն և նրա կամավորներին: Հրա-

մանի դիմալին իմաստը հետեյալն էր. Գարիբալդին հա-
 րար ութ հարյուր հողուց բաղկացած իր փոքրիկ զորա-
 խմբով կշարժվի դեպի թշնամու յերկու հարյուր հազարա-
 նոց բանակի կենտրոնը: Հուլիսին խոստացված ո-
 ժանդակ ուժերի վրա, նա կծավալի մարտական դործո-
 ղութիւններ և ավատրիացիք անխուսափելիորեն կը-
 ճգմեն նրան: Միայն քաջ զորապետի արտասովոր ըմբռ-
 նողութիւնը, կողմնորոշվելու արագութիւնը և ամեն մի
 դրութիւնից յեւք գտնելու կարողութիւնը վիժեցրին դա-
 վաճանական դիտավորութեան իրականացումը:

Կատարելով շտաբի հրամանը, Գարիբալդին իր զոր-
 քերի մեծ մասը դասավորեց ճանապարհի վրա, հեծելա-
 զորի անխտանողութիւնն ապահովելու համար: Մնացած
 ավելի փոքր մասը, վոր բաղկացած էր յերկու գնդից,
 գեպի առաջ շարժվելով, կովի բռնվեց հակառակորդի գե-
 րազանց ուժերի հետ: Տրեպոնտի մոտ տեղի ունեցած
 դաժան ճակատամարտում յեղերների առաջին դունդը խո-
 չոր կորուստներ ունեցավ: Տեսնելով, վոր հեծյալ դրն-
 դերը չեն դալիս ողնութեան, Գարիբալդին վայրկենապե-
 տ հասկացավ դադարի չարամտութիւնը, վորքան կարող էր
 հավաքեց իր ցրված զորքերը և շտապեց ճակատամարտի
 վայրը: Միայն Գարիբալդու և փոքրաթիւ ռեզերվների իր
 ժամանակին տեղ հասնելն էր, վոր փրկեց դրութիւնը,
 թույլ տվեց կանոնավոր կերպով հետ քաշվել և պահպանել
 կենդանի ուժը:

Հեծելազորն ու հրետանին այնպես էլ չերեացին:
 Պատճառը պարզ էր,— թաղավորը չէր ել մտածում
 դրանք ուղարկել:

Կարլ Մարքսն ուշադիր հետեւում էր խոսքական դեպ-


բերին և իր անսաղաչողից բաց չեր թողնում Գարիբալդուն: Դեռ ալպյան հրաձիղների արշավանքի սկզբում նա հանձարեղ սրատեսուլթյամբ գրում եր Նիդերլանդ. «Խմ կարծիքով Գարիբալդուն դիտմամբ ուղարկում են այնպիսի զորքեր, ուր նա պիտի կործանվի»¹⁾:

Այս խոսքերը փայլուն կերպով հաստատվեցին Լոնստոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

Հասկանալով, թե ինքն ում հետ գործ ունի, Գարիբալդին վորոչեց «հույս դնել իրեն և իր ընկերակիցներին վրա» և վոչ մի դեպքում չենթարկվել չտաքի պրովոկացիոն կարգադրություններին: Տրեպոնտյան ճակատամարտից հետո իրենց կարգի բերելով՝ ալպյան հրաձիղները նորից հարձակման անցան և հունիսի սկզբին ամբողջ Լոմբարդիան մաքրեցին ավստրիացիներից:

Մոտավորապես նույն ժամանակներում իտալո-ֆրանսիական միացյալ բանակը Մաջենտեյի և Սոլֆերինոյի մոտ ջարդեց ավստրիացիներին, նրանց ծանր պարտության մատնեց:

Յեվ հանկարծ յերբ ատելի թշնամին գտնվում եր վերջնական ջախջախման նախորդակին, Նապոլեոն III-ը հունիսի 11-ին Վիլլաֆրանկայում անսպասելի կերպով ավստրիական կայսր Ֆրանց-Իոսիֆի հետ հաշտության համաձայնություն է ստորագրում Իտալիայի համար խայտառակ պայմաններով: Ստորագրելով հաշտության համաձայնությունը, Նապոլեոն III-ը գործում եր վորպես իշխանազոր տեր, ընկնելով բացառապես իր սեփական ուղուսների հետևից և անտեսելով իր դաշնակցի կենսական



1) К. Маркс и Ф. Энгельс сочинения, т. XXII, стр. 415.

շահերը: Վննտիկն առաջիկա պես մնում էր Ալմտրիային: Լոմբարդիան արվում էր Նապոլեոնին, վորն իր կողմից այդ յերկիրը «նվիրում էր» Վիկտոր-Եմմանուել II-ին, վորի համար «յերախտադետ» թագավորից ստանում էր Սալոյան:

Իդուր չեր, վոր Նապոլեոն III-ը չտապում էր դադարեցնել պատերազմը: Միջին Իտալիայում հետզհետե ակներև էր դառնում մասսաների հուզումը. ինչից վերաբերում էր հեղափոխության:

Հայրենասիրական դարթոնքը, վոր ընդգրկել էր ամբողջ յերկիրը, հարց էր դնում Իտալիան հեղափոխական ճանապարհով միավորելու մասին: Պատերազմի շարունակվելը հեղափոխական շարժման աճ էր առաջացնում նաև Ֆրանսիայում: Ֆրանց-Իոսիֆից մի շարք զինվածներ կորզելով, Լուի-Նապոլեոնը հաշտություն կնքելու ջնքհիվ հարված էր հասցնում իտալական ազգային-ազդուսագրական շարժմանը:

Բայց Վիլլաֆրանկայի հաշտությունն այլևս անկարող էր զսպել ժողովրդի աճող ցասումը: Իտալական մի շարք հերցոգություններում—Մոդենայում, Պարմայում, Տոսկանայում և Ռոմանիայում ճնշված մասսաներն ասպստամբեցին բռնակալ կառավարողների դեմ: Գարիբալդին իր կորպուսով շարժվեց դեպի կենտրոնական Իտալիա: Ժողովուրդն անհամբերությամբ սպասում էր Գարիբալդուն և նրա հրաձիգներին:

Բողաքական ինտրիգան և ճարպիկ դործարար Կապուրը կորոզացավ կանխել Գարիբալդուն. ասպստամբած հերցոգությունների կառավարություններում արդեն նրստած էյին Պյեմոնտի թագավորության դործակալները և

բոլոր ուժերով աշխատում էյին «խաղաղացնել» մասսաների հեղափոխական պոթիկումը:

Փլորենցիայի բնակիչները ցնծալին ընդունելութուն ցույց տվին Գարիբալդուն: Յերխասարգութունը խանդավառությամբ շտապում էր մտնել նրա ջոկատները, կամավորների թիվն որեցոր ավելանում էր: Վորտեզ էլ վոր Գարիբալդին յերևար, Փլորենցիայից նրան վողջունում էյին ուրախ բացականչություններով և ամեն կեղպ ցույց էյին տալիս իրենց բարյացակամութունը:

Հերոսի ժամանելուն բոլորովին այլ կեղպ վերաբերվեցին Տոսկանայի կառավարողները: Նրանց համար անտանելի յեր մայրաքաղաքում Գարիբալդու գտնվելը,— վորի միայն ներկայութունը ժողովրդական մասսաներին մղում էր դեպի հեղափոխական դործողություններ: Ժամանակավոր կառավարությունը, վոր յենթարկվում էր Կապուրին, պահանջեց, վոր Գարիբալդին չուտափույթ մեկնի Մոդենա, ուր գտնվում էր զլխավոր շտաբը:

Սակայն Գարիբալդին, դառը փորձից խրատված, հեշտությամբ հասկացավ Կապուրի վախկոտ սպասարկուների դիտավորությունը:

Ժողովուրդն ու դրքը պահանջում էյին, վոր բոլոր յինված ուժերի հրամանատարությունը հանձնվի Գարիբալդուն: Բայց կառավարությունը կաշուց դուրս էր դալիս, վոր այդ թույլ չտա, և զլխավոր հրամանատար նըշանակեց դեներալ Ֆանտին: Գարիբալդու շուրջը վրիտում էյին լրտեսները, վորոնք լուր էյին տալիս Ֆրայուրաքանչյուր քայլի և դործողության մասին: Սահմանվել էր հատուկ շիֆը, վորով բաղմաթիվ դործակալներն այդ ազնվագույն մարդու թիկունքում ծածուկ դրադրու-

Թյուն եյին վարում: Գարիբալդու ստորադրյալները դադար-
նի հրամաններ եյին ստանում՝ չենթարկվել իրենց հրա-
մանատարին: Այս բոլորը ծայրահեղ չափով վերգովեցրեց
Գարիբալդուն: Չնայելով թշնամական շրջապատին, նա
դեռ պատրաստվում եր ներխուժել սլավական մարզը,
վորպեսզի այնտեղ ապստամբություն բարձրացնի:

Տուրինում տեղի ունեցած տեսակցության ժամանակ
Թադավորը Գարիբալդուն հասկացնել տվեց, վոր համա-
ձայն չե դեպի սլավական մարզն արշավելուն: «Սովորա-
կան զսպվածություն հեղափոխականի նկատմամբ, վոր
միանգամայն հասկանալի յս թադավորի դիրքի տեսակե-
տից» — հեղնաբար ասում ե Գարիբալդին:

Նապոլեոնը և Կափուրի չայկան, վորոնց լուրջ առ-
հանգստություն եյին պատճառում Գարիբալդու հեղա-
փոխական պլանները, աշխատում եյին նրան վտարել
յերկրի քաղաքական կյանքին վորեւե մասնակցություն ու-
նենալուց: Գարիբալդուն յերկրորդ անգամ կանչեցին Թա-
դավորի մոտ և այս անգամ վիկտոր-Եմմանուել Ա-ը ուղ-
ղակի սլահանջեց, վոր նա «վորոչ ժամանակ մի կողմ
քաշվի»: Անընդհատ դավերը, ինտրիգներն ու աղվեսային
խորամանկությունները լցրին համբերության բաժակը և
Գարիբալդին հրաժարվելով Պյեմոնտի դեներալի պաշտո-
նից՝ հեռացավ Տուրինից:

Կափուրը Նապոլեոն III-ից համաձայնություն ստացավ
Միջին Իտալիան Պյեմոնտին միացնելու մասին: Դրա փո-
խարեն Սափոյան և Նիցցան հանձնվեցին Փրանսիական
կայսեր իշխանության:

Հերթական այդ դավաճանության լուրը կարծես դա-
նակի հարված լինեի Գարիբալդու համար: Ինչպե՞ս Թե,

Նիցցան, իր հայրենի քաղաքը տրված ե Նապոլեոնի՞ն:
Հարենիքի հանդեպ այդպիսի զղվելի հանցադրածութուն
նա չեր ուղատում նույնիսկ Կափուրից: Հասնելով բարկու-
թյան գաղաթխակետին, նա իր կրակոտ ու խաբաղանող
ճառով պառլամենտից սլահանջեց անհատալ դատի տալ
դավաճան Կափուրին և տապալել կառավարութունը, վոր
այդպես ստորաբար դավաճանել եր Իտալիայի շահերին:
Բայց պառլամենտն արժանի յեր իր պրեմյեր-մինիստրին,
Գարիբալդու առաջարկը մերժվեց և Կափուրին վստահու-
թյուն հայտնվեց:

Գարիբալդին իր համար խայտառակություն համարեց
նման պառլամենտի անդամ մնալը և ի լուր ամենքի հայ-
տարարեց, վոր հրաժարվում ե դեպուտատի կոչումից:

ԼԵԳԵՆԴԱՅԻՆ «ՀԱԶԱՐՅԱԿ» ԱՐՇԱՎԱՆՔԸ

Աղյուսե մռայլ շենքի յերկայնքով, — վորի փողբիկ
պատուհանները յերկաթացանցով եյին պատած, — համա-
չափ հետ ու առաջ եյին քայլում Թադավորական սլահա-
ները: Արդեն մի քանի որ ե, վոր Միլանի զինադահեստը
պահպանվում ե ուժեղացրած սլահակամբով:

Հեռվում յերևացին մի քանի հողի և քայլեցին ուղիղ
դեպի շենքը, վոր սլահպանվում եր զինվորներով: «Կա՛նդ
առ: Հե՛տ դառնալ»:

Յեկվորները, վոր այդպիսի ընդունելություն չեյին
սպասում, դարձացած կանդ առան: Ձինապահեստի դռնից
դուրս թռավ մի սպա. — «ու՛քե՛ր եք»: — «Միլիոն հրացան»
«կոմիտեյից» — «Ձեզ զենք տալն արգելված ե», — ասաց
սպան: Մարդիկ կարծես քարացան իրենց տեղում: «Ինչ-
պե՞ս թե արգելված ե: Ձի՛ կարող պատահել: Ո՞վ ե ար-

«Ելեկէլ» :— «Պրեմյեր մինիստր Կալուշի Զրամանն է դա» . . .

Գաբրիելը անհամբերությամբ հարցրեց իր
մարդկանց, վորոնք ուղարկվել էին Միլան, զենք բերե-
լու։ Սիցիլիա մեկնելու համար ամեն ինչ պատրաստ էր։
Հազար քաջեր— արվյան հրաձիգներ նրա առաջին կոչով
հավաքվեցին ազատության հին մարտիկի դրոշի տակ,
վորպեսզի ոգնեյին Սիցիլիայի ապստամբած յեղադայրնե-
րին։ Հարկավոր էր շտապել։ Ֆրանցիսկ II-ը, ռումբ-թա-
գավորի հաջորդը, վոր զրավել էր նեապոլյան դահլ,
հսկայական զորքով հարձակվեց ապստամբական ջոկատ-
ների վրա, և ապստամբությունը կարող էր մնչվել մինչև
գաբրիելիականները։

Յեզ Կաթողիկոսը — Նապոլեոն III-ի խղճուկ աղա-
սարկուն նորից խոչընդոտ ե հարգւցում Գարիբալդու դեմ :
Այն հազար հինգ հարյուր հրացանները, վոր զնվել էյին
«Միլիոն հրացան» կոմիտեյի միջոցներով և պատկանում
էյին Գարիբալդուն ու նրա ընկերներին, Կաթողիկոսի կողմից
դավաճանաբար պահվել էյին Միլանի զինապահեստում :
Գարիբալդին դեռ յերեք այլ չափի բարկացած չեղել է
Կաթողիկոսը խորամանկութամբ ինտրիգներ եր լարում : Գա-
րիբալդուն զենք տալու արգելքը պետք է Նապոլեոնին ցույց
տալ, վոր նա, Կաթողիկոսը, դեմ է Գարիբալդու ամեն մի հե-
ղափոխական գործողութեան և ամեն կերպ խանգարում է
նրա գործերը : Միաժամանակ վախենալով Ժողովրդի սի-
րելիի և ընտրյալի բարկութունից և ծածուկ փոյթայնելով
այն միտքը, վոր յեթե Գարիբալդու ձեռնարկումը հաջո-
ղութեամբ ավարտվի, նա, Կաթողիկոսը, կյուրացնի Գարի-
բալդու աշխատանքները, Կաթողիկոսը դարբալդիականներին
ծածուկ բաց թողեց հազար հին հրացան : «Բարձրաստի-

Ճան աղվեսները Ժլատ առատաձեռնություն», — արհամարհանքով ասում է Գարիբալդին: — Ճակատամարտերում ինձ հետ յեղած իմ ընկերները կալատմեն, թե իրենք ինչպիսի խղճով զենքերով պետք է կռվեյին թշնամիները — բուրբոնների դեմ, վորոնք զինված էյին հիանալի կարաբիններով...

1860 Թվականի մայիսի 5-ի գլխերն են: «Պլեմոնտ»
և «Լոմբարդո» նավերը մոտեցան արևելյան Լիգուրիայի
ափին և կանգ առան իսպրիսականոսմ, Կվարտոյի մոտ:
Հազար յոթանասուն հայրենասերներ աղաղությամբ ան-
ցան շողենավերի վրա:


Կարմիր չապկավորները զարթոթայտան «Հաղարյակի»
փառապանծ արշավանքը, վոր փոխեց Խաղիայի բախտը և
անթառամ փառքի արժանապրեց իտալական ժողովրդի
հերոսին, — արդեն սկսվել էր :

Հերոսին, — արդեն սկզբով մը
Ճանապարհին նաւերը մտան Տոսկանայի մի փոքրիկ
նաւակայան: Այնտեղ հաջողվեց դտնել չորս թաւանութ,
հազար յերկու հարյուր արկ և վամփուշտներ: Այդ մեծ
հաջողություն եր մի բուռն խիզախների համար, վրոնք
հաջողություն եր մի բուռն խիզախների համար, վրոնք
դուրս եյին յեկել նեապոլյան թաղավորի հարյուր հազա-
րանոց բանակի դեմ: Սանտո-Ստեֆանոյում վաթսու
դինված մարդիկ աի դուրս յեկան: Գարիբալդին «Պյե-
մոնտից» նրանց շողջանում եր իր լայն վերնազգեստը թա-
փահարելով: Փոքրիկ ջոկատը դնում եր պատասխանատու և
վտանգավոր առաջադրանքով: Նա պետք և մտներ Պապա-
կան մարզը, ապստամբություն բարձրացներ, հենց դրա-

նով թշնամուն մոլորության մեջ դցեր արչավանքի իսկական նպատակի նկատմամբ և նրա ուժերը քաշեր դեպի պետութեան հյուսիսային սահմանը: Մուսափելով թշնամու ռազմանավերից, չոգենավերը մայիսի 11-ին մոտենում ե-
յին Սիցիլիայի ափին: Կեսոթրին նրանք, հետապնդվելով
յերկու նավերի կողմից, մտան Մարսալայի խարսխակա-
յանը: Մարգրիկ դեռ չեյին ափ դուրս յեկել, յերբ վրա հա-
սած մարտանավերը կրակ բացին նրանց վրա: Կարմիր
չապկավորները հրետանային կրակի տակ թողին չոգենա-
վերը և զբաղեցին Մարսալան:

Թե բնակչութունն ինչպես վերաբերվեց «հաղաշյա-
կի» ժամանելուն, այդ մասին Գարիբալդին սլաոմում ե.—
«Ժողովուրդը ցնծության մեջ եր, հարուստները մի կողմ
եյին քաշվել: Յես այդ բոլորը միանգամայն բնական հա-
մարեցի. ով սովորել ե ամեն ինչ հաշվել տոկոսներով, ի-
հարկե այնքան ել չի հրճվում, տեսնելով խիզախողներին,
վորոնք ուզում են վոջնչացնել փչացած հասարակության
անհավասարության և կեղծիքների ախտը... Ընդհակա-
ռակը, աղքատ ժողովուրդը մեղ ընդունեց ցնծությամբ և
ակնհայտ համակրանքով»:

Արչավանքի դուրս դալուց առաջ Գարիբալդին Ժողո-
վրդին դիմեց հետևյալ կոչով.— «Սիցիլիացիներ, յես
ձեզ մոտ եմ բերել մի բուռն քաջերի, վորոնք կենդանի
յեն մնացել լոմբարդական ճակատամարտերում: Մենք
լսեցինք սիցիլիացիների հերոսական կանչը և ահա մենք ձե-
մեջ ենք: Մենք ունենք միայն մի ցանկություն— աղա-
տաղրել հայրենիքը: Լինենք միահամուռ, և դործը դըժ-
վար չի լինի: Դեպի դե՛նք: Ով դենք չվերցնի, նա կամ
վախկոտ ե, կամ դավաճան: Զենքի պակասությունը թող



«Հաղափրակ» Մարսալայում թշնամ և նավերից:

վոչ վոքի համար արդարացում չլինի: Քաջերի ձեռքում ամեն մի ղենք լավ է: Քաղաքային խորհուրդները կհողան կանանց, յերեսանների և ծերերի դուրսյան մասին: Ուրեմն դեպի ղենք: Թող Սիցիլիան նորից ցույց տա աշխարհին, թե ինչպես քաջարի ժողովուրդն ազատվում է իր բռնակալներից»:

Վորքան «հաղարյակը» դեպի առաջ եր շարժվում, այնքան մեծանում եր, ինչպես սարից դուրս ձնադուռը: Առաջինը սկսեցին դալ պարտիզանական ջոկատները, վորոնք թաղնվել էյին Սիցիլիայի լեռներում: Գյուղացիները, վորոնք զինված էյին նիզակներով, սրերով, վորսորդական հրացաններով, ջոկատներ էյին կազմում և շտապում Գարիբալդու մոտ, վորը նրանց ազատություն եր բերում բուրբոնների դինաստիայի տնտեսական և քաղաքական անտանելի ճնշումից: Կղզու զանազան վայրերում ապստամբություններ բռնկվեցին: Կամավորներին ջախջախելու համար նեապոլյան թագավոր Ֆրանցիսկ II-ը կազմեց ուժեղ մի զորասյուն, հրետանիով և հեծելազորով, իր լավագույն զենքերալ Լանդու ղեկավարությամբ:

Հակառակորդները հանդիպեցին Կալաուաֆիմու մոտ, վոր ամրացված մի վայր եր դեպի կղզու մայրաքաղաքը— Պալերմո տանող ճանապարհին:— դեպի ուր ձգտում եր Գարիբալդին: Նեապոլցիները տեղավորվեցին ամենաուժեղ դիրքերում, «Հռոմայեցիների բողոք» լեռան լանջերում, — վորը սեպածն իջնում եր այն բուրնների կողմը, ուր գտնվում էյին Գարիբալդիականները: Թշնամուն իր «սարսափեցնող դիրքերից» քչեյն անհնարին եր թվում: Բայց Գարիբալդու ղեկիչն եր՝ «Յերբ կռվում ես, պետք է հաղթես», և նա վորոշեց ճակատամարտի բռնվել: «Հռոմայե-

ցիների բողոք» բարձրության և Գարիբալդիականների դուրաված բուրնների միջև ընկած եր մի ընդարձակ, ավիքաձև հարթութուն:

Լեռնադաշտներից յերևացին արշալույսի 'առաջին' ծիրանեղուն ճառագայթները: Լեռներում դղրդալից արձաղանքվելով՝ ճայթեց առաջին կրակոցը: Ողում յերևացին ծխի սպիտակավուն ամպիկներ, յերկիրը դողում եր թնդանոթային համազարկերից: Բուրբոնյան հետևազորը հրետանային կրակի պաշտպանության տակ դրոհի նետվեց: Առջևի շղթաները հասան հարթավայրը և դրեթե մոտեցան բուրններին, չհանդիպելով վոչ մի գեմադրության: Թշնամին սիրտ առավ: Մարտկոցները թողին ամրացված վայրերը և շարժվեցին դրոհողների հետևից: Զինվորները նետվեցին ուղիղ դեպի բուրնները: Այդ ժամանակ հնչեց չեփորը: «Կարմիր չապկավորները» կարծես դուրս յեկան գետնի տակից և դրոհ տվին: Սվինային կարճատև հարվածը հետ չարտեց թշնամուն: Հետապնդվելով Գարիբալդիականների կողմից, նա գլխավոր ուժերի և հրետանու պաշտպանության տակ փախավ մինչև լեռան ստորոտը: Գարիբալդին հրամայեց անցնել ընդհանուր հարձակման: «Հաղարյակի» ամբողջ կորպուսը «հանուն ազատ Իտալիայի» գոչելով, հետևելով իր ավանգարդին, դրոհի նետվեց դեպի սարը: Յուրաքանչյուր դարատափ, — դրանց թիվը յոթն եր, — դրավվում եր արտասովոր ջանքերի գնով: Թշնամին, հիանալի ոգտագործելով իր քերազանց դիրքերը, զնդակներից ու արկերից անանցանելի կրակային ծածկույթ եր սարքել: Բայց կարմիր չապկավորները գետնին միայն մի

ճանապարհ— դեպի առաջ: Նրանք տերրաւ տերրաւ հե-
տեւից վեր եյին բարձրանում: Գարիբալդու վորդի Մե-
նոտտին, վոր առաջին անգամ եր մասնակցում կովին,
ընկնող դրոշակակիրից վերցրեց մարտական դրոշակը:
Գնդակները սլաքսի նման թռչում եյին քաջի շուրջը. վի-
րավորվելով մի ձեռքից, նա դրոշակն առավ մյուս ձեռքը
և շարունակեց մաղցել սարն ի վեր: Հոգնածությունից
հազիվ շունչ առնելով, դարիբալդիականները հասան վեր-
ջին տերրասին: Մարդիկ ուժասուղառ եյին լինում: Յեկավ
վճռական մոմենտը,— կամ սարը կդրավվի, կամ արյու-
նահեղ կովի հաջողությունները կկորչեն: Գարիբալդին
հրացանը ձեռքին բարձրացավ գաղաթը, իր հետեւից տա-
նելով մարտիկներին: Թշնամին չգիմացավ ջախջախիչ դը-
րահին: Բուրբոնյանները խուճապային սարսափով թողին
սարը և առանց հետ նայելու փախան մինչև Կալատաֆիմի,
վոր մի քանի մղոնով հեռու յեր «Հոռոմայեցիների բողո-
քից»:

Մայիսի 15-ի որը «հաղարյակին» բերեց առաջին և
վճռական հաղթանակը: «Իր թողած տպավորության ի-
մաստով Կալատաֆիմու մոտ տարված հաղթանակն ան-
սահման կարեւորություն ուներ: Այն վողեւորեց բնակչու-
թյանը և բարոյալքեց թշնամու շարքերը: Առաջին կարե-
վոր հետեւանքն եր բնակչության ասպտամբությունը նա-
հանջող թշնամու դեմ: Ամենուրեք կաղմվում եյին զինված
ջոկատներ, վորոնք միանում եյին մեղ հետ... Քայքայ-
ված թշնամին կանգ առավ միայն Պայերմոյում... Կալա-
տաֆիմու մոտ տարված հաղթությունն անշուշտ վճռական
եր 1860 թվի արշավանքում»: Գարիբալդու այս խոսքերը
սլարդ ցույց են տալիս, վոր նա իր հաջողությունները չեք

պատկերացնում առանց ժողովրդական հեղափոխության
ոգնության, առանց սպառազեն ժողովրդի մասնակցու-
թյանը՝ ազատագրական սլաքարին:

Կորցնելով Կալատաֆիմու ամրությունները, վորոնք
անմատչելի եյին համարվում, դեներալ Լանդին մնացած
դորքով հասավ մինչև Պալերմո—Սիցիլիայի մայրաքա-
ղաքը, ուր միացավ քան հաղարանոց կայազորին և ոսպ-
մական ուժեղ նավատորմիդին: Ամենուրեք, վորտեղից
անցնում եր նահանջող զորասյունը, չլաված դադանու-
թյան հետքեր եյին մնում: Անհաջողությունից կատաղած
դեներալն իր բարկությունը թափում եր բոլորովին անմեղ
բնակչության վրա: Քաղաքներում և դյուղերում հրեշա-
վոր կոտորած եր սարքվում: Զինվորները սպաների առաջ-
վոր կոտորած եր սարքվում: Զինվորները սպաների առաջ-
նորդությամբ ներխուժում եյին տները, թալանում եյին
ու սպանում, չինայելով անդամ յերեխաներին և ծերերին:

Անսահման եր սիցիլիացիների ատելությունը դեպի
ճնշողները: Քաղաքացիները և դյուղացիները զինվում ե-
յին դաշույններով, դանակներով, յերկաթե ձողիկներով
և խումբ-խումբ մտնում եյին Գարիբալդու ջոկատները:
Ամբողջ ժողովուրդը վոտքի յելավ սլաքարելու բռնակալու-
թյան դեմ: Պալերմոյի մերձակայքում Գարիբալդու
«հաղարյակում» կար ութը հազար հոգի: Ճիշտ ե, նրանց
մեծ մասը զինված չեր, բայց բոլորը պատրաստ եյին սխրա-
գործության և ինքնազոհության, մասնակցելով վերջին և
վճռական կռիվներին, վոր մղվում եյին բուրբոնյան բըռ-
նակալի դեմ:

Գարիբալդին, ցնծազին ընդունելություն գտնելով

քննակշիռական կողմից, արագ շարժվում եր դեպի Սիցիլիայի մայրաքաղաքը: Տասնյակ և հարյուրավոր մարդիկ, խաղաղ բնակիչներ, կամավոր կերպով հետախույզներին դեր եյին կատարում և իրենց կյանքը վտանգի յենթարկելով, Գարիբալդուն ճիշտ տեղեկություններ եյին հասցնում թշնամու բանակի մասին:

Մայիսի 24-ին նեապոլցիների խոշոր ուժերը Պալերմոյից դուրս յեկան «կարմիր շապկավորների» դեմ: Գարիբալդու համար թե վտանգավոր և թե անհաջակտ եր հիանալի զինված հակառակորդի հետ բաց կռիւ բռնվելը: Յեթե նա նույնիսկ ջարդեր նեապոլցիներին, կմնար ամբողջված քաղաքի առաջ, վորն ուներ դրեղ հրետանի, նավատորմիղ և բազմահազար կայազոր: Հարկավոր եր ուրիշ յեղ դտնել, Գարիբալդին շտաբի խորհրդակցութիւն հրավերից: Գարիբալդու մարտական զինակիցները բազմաթիւ, սրամիտ ու համարձակ առաջարկներ եյին մտցնում, բայց այդ բոլոր առաջարկները թե ժամանակ և թե խոշոր ուժեր եյին պահանջում: Լսելով բոլորին, տաղանդավոր զորավարն առաջարկեց իր պլանը: Ունենալով զարմանալի պարզութիւն, այդ պլանը հանձարեղ կերպով լուծում եր խնդիրը. վորքան կարելի յե, թշնամու շատ զորք դուրս քաշել քաղաքից. կեղծ դեմոնստրացիաների միջոցով հավատացնել թշնամու հրամանատարութիւնը, վոր նրա դեմ ե ամբողջ կորսուած, և նահանջելով, հակառակորդի բանակը քաշել յերկրի խորքը մինչդեռ թշնամին կհետապնդի փոքրիկ ջոկատին, «հաղարյակի» գլխավոր ուժերը գիշերով կմոտենան Պալերմոյին, հանկարծակի հարվածով կջախջախեն թուլացած կայազորի դիմադրութիւնը և կգրավեն քաղաքը:

Շտաբը միահամուռ կերպով հավանութիւն ամեց այդ պլանին:

Զորքերն իրար հանդիպեցին Պարկոյի մոտ: Սկսվեց մի դաժան ճակատամարտ, վորը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Կատարելով իր պլանը, Գարիբալդին թույլ տվեց նեղել իրեն: Գեներալ Բոսկոն, նեապոլցիների հրամանատարը, չեր կասկածում հաղթանակի նկատմամբ: Հենց վոր լուսանա, նա դաս կտա այդ անպարտելի Գարիբալդուն:

Գիշերային իսկարում «հաղարյակը» բոլորովին անադմուկ թողեց դիրքերը և արագ հեռացավ Կաուլիոնեյի կողմը: Մի կողմ թողնելով Պիանեն, զորասլունը բաժանվեց: Մի փոքրիկ ջոկատ դումակով և մի քանի թընդանոթներով շարունակեց նահանջել դեպի Կաուլիոնե: Որսինու հրամանատարութիւն տակ գտնվող այդ ջոկատի առաջ Գարիբալդին խնդիր դրեց Բոսկոյին և բուրբոնյան զինվորներին վորքան կարելի յե շատ հեռացնել Պալերմոյից: Ինքը, Գարիբալդին, զորքերի ամբողջ մասսայի հետ Կաուլիոնեյի ճանապարհից դարձավ դեպի ձախ և անտառների միջով շարժվեց դեպի Սիցիլիայի մայրաքաղաքը:

Այն ժամանակ, յերբ գեներալ Բոսկոն ընկել եր Որսինու ջոկատի և դումակի հետեից, վորոնց կարմիր շապկավորների գլխավոր ուժերի տեղ եր ընդունում, և ամենուրեք աղմուկ եր բարձրացնում, վոր իբր թե հաղթում ե «ավազակներին»,— Գարիբալդին մոտենում եր Պալերմոյին: Քաղաքի պարիսպների մոտ գարիբալդիականների յերևալը շմեցրեց թշնամուն: Թույլ չտալով, վոր նա ուշքի դա, Գարիբալդին կարմիր շապկավորներին արաւ կամուրջը գրավելու: Ընտիր մարտիկների մի ջո-

կատ մերթիկի նման հարձակվեց կամուրջի վրա, քչեց հըռ-
կիչ պահակամբերը և հաղթահարելով բարիկադները,
ներխուժեց Տերմինի նալակայանը: Նրա հետևից սլացավ
ամբողջ զորասյունը: Մի քանի ժամվա արյունահեղ դուռե-
մարտից հետո «հաղարյակը» մտավ քաղաք: Պալերմոյի
բնակչությունը, վոր սրտանց սպասում էր Գարիբալդու
հալուն, այնուամենայնիվ սկզբում վախենում էր ցուցա-
բերել իր իսկական զգացմունքները: Այդ ուներ իր հիմ-
նական պատճառները: Ծովային հզոր հրետանու յերակա-
ներն ուղղված էին քաղաքի գլխավոր կետերին և պատ-
րաստ էին ամեն բույե արկերի կարկուտ թափել բնակիչ-
ների վրա: Քաղաքում ամբուլթյունները, զինապահաստնե-
րն ու զորանոցները դռնվում էին բուրբոնյան զորքերի
ձեռքում: Գեներալ Լանցան, վոր դարանակալել էր թաղա-
վորի պալատում, իր տրամադրություն տակ ուներ տասը
հազարանոց մի բանակ: Գեներալ Բոսկոն ժամ առ ժամ
կարող էր յերեալ և ցամաքից դրոհ տալ քաղաքի վրա:

Այնուամենայնիվ հայրենասիրությունը զգացումը հաղ-
թեց, և քաղաքացիները, վորոնք համակված էին աղա-
տադրական պատերազմի խանդավառությունը, հակայական
վոգեվորությունամբ ձեռնամուխ յեղան բարիկադների և ամ-
բուլթյունների կառուցման և ռազմամթերքներ պատրաս-
տելուն, վորոնք չափազանց անհրաժեշտ էին:

Մայիսի 27-ին նեապոլցիները քաղաքի վրա բաց թո-
ղին յերկու հազար արկ, յերեք հազար թնդանոթի ումբ
և հրդեհիչ հրթիռներ: Հինդ հարյուր հիսուն դոհ— ահա
ոմբակոծության հետևանքները: Գեներալ Լանցան սխալ-
վեց իր հաշիվների մեջ. խաղաղ բնակիչների դաժան կո-
տորածը վոչ միայն չստեղծեց պալերմոյիների խանդա-

վառությունը, այլև հրահրեց ամբողջ բնակչույթյան առե-
լությունը դեպի բուրբոնյան զորքերը և թշնամուն վա-
շնչացնելու բացառիկ կամք առաջացրեց: «Շատերը միա-
ցան մեզ, և հրացանների պակասությունը զին-
ված էին դաշույններով, դանակներով, նիզակներով և
ամեն տեսակ յերկաթե գործիքներով: Նույնիսկ կանայք
հուղիչ տպավորություն էին թողնում իրենց հայրենասի-
րական վոգեւորությամբ: Բարիկադներ կառուցելու համար
ներանք պատահաններից զցում էին աթոռներ, ներքնակ-
ներ, ամեն տեսակ կահույք և շատերն իրենք դուրս էլին
գալիս փողոց, վորպեսզի մասնակցեյին աշխատանքնե-
րին», — այսպես է նկարագրում Գարիբալդին պալերմոյի-
ների տրամադրությունը, վոր դոյություն ուներ Նեապո-
լի բռնակալ Ֆրանցիսկ II-ից քաղաքն ազատելու որերին:

Յերկու որ կելվը չէր դադարում և հետևանքն այն
յեղավ, վոր դարիբալդիականներին հաջողվեց ցամաքային
զորքերը և գլխավոր հրամանատար Լոնցային կտրել եռ-
կադրայից և նրանց զրկել արտասքին աշխարհի հետ վորեւ
սունչություն ունենալու հնարավորությունից: Փակված
լինելով թաղավորի պալատում և բերդերում, հակառա-
կորդը սկսեց պարենի պակասությունը դալ: Բացի դրա-
նից, վիրավւրների հետզհետե աճող թիվը, — վորոնք մը-
նում էին առանց վորեւ ոգնություն, — ինչպես և նեխ-
վող դիակներն անհանդստացնում էին թաղավորի զինվոր-
ներին: Լանցան սկսեց բանակցություններ մղել Գա-
րիբալդու հետ, վորից հետո ժամանակավոր զինադադար
յեղավ: Այդ միանդամայն պատեհ առիթին էր, վորովհետե
դարիբալդիականները մնում էին առանց արկերի ու փամ-

փուլաների և կարճատև դադարը նրանց հնարավորութ-
յունն ավելի լրացնել ռազմավարները:

Բնակչութիւնը յեռանդով պատրաստուում էր պաշտ-
պանութեան: Գիշեր-ցերեկ աշխատում էին արկեր, փամ-
փուլաներ, կարտեզ պատրաստող արհեստանոցները: Յու-
րաքանչյուր տուն պաշտպանական կետ դարձավ: Յերի-
տասարդութիւնը չտապ սովորում էր ռազմական դրոշմը:
«Հաղարկակի» հերոսութիւնը և պալերմոցիները խիզա-
խութիւնը ջախջախեցին թշնամուն, և մայիսի 30-ին Լան-
ցան նահանջեց Պալերմոյից ու նրա շրջակայքից: «Պետք է
հրաշք թվար, վոր բռնակալութեան քսան հազար պաշտ-
պանները ստիպված էին կապիտուլացիա անել մի բուն
քաղաքացիների առաջ, վորոնք պատրաստ էին ամեն տե-
ւակ զոհաբերութեան, մինչև իսկ նահատակութեան», —
մատնանշում է Գարիբալդին:

Քաղաքը տոնում էր իր հաղթանակը: Սիցիլիայի լա-
վաբուն հայրենասերներից կազմվեց հեղափոխական-դե-
մոկրատական դիկտատուրայի կառավարութիւն, վորը
ժողովրդական հերոս Գարիբալդուն դիկտատոր հռչակեց:
«Դիկտատորը» և նոր իշխանութիւններն առաջին իսկ ո-
րերից սկսեցին մտցնել այնպիսի որոշումներ և դեկրետ-
ներ, վորոնց նպատակն էր բարելավել լայն մասսաների
կյանքը. վերացրին հացահատիկ ազալու հարկը, վոջնաց-
րին բազմաթիւ մաքսերը, վոնդեցին ճիշդվտական հակա-
հեղափոխական կազմակերպութիւնները, դպրոցներ և
մանկատներ բացին անխնամ յերեխաների համար, միջոց-
ներ գտան ողնելու չքավորներին և ուժակոծութիւնից
տուժածներին, ազգայնացրին թաղավորական հողերը, ա-
ղատեցին բոլոր քաղաքական կալանավորներին և այլն:

Այս ձեռնարկումները, ինչպես նաև դարիբալդիական թը-
ռուցիկ ջոկատները կղզու բոլոր վայրերն ուղարկելը նը-
պաստեցին յերկրում հեղափոխական շարժումը ծավալե-
լուն: Ամբողջ Սիցիլիայում ապստամբութիւն բռնկվեց
Քաղաք քաղաքի հետեից վոտքի յեր յեւնում և թոթափում
բուրբոնյան վարձկանների լուծը:

Վորոշ ժամանակից հետո «հաղարկակի» և Գարիբալ-
դու ղեկավարներ Մեդիչու և Կոնցիցայի ջոկատները — վո-
րոնք ժամանել էին Պալերմո — դրսևեցին նեապոլիցիների
վերջին հենակետերը — Մեկացցոն և Մեսսինան, և ինչի վա-
կան ժողովրդին վերջնականապես և ընդմիշտ ազա-
մուրբոնների առեւի և դաժան դինաստիայից:

Հանրապետական դեմքի հաղթանակը — քաղաքական
բնակչութիւն ունեցող հսկայական յերկիրը քսան տրոմ
նվաճելը կատարյալ անակնկալ էին նապոլեոն III-ի ազա-
սարկուների — Կալուրի և նրա վոհմակի համար: Նրանց
բանակում իրարանցում սկսեց: Կալուրը դործի դրեց իր
ամբողջ կեղծավորութիւնն ու ճարպկութիւնը, աղվեսի
խորամանկութիւնը և պրովոկացիոն ինտրիգներ լարելու
կարողութիւնը, վորպեսզի սանձահարի վտանգավոր հե-
ղափոխականին: Իմանալով, վոր Գարիբալդին մտադիր է
կղզուց անցնել մայր ցամաք և դնալ Նեապոլի վրա, Կա-
կուրը կատաղեց: Պալերմոն լցվեց հաբյուրավոր լրտեսնե-
րով, մատնիչներով, ինտրիգաններով և քաղաքական չար-
չիներով: Ամենուրեք ծախվող ու կեղծ անձնավորութիւն-
ները ստոր, քայքայիչ աշխատանք էին կատարում և պա-
հանջում էին Սիցիլիան անհապաղ միացնել Պիեմոնտին:
Անհապաղ — վորովհետև Կալուրը վախենում էր, և այն

եւ վոչ առանց վորեւ հիմքի, վոր Սիցիլիայում կամրա-
պընդվի հանրապետական իշխանությունը: Իսկ այդ կլի-
ներ մահացու սպառնալիք Պյեմոնտի միապետության:

Գարիբալդին կարողացավ իր ժամանակին ըմբռնել
Կալվուրի մոլթ խաղը և կարականապես հրաժարվեց հա-
րապետական կղզին միապետական Պյեմոնտին միացնելուց,
ձգտելով պահպանել շարժման զուտ ժողովրդական բնույ-
թը: Կալվուրի ծածուկ կողմնակիցները, վորոնք խցկվել
էին կառավարության մեջ, մերկացվեցին ու վռնդվեցին:
Այդ ժամանակ Կալվուրը դործի դրեց վերջին կողերը-թա-
ղավորի միջամտությունը:

Վիկտոր-Եմմանուէլ II-ը հատուկ նամակով դեներալ
Գարիբալդուց պահանջեց հրաժարվել Նեապոլի վրա ար-
շավելուց: Բայց Գարիբալդին, վոր այնքան հաճախ սխալ-
մամբ զիջումներ եր անում թագավորին և Կալվուրին, այս
անգամ հրաժարվեց հնազանդվելուց և այդ մասին հա-
ղորդեց թագավորին. «Յեթե հիմա, հակառակ բոլոր կո-
չերի, յես հապաղեմ, ապա իմ պարտքը կատարած չեմ
լինի և վտանգի կենթարկեմ Իտալիայի ազատագրության
սուրբ գործը, ուստի թույլ տվեք, թագավոր, այս ան-
գամ ձեզ չհնազանդվել»:

Կ. Մարքսը հետևյալ կերպ է բնութագրում Գարի-
բալդու գործունեւթյան այդ ժամանակաշրջանը.
«... Գարիբալդու պլանը, անկախ այն բանից, թե ար-
դյոք այն կպսակվի հաջողությամբ թե վոչ, հանդիսա-
նում է միակ սլանը, վորը տվյալ հանդամանքներում
կարող է նպաստել Իտալիայի ազատագրմանը վոչ միայն

ներա հին բռնակալներից և ներքին յերկառակություններ-
ից, այլև Ֆրանսիական նոր պրոտեկտորատի ճանկերից¹⁾:
Բոցաշունչ հանրապետականի և հայրենասերի բանակն
աճեց և հասավ տասնվեց հազար հոգու: Զանազան յեր-
աճեց և կըրներից ազատության պաշտպանները սկսեցին դալ և
մտնել Գարիբալդիականների շարքերը: Գարիբալդու դրոշ-
ների տակ կովում եր դրեթե բոլոր յեվրոպական յերկրնե-
րի, վորոնց թվում նաև Ռուսաստանի, մասնավորապես
Անդրկովկասի հեղափոխական յերիտասարդությունը: Կար-
ճատե դադարից հետո, վորն ոգտագործվեց բանակի կազ-
մակերպման և նոր արշավանքին պատրաստվելու համար,
Գարիբալդին ոգոտոտի 17-ից լույս 18-ի դիչերն անցավ
Մեսսինայի նեղուցը և դուրս յեկավ Կալարիլայի ափը:
Փրանցիսկ II-ը, վոր ուներ հարյուր հազարանոց մի բա-
նակ, պատրաստվեց վճռական հակահարվածի: Թշնամու
նավերը շարունակ հետևում էին կամավորական ջոկատ-
ների տեղափոխություններին: Սեպտեմբերի 2-ի առավո-
տյան կարմիր շապկավորները դրոհեցին Ռեջիոն, — Կալա-
րիլայի գլխավոր քաղաքը և ամրացված կետը: Յերկա-
րատե ճակատամարտից հետո, վոր անցնում եր փոփոխա-
կի հաջողություններով, Գարիբալդիականները վճռական
դրոհով հետ չպրտեցին թշնամուն և դրավեցին քաղաքը:
Ռեջիոյի դրավումը փաստորեն վճռեց ամբողջ կամպանիայի
յեւթը: Յերկու որից հետո բուրբոնյան զենեքալ Գիոն, վոր
չըջապատվել եր կամավորական ջոկատների ողակով, ամ-
բողջ կորսուսի հետ դերի ընկավ:

«Կալարիլայի վրայով մեր արշավանքը դարձավ

1) К. Маркс и Ф. Энгельс, сочин. т. XII ч. II ст. 96.

մի փայտուն հաղթական յերթ: Մենք գնում եյինք ռազմա-
տենչ, վոգեւորված բնակիչների բազմութիւնների միջով:
Նրանց մեծ մասն արդեն ղենք եր բարձրացրել ճնշողների
դեմ: Վերջապես կարճատև յերթից հետո, իմ ջոկատնե-
րից առաջ անցնելով, յես մի քանի որում հասա Նեա-
պոլ», — պատմում ե Գարիբալդին իր «Մեմուարներում»:

Յերբ Փրանցիսկ II-ը տեսավ, վոր իր դրութիւնն ան-
յելք ե և անհուսալի, վորոշեց փոխել տակտիկան և ուրիշ
միջոցներ փորձել: Յերկու Սիցիլիաների հզոր արքան
«պլեբեյ» Գարիբալդուն ղիմեց մի խոնարհ խնդրեցով—
հաշտութիւն կնքել պատվաւոր պայմաններով: Նա, Փրան-
ցիսկ II-ը, ճանչում ե Սիցիլիայի անկախութիւնը և
նեղուցից այն կողմ գտնվող իր բոլոր տիրութիւնները
ղիջում ե ղենքալ Գարիբալդուն ու նրան տասներկու մի-
լիոն ռազմատուգանք ե վճարում: Ավելին, — նա պատ-
րաստ ե իր ամբողջ նաւատորմիղը և հիսուն հազարանոց
զորքը տրամադրել Ավստրիայի դեմ պայքարելու համար:

Բյուրեղային ազնվութեան տեր և անշահախնդիր հե-
ղափոխականը նույնիսկ հարկավոր չհամարեց պատասխա-
նել այդ առաջարկին:

1860 թվի սեպտեմբերի 7-ին Գարիբալդին մի քանի
համահարգների ուղեկցութեամբ Պալերմոյում ղնացք նըս-
տեց և մի ժամից հետո իջավ Նեապոլի կայարանում:
Նեապոլը ղեռ լիքն եր բուրբոնյան զորքերով: Գարիբալ-
դու կառքը ղնում եր բոլոր կողմերից թաղավորի ղինվոր-
ներով շրջապատված: Հասնելով պալատի հրապարակը,
կառքը մոտեցավ մի մարտկոցի: Բուրբոնյան մի սպա
Գարիբալդուն տեսնելով մենակ, առանց նրա քաջ մարտիկ-
ների, ուրախացավ. մի ակնթարթ— և սարսափելի թըշ-

նամին կլոշնջացւի: Լսվեց հրամանը՝ «Կարտեչ»: Մի
վայրկյան— և Գարիբալդու խելահեղ համարձակութիւնը
չարաչար կպատժւի: Բայց նա հանդիստ կանգնեց կառքի
փոտնատեղի վրա և ժպտալով, վողջունեց հրետավորնե-
րին: Զինվորները իրենց սպայի հրամանը կատարելու
փոխարեն սրատիվ տվին հռչակավոր ռազմիկին: Բուրբոն-
յան հաղարավոր ղինվորներ անցնում եյին հանրապետա-
կանների կողմը և ղենքերը հանձնում նրանց:

Յերկու Սիցիլիաների նախկին թաղավորութեան մայ-
քաքաղաքի կես միլիոն բնակիչները վողջունում եյին հե-
րոսին, վորի միայն անունը քաղաքներ են նվաճում: Նեա-
պոլը ցնծութեան մեջ եր: Գարիբալդին ղրավեց ղեռ յե-
րեկ փախած թաղավորի պալատը: «Ժողովրդի ազատա-
րարները ղրավեցին ղեռես տաք միապետական բուխը և
պրոլետարների կոպիտ կոշիկները տրորում եյին թաղա-
վորի պալատի փափուկ ղորգերը», — հաղթականորեն քա-
ցականչում եր Գարիբալդին:

Կենտրոնացնելով հիսուն հազարանոց ղորքը և իր վրա
վերցնելով հրամանատարութիւնը, Փրանցիսկ II-ը հիա-
նալի ղիրքեր ղրավեց Վոլտուրնոյի մոտ և պատրաստվում
եր վճռական կռիւ: Գարիբալդիականները ղիրքեր ղրա-
վեցին Կադերտայի և Սանտա-Մարիայի միջև: Սպասուե-
լիք ճակատամարտին Գարիբալդին չէր կարող մասնակցել
այն ինտրիգների պատճառով, վոր լարում եյին ամենու-
րեք խռովութիւն սարքող՝ Կավուրի կողմնակիցները: Այդ
կորստաբեր հետեանք ունեցավ: Սեպտեմբերի 19-ին Բուր-
բոնը Կայացցոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
պարտութիւն պատճառեց ղարիբալդիականներին: Այդ
առաջին և վերջին պարտութիւնն եր 1860 թվի հաղթա-

կան արչավանքում: Յերբ Գարիբալդին ժամանեց ռազմա-
ճակատ, գրությունն արագ փոխվեց: Վոլտուրնոյի մոտ
տեղի ունեցած կռիվը վերջացավ բուրբոնյան զորքերի
չախճախումով և Գարիբալդին մայրաքաղաք ուղարկեց հե-
տևվյալ հեռագիրը. «Հաղթանակ ամբողջ ռազմաճակա-
տում»:

Վորքան հաջող եր դնում նեապոլյան պետությունն ա-
ղատադրելու գործը, այնքան կատաղի եյին դառնում կա-
վուրջան չայկայի հարձակումները հանրապետության վրա,
այնքան ավելի զարչելի եյին լինում հակահեղափոխության
մեքենայությունները: Միապետականները ցույցեր եյին
կազմակերպում՝ Նեապոլը և Սիցիլիան Պյեմոնտին միաց-
նելու լողունգով: Կավուրի գործակալ Պալլավիչինոն, վոր
նշանակված եր Նեապոլի փոխ-գեկուստոր, խաբերայական
ճանապարհով անցկացրեց մի վորոշում հանրաքվե վաղմա-
կերպելու մասին:

1860 թվի հոկտեմբերի 21-ին հանրաքվեյով հաստատ-
վեց Նեապոլի և Սիցիլիայի միացումը Պյեմոնտի թագա-
վորությանը:

Գարիբալդին հրաժարվեց «գեկուստորի» լիազորու-
թյուններից ու յերկրի կառավարումը հանձնվեց Նեապոլ ժա-
մանած Վիկտոր-Եմմանուել II-ին: Հիմա նա այստեղ այլևս
անելիք չուներ, սրիկաների և քաղաքական ինտրիգանների
չրջապատումը չափազանց զգվելի յեր նրա համար, և նա
վորոշեց առանձնանալ Կապրերա կղզում: Հրաժեշտ տա-
լով իր հերոսական մարտիկներին, Գարիբալդին ասաց, —
«Յերիտասա՛րդ կամավորներ, ընդունեցե՛ք իմ հրաժեշտի
խոսքը վորպես տաք ճակատամարտերի վերաբերյալ վեր-
ջին յեզրակացություն: Յես այդ խոսքը ասում եմ ուժեղ

զդացումով, այն բղխում ե իմ հոգու խորքերից: Այո՞ր
յես պետք ե հեռանամ, բայց վոչ յերկար ժամանակով...
Ճակատամարտի որը յես ելի կլինեմ ձեզ մոտ, իտալական
ազատության ռազմիկների մոտ: Մենք չուտով կհանդի-
պենք և միասին կդնանք ազատելու մեր յեղբայրներին...»:

Դրանով ավարտվեց 1860 թվի պանծալի եպոպեան: Լե-
գենդային «հաղաբյակի» փառապանծ արչավանքը հիմնա-
կանում վերջացրեց յերկրի համախմբումը, բայց վոչ թե
հանրապետական հիմունքներով, վորոնց ծարավի եյին
ժողովրդական մասսաները և վորոնց այնպիսի ջերմ կողմ-
նակից եր ինքը, Գարիբալդին, այլ սավոյան թագավորա-
կան տան շուրջը: Յեթե Գարիբալդին նույնքան վճռական
և անդդովելի լիներ պետական քաղաքական գործերում,
վորքան կովի դաշտում, միանգամայն հավանական ե, վոր
Խտալիան կընթանար վոչ թե միապետական, այլ հանրա-
պետական ճանապարհով:

Գարիբալդին 1860 թվի նոյեմբերի 7-ին հեռացավ
Նեապոլից: Նավակայանում անթիվ ու անհամար ժողո-
վուրդ եր հավաքվել: Յերբ շոգենավը ճանապարհվում եր,
լավեց գարիբալդիական հիմնի յերգեցողությունը: Յերդում
եյին կամավորները: Բաղմությունը ձայնակեց յերգին և
«կարմիր շապկավորներին» սահեղ յերգեցողությունը թնդաց
ծովի վրա: Ձեռները խաչաձև ծալած, հանդիսավոր լուռ-
թյուն պահպանելով, նավի վրա կանգնել եր ժողովրդի
մեծ զավակը: Նրա վրտների մոտ դրված եր մի պարկ լո-
քի— այն ամենն, ինչ վոր յերկու Սիցիլիաների «գեկուս-
տորը» իր հետ տանում եր Կապրերա:

1861 թվի ապրիլ ամիսն էր։ Արտատվող հանդիսա-
վորությամբ բացվում էր համախառնական պառլամենտը։
Կալվածատիրական-բուրժուական բոլոր ցնծության մեջ
էր,— ընտրությունները նրան հաղթանակ ելին բերել։
Ընտրական մեքենայությունների և ընտրողների չափազանց
սահմանափակ թվի հետևանքով (խտալական խղճուկ սահ-
մանադրությունն ընտրությունների իրավունք էր տալիս
բնակչության միայն շատ ունեվոր խավերին) Պառլամեն-
տական ճնշող մեծամասնությունը բաղկացած էր Կալուրի
միապետական կողմնակիցներից։

Բայց հանդիսավորությունը մոայլվեց։ Բացմանը յե-
կավ Գարիբալդին, վորը միաձայն ընտրվել էր Նեապոլի դե-
պուտատ։ Նա զայրացած էր, վոր իր աճեցրած, իտալիայի
համար անկախություն նվաճած ժողովրդական բանակին ար-
ձակվել է կառավարության կողմից։ Նա արտասանեց Կա-
վուրի և նրա դործակիցների դեմ ուղղված մի ցասկոտ
ճառ, վորն ավարտելիս՝ խոստացավ վերադառնալ ժողո-
վրդի ընդհանուր զինման հին ծրարին։

Վորովհետև Գարիբալդու խոսքը զործ էր, ուստի ար-
դեն 1862 թվին արչավանքի յեկավ մի նոր «հաղարյակ»,
վորը վոգեւորված էր ազատության հին մարտիկի մարտա-
կան-հեղափոխական կոչով— «Հոռոմ կամ մահ»։ Գարի-
բալդու դեմ դուրս յեկան քաղաքական կարյերիստները։
Ինչպիսի դառնությամբ և արհամարհանքով է խոսում մեծ
մարդն այդ դավաճանների և մատնիչների մասին.— «Այն
մարդկանց մեծ մասը, վորոնք 1860 թվին խոսքով կողմնա-
կից ելին իտալիայի միավորման,— հիմա հանդստացան

լավ տեղ ստանալով։ Նրանք պարսավում ելին մեր ձեռ-
նարկումը կամ հեռու ելին մնում, վորպեսզի հաշվով
չգործող ու անհանդիստ հեղափոխականների հետ շփվելով՝
իրենց վնաս չհասցնելին»։

Արչավանքը տեղի յեր ունենում ամենադժվարին պայ-
մաններում։ Զկար պարեն, չկար վատ յեղանակից պաշտ-
պանվելու, հանդստանալու տեղ։

Ֆրանսիական կայսր Նապոլեոն III-ը, իմանալով դարի-
բալդիականների յեկույթի մասին, բոլորովին կատաղեց։
Նա իր զորքերն ուղարկեց դեպի Հոռոմ, Վիկտոր-Եմմա-
նուել II-ից և Կավուրից պահանջեց ուժով վերջ տալ Գա-
րիբալդու դործողություններին, բայց այդ ավելորդ էր.
Թաղավորն ու արեմյեր մինիստրն իրենք էլ սարսափեցին
Թաղավորն ու արեմյեր մինիստրն իրենք էլ սարսափեցին
այն մտքից, թե Գարիբալդին կարող է դրավել Հոռոմը։
Նրանք շատ լավ ելին հիշում 1849 թվականի հոռոմեական
հանրապետությունը։ Թաղավորի ստորադրությամբ ամե-
նուրեք տարածվում ելին թուղիկներ, վորոնք ամեն տե-
տակ պատիժներ ելին սպառնում Հոռոմի դեմ դուրս յեկած
ապստամբներին և այն մարդկանց, վորոնք կհամարձակվե-
լին նրանց ոժանդակել։ Սակայն Վիկտոր Եմմանուել II չեր
սահմանափակվում միայն բանավոր սպառնալիքներով։
Իտալական թաղավորն ուղարկեց մի ամբողջ բանակ՝ դա-
րիբալդիականների դեմ անխնա դատաստան տեսնելու հա-
մար։

Մինչ այս, մինչ այն, հուլիսի 24-ին յերեք հազար հինդ
հարյուր կամավորներ դուրս յեկան Կալարիայի ավիլ և
առաինյա վայրերով ուղեվորվեցին դեպի Ռեջիո։ Գարի-
բալդին ձեռք էր առնում իրենից կախված բոլոր միջոցնե-
րը, վորպեսզի խուսափի իտալական բանակի հետ ընդհար-

վելուց և կանխի ավելորդ արյունահեղութիւնը: Նա անցնում եր լեռներով, ընթանում եր մեծ ճանապարհներից հեռու, պտտւում անտառային արահետներով, փախչեցնելով առանց այն եւ դժվար արշավանքի ծանրութիւնը և զրկանքները:

Ճակատամարտը տեղի ունեցավ ոգոստոսի 29-ին, Ասպրոմոնտեյի մոտ, վորն այն ժամանակից տխուր հռչակ ստացավ: Թագավորական բանակը Պալլովիչինու, — Գաբրիբալդու նախկին «բարեկամի» և «կողմնակցի» հրամանատարութեամբ Ասպրոմոնտեյի անտառի մոտ հասավ կամավորներին և միանգամից, մտածելու ժամանակ չտալով զինվորներին, ծափալեց ռազմական գործողութիւնները: Գաբրիբալդին այնուամենայնիւ չեւ կարող յեղբայրասպան պատերազմի դիմել և չնայելով, վոր զրոհը սկսվել եր և հարձակվողները կրակ եյին բացել, նա կամավորներին հրամայեց չկրակել: Գաբրիբալդիականները, զայրույթից դողալով, հաղիվ զսպում եյին իրենց, վորպեսզի չնետվեն ստոր թշնամու վրա, բայց Գաբրիբալդին յերկրորդ անգամ հրամայեց չպատասխանել կրակին և անցավ առաջ, կանգնելով իր ջոկատի և զրոհող զինվորների միջև: Հանկարծ նա թեքվեց մի վոտի վրա և ընկավ դետին: Մի գնդակ խոցեց ձախ կրունկը, մի ուրիշ գնդակ մնաց աջ վոտի վոսկորի մեջ: Վերավորվեց նաև Գաբրիբալդու վորդին — Մենոտտին: Հրաձգութիւնը վայրկենապես դադարեց: Թե յուրայինները և թե թշնամիները վազեցին Գաբրիբալդուն ոգնելու: Լքումը տիրեց մարդկանց, յերբ նրանք տեսան կատարված չարագործութիւնը: Թագավորի զինվորներն ատելութեամբ լի աչքերով եյին նայում իրենց հրամանատարներին: Լսվեցին խուլ հառաչանքներ: Բավա-

կան եր, վոր Գաբրիբալդին մի խոռք տեսեր — և վոչ մի թագավորական սպա կենդանի չեւ մնա:

«Ինձ համար անհաճելի յե պատմել նողկալի բաների մասին, բայց յես այնպիսի յերևույթներ տեսա, վորոնք կարող եյին զլվանք պատճառել նաև կոյուղի մաքրողներին... Միապետութիւնը հասավ իր նպատակին: Այն տալիս փակ քաղաքավարութիւնը, վոր ցույց են տալիս նաև դեպի հանցավորները, յերբ նրանց տանում են դիտատելու տեղը — չմոռացան նաև իմ նկատմամբ»: Այդ եր թագավորի պարգէն այն կես-թագավորութեան համար, վոր նրա ոգտին նվաճել եր Գաբրիբալդին:

Վերավորված, ծանր տառապող Գաբրիբալդուն թույլ չտվին նույնիսկ հիվանդանոցում տեղավորելու: Կալուրի և թագավորի համար նա միայն կալանավոր եր, վորի հետ ցերեմոնիա անելու կարիք չկար: Գաբրիբալդուն տեղ տվին նավում, դարհուրեցուցիչ պայմաններում տալան այստեղ ու այնտեղ և, վերջապես, բանտարկեցին: Աջ վոտի վեցը խիստ վտանգավոր եր: Իտալական վիրաբույժները գտնում եյին, վոր մեում ե ամպուտացիա կատարել: Բայց Գաբրիբալդուն փրկեց մեր հայրենակիցը, հայտնի վիրաբույժ Ն. Ի. Պիրոգովը, վորի հսկողութեան տակ գնդակը հանվեց և այլևս կարիք չկար վոտը կտրելու:

Սկսվեց ժողովրդական ցասումը. տասնյակ հաղար մարդիկ դուրս եյին գալիս փողոցները, պահանջելով «Ասպրոմոնտեյի մեր Գաբրիբալդուն»: Միայն Իտալիայում չե, զատութիւն մեր Գաբրիբալդուն: Միայն Իտալիայում վոր արտահայտվում եր ժողովրդի զայրույթը: Բանվորական բաղամարդ միտինգները Լոնդոնում և Անգլիայի մյուս քաղաքներում, ցույցերն Ամերիկայում, բողոքները, վոր թափվում եյին աշխարհի բոլոր ծայրերից, Իտալիա-

յում ծավալելով հուզումը, — այս բոլորը վախճանեց իրա-
ւական կառավարութեանը և Գարիբալդին չորս ամսվա
բանտարկութեանից հետո ազատվեց:

Մի տարուց ավելի տեւեց Ասպրումոնտեյի մոտ ստա-
յած վերքի առողջանալը և այդ վերքն ընդմիջո՜ւ հաշման-
դամ դարձրեց Գարիբալդուն. տանջալից ցավերը չեյին
դադարում մինչև նրա կյանքի վերջը:

Հանձին Գարիբալդու անմոռանալի վերափորանք հաս-
ցրվեց ամբողջ Իտալիային, և իտալական ժողովուրդը
թագավորին ու վերջինիս արբանյակներին չնեւեց հայրենի-
քի դեմ կատարված այդ մեծագույն հանցագործութիւնը:

ՀՐԱՇՔՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԵՐՈՍԸ

Սոստահեմպսոն կոչված անգլիական փոքրիկ քաղաքի
կյանքում տեղի ունեցավ արտասովոր մի դեպք: Այդ եր-
ցույց տալիս 1864 թվի ապրիլի 4-ի առավոտյան նավակա-
յանում հսկայական թվով ժողովրդի հավաքվելը: Նավա-
մատուլյցի մոտ, բաց ծոցատետրերը ձեռներին, խմբվում
եյին անգլիական թերթերի թղթակիցները: Այստեղ կարե-
ւի յեր հանդիպել լրագրական խոշորագույն ֆիրմաների և
գաղառական մի փոքրիկ թերթի ներկայացուցիչներին: Հա-
սարակութեան մեջ կարմիր շապիկներ եյին յերևում: Հեռ-
վում ծուխ նշմարվեց և լսվեց չողենավի յերկար շաչոյունը:
Բազմութիւնը սկսեց շարժվել և սուաջ անցավ: Շողենավը
դանդաղ մոտենում եր նավամատուլյցին: Ծանր խարխիւր
չրմփալով ընկավ ջուրը: Վերջապես բաղձութիւնը տեսավ
այն մարդուն, վորին սպասում եր այնպիսի անհամբերու-
թեամբ: Հրճվալից, հաղարածայն բացականչութիւնը թըն-

դեաց ողում: Գարիբալդին իջնում եր նավի սանդուխքից:
Քամին խաղում եր նրա ձեռմակած մագերի հետ, նրա դեմ-
քը և մեծ, պայծառ աչքերը յերիտասարդութիւն և կա-
տառութիւն եյին արտահայտում: Սիրալիւր կերպով դը-
լուխ տալով՝ նա դժվարութեամբ եր անցնում մարդկային
ծովի միջից, վորը շրջապատել եր նրան...

Նույնը կրկնվեց Լոնդոնում, անհամեմատ ավելի մեծ
մասշտաբով: Բացառիկ ընդունելութիւն ցույց տրվեց հե-
րոսին, վորի հռչակը թնդում եր յերկու կիսագնդերում:
Այդպիսի ընդունելութիւն վիճակվում ե միայն ժողովրդի
ընտրյալներին: Հարյուրավոր պատվիրակութիւններ ա-
մենաջերմ և հուզիչ խոսքերով վողջունում եյին ժողովրդի
դործի համար պայքարողին: Գարիբալդին հանդես յեկավ
պատասխան-խոսքով. — «Յես ուզում եմ մանավանդ բան-
վորներին ասել, վոր շատ շնորհակալ եմ նրանցից և յեր-
բեք չեմ մոռանա այն դասակարգի վողջոյնը, վորին յես
պատկանում եմ: Յես սիրում եմ աշխարհի բոլոր մասերի
բանվորներին իմ յեղբայրներ անվանել»: Գարիբալդու ճա-
ռըն ընդունվեց բուռն հավանութեամբ:

Գարիբալդու Անգլիա դնալն անսպասելի յեր: Հանդի-
սավոր հանդիպումների և բանկետների համար չեւ, վոր
ժողովրդական զորավարը մեկնել եր Լոնդոն: Նա հույս
ունեւր այնտեղ միջոցներ դնել կամավորների խմբեր պատ-
րաստելու և Վենետիկի վրա արշավանք կազմակերպելու
համար:

Անգլիական կառավարութիւնը փող չտվեց Գարիբալ-
դուն: Դրա փոխարեն նրան տանում եյին մի բանկետից
մյուսը, մի լորդից մյուսի մոտ: Անգլիական ազնվականու-
թիւնը, չցանկանալով, վոր հեղափոխական առաջնորդը մո-

տենա Ժողովրդին, նրան ընդունեց իր «դիրկը»: Այդպիսի «Ժամանցը» վայել չեր հին հեղափոխականին: Մաձինին, վոր ապրում եր Լոնդոնում, դատապարտում եր Գարիբալդուն և չեր ցանկանում նրա հետ տեսնվել: Յեվ միայն Գերցենի մոտ հանդիպելով Գարիբալդուն և համոզվելով, վոր նա մնացել է Իտալիայի ազատագրության նույն անհաշտ մարտիկը, Մաձինին գլխի ընկավ, վոր Գարիբալդին ուղղակի չի հասկացել անդլիական պարոններին և հավատացել է այն խաղին, վոր նրա շուրջը սարքել են բարձրաստիճան պճնամոլները:

Գարիբալդին շուտով հնուցավ Անգլիայից: Բրիտանական կառավարությունը «թանգազին հյուրի հանկարծակի մեկնումը բացատրեց նրա առողջության թուլլ վիճակով: Իրականում, սակայն, Լոնդոնում Գարիբալդու գտնվելու կապակցությամբ բողոքի նոտա ստանալով Նապոլեոն III-ից, նա ինքն արագացրեց Գարիբալդու մեկնումը: Գարիբալդին վերադարձավ Կապրերա:

Անցավ յերկու տարի: Պրուսիան և Իտալիան ռազմական դաշինք կնքեցին և 1866 թվին Ավստրիայի հետ պատերազմ սկսեցին: Վաթսուն տարեկան հայրենասերը, վոր չարունակ մտածում եր ոտարեկրացիների լծից հայրենիքը վերջնականապես ազատագրելու մասին և առաջվա կըրքոտությամբ յերազում եր յերկրի լիակատար միավորման ուղղությամբ, վորոչեց մոռանալ անձնական վիրավորանքները (Ասպրոմոնտեյի մոտ վիրավորվելը և ձերբակալությունը): Նա անմիջապես համաձայնություն տվեց կամավորական ջոկատներ կազմակերպել և մասնակցել պատերազմին: Վիկտոր-Եմմանուել II-ը գնում եր իր հանգուցյալ մինիստր Կավուրի ճանապարհով. Գարիբալդուն հրա-

վիրելը հետապնդում եր միայն մի նպատակ— մասնակցություն քաջել իր կողմը: Իսկ Գարիբալդին հույս ուներ պատերազմը ռզտագործել հեղափոխական նպատակներով: Նա ծրագրում եր «Թափանցել Ավստրիայի սիրտը և վառել ապստամբության ջահն այն տասնյակ աղբերի մեջ, վորոնք կազմում են այդ տարասեռ, հրեշավոր մարմինը»:

Այդ պլանը չհաջողվեց իրականացնել, վորովհետև հրամանատարությունը լավ դիտեր, թե ում հետ գործ ունի և Գարիբալդուն իր կամավորների հետ ուղարկեց հալածվային Տիրոլ: Անթիվ ճակատամարտերում հերոսը նորից հաղթանակներ եր տանում, չնայելով, վոր կամավորները զենքի, ռազմամթերքի և նույնիսկ հազուսանդների կարիք էյին զգում, իսկ հրետանին ստիպված էյին «ճարել ավստրիացիներից»:

Գործը բոլորովին այլ կերպ եր գնում Վիկտոր-Եմմանուելի մոտ: Թեև իտալական բանակը թվով գերազանցում եր ավստրիական բանակից, բայց այդ չողնեց անշնորհ հրամանատարության: Կուստոցցայի մոտ կրած դաժան պարտությունը թաղավորին ստիպեց դիմել հապճեպ նահանջի և ավստրիացիների առաջ ճանապարհ բացեց դեպի Իտալիայի խորքը: Հյուսիսում պրուսական զորքերի կողմից սաստիկ նեղվելու շնորհիվ եր միայն, վոր ավստրիացիք ստիպված յեղան կանգ առնել:

Գարիբալդին շարունակում եր ջարդել թնամուն: Հուլիսի 21-ին Բեցեկայի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտից հետո ավստրիացիք սլլևս դիմադրություն ցույց չեյին տալիս և շտապ մաքրում էյին Տիրոլը, իսկ զենքերալ Կունը, Տիրոլի ավստրիական մարտական ուժերի գլխավոր հրամանատարը, իր հրամանում հաղորդեց հե-

յենթարկեց իր բոլոր զինվորական ուժերը և նույնպես կամավորների դեմ ուղարկեց: 1867 թվի հոկտեմբերի 25-ին Գարիբալդին գլխավին ջարդեց պապի զինվորներին և համարյա մոտեցավ Հռոմին: Այստեղ Փրանսիական նորեկ բանակը, վոր զինված էր ամենանոր, արագաձիգ հրացաններով, հարձակվեց դարիբալդիականների վրա և ջարդեց նրանց. ուժերը խիստ անհավասար էին: Կամավորները նահանջելով դուրս յեկան Պապական մարզի սահմաններից: Թաղավորի զորքերն անհասպաղ շրջապատեցին և զինաթափեցին նրանց: Գարիբալդին նորից ձերբակալվեց և հսկողության տակ ուղարկվեց Կապրերա:

Հռոմն Իտալիային միացվեց միայն 1870 թվին: Ֆրանս-պրուսական պատերազմը, վորի ժամանակ Նապոլեոն Բոնապարտ III-ը սլարտություններ եր կրում, նրան ստիպեց իր զորքերը հետ կանչել Հռոմից: Գարիբալդին անհասպաղ ոգովեց դրանից, իր հավատարիմ, մարտական զինակիցների միջոցով մի քանի ջոկատ կազմակերպեց և տարավ Հռոմի վրա: Յերբ տեղի յեր ունենում Սեդանի ճակատամարտը, վորը Փրանսիական բանակը կատաստրոֆի հասցըրեց, ջոկատներն արդեն դրոհում էին հավիտենական քաղաքի ամրությունները, և միայն այդ ժամանակ Վիկտոր-Եմմանուէլ II-ն իր զորքերն ուղարկեց Հռոմ: Առաջինը քաղաք ներխուժեցին դարիբալդիականները, նրանցից հետո մտան թագավորի զորամասերը:

Իտալիայի միացումն սլարտվեց: Բայց ալեհեր ծերունին վոչ միայն իր յերկրի հայրենասեր եր, այլև բոցաշունչ ինտերնացիոնալիստ:

Սեդանի ճակատամարտից հետո Նապոլեոն III-ը տապալվեց, 1870 թվի սեպտեմբերի սկզբին Ֆրանսիան դար-

ձավ հանրապետություն և արդեն սեպտեմբերի 6-ին Գարիբալդին նրան առաջարկեց իր ծառայությունը՝ անդուսպ կերպով հարձակվող գերմանական բանակի դեմ պայքարելու համար: Բայց կառավարությունը, «վորը, — ասում է Գարիբալդին, — միշտ ամաչում եր բացահայտ կերպով իրեն հանրապետական հայտարարել», մի ամբողջ ամիս չեր պատասխանում:

Տաղանդավոր զորավարի առաջարկը հիշեցին միայն այն ժամանակ, յերբ թշնամին մոտենում եր Փարիզին:

Ժամանելով Փարիզ, Գարիբալդին դբադվեց ջոկատներ կազմակերպելով: «Նոյեմբերին մենք զանազան ազդու-լեհերից, հույներից, իսպանացիներից, ինչպես նաև Փրանսիական մի քանի ջոկատներից կազմակերպեցինք մի վոք-ուլթը հաջար հոգուց բաղկացած այդ «բանակով» Գարիբալդին կարողացավ վոչ միայն պաշտպանվել, այլև մի բալդին կարողացավ վոչ միայն պաշտպանվել, այլև մի շարք նշանակալից հաղթանակներ տանել գերմանացիների դեմ: Գերմանացիների քսան հազարանոց մի բանակ Ոտենի դեմ: Գերմանացիների քսան հազարանոց մի բանակ Նապոլեոն III-ը հանջել: Այնուհետև գերմանացիք ստիպված յեղան անկա-նոն կերպով նահանջել Դիտոնից: Բայց այդ մասնակի հա-ջողությունները չէին կարող փոխել պատերազմի ընդհա-նուր ընթացքը: Փարիզն անձնատուր յեղավ: Ջինադադար կնքվելուց հետո Գարիբալդին մեկնեց Բորդո, ուր հրավիր-վեց Ազգային Ժողովը: Ֆրանսիայի Ժողովրդական մասսա-վեց Նապոլեոն III-ը հանջել: Նա-յեղով իր վաթսուոն չորս տարեկան հասակին, դժվար բո-պեններին ողնության հասավ իրենց հայրենիքին, — Գարի-

Իտալական ժողովրդի մեծ զավակը, «ազատութեան հին մարտիկը» (Ննդելս) մեռավ ծանր թախիժը սրտում: Նրա ամբողջ կյանքի վառ, բոցաշունչ յերազը — ազատ Իտալիան և ժողովրդական իշխանութիւնը — չ'երականգնուեցաւ: Յերկիրը, ինչպես և առաջ, գտնուում եր շահագործողների և ժողովրդին ճնշողների, ազատութեան ու դեմոկրատիայի թշնամիների ձեռքում:

Այն տասնամյակների ընթացքում, վորոնք անցան պանծալի հեղափոխական Գարիբալդու մահվան որերից, Իտալական ժողովրդին չհաջողվեց փշրել բուրժուա-կալվածատիրական ստրկութեան շղթաները:

Մեր որերում Իտալիայի ժողովրդական մասսաները տառապում են Փաշիվի անտանելի ճնշման տակ: Յերկիրը հասցրված է լիակատար աղքատութեան և քայքայման: Փաշիվին իր գոյութիւնը պահում է ամենադաժան բռնութեան և վայրագ տեռորի միջոցով: Մուսսոլինիի արյունոտ ավանտյուրան Հարեշտանում, իսպանական խաղաղ բնակչութեան բարբարոսական կոտորածը, սքանչելի Իսպանիայի ծաղկած քաղաքների վոչնչացումը, ժողովրդի լավագույն զավակների գնդակահարութիւններն ու գլխատումները սեփական յերկրում, ամենալայն մասսաների քաղցածութիւնն ու կարիքը, — ահա ժամանակակից Իտալիայի Փաշիստական իրականութիւնը:

Իտալական հերոսական կոմկուսակցութիւնն ակտիվորեն պայքարում է Փաշիվի դեմ, Իտալիայի բանվոր դասակարգին և գյուղացիութեանը պատրաստում վերջին և վճռական մարտին, վոր մղվելու յե Իտալական ժողովրդի անհաշտ թշնամիների և ազատութիւնը խեղդողների դեմ:

«... Հանձին Գարիբալդու Իտալիան ունեւ անտիկ կերտվածքի մի հերոս, վորն ընդունակ եր հրաշքներ գործելու և հրաշքներ գործեց»: (К. Маркс и Ф. Энгельс, Сочинения т. XVI, ч. I стр. 46').

Գարիբալդին անձնվիրութեամբ պայքարում եր Իտալական ժողովրդի յերջանկութեան համար:

Այժմ այդ պայքարը շարունակում է Իտալիայի կոմկուսակցութիւնը, վորը բարձր է սրահում հեղափոխութեան դրոշակը: Նա Իտալական ժողովրդին Խորհրդային Մեծ Միութեան հերոսական ճանապարհով կոտմի դեպի կոմունիզմի լուսավոր գաղաթիւները:

Յ Ա Ն Կ

	62
Արտորում	2
Թափառումների և սլաքարի տարիներ	15
Հայրենի յերկրում	55
1848—1849 թվականների հեղափոխությունը	68
Նոր մարտերի նախորդակին	106
1859—1860 թվականների իրադարձությունները	114
Լենգենդային «Հազարյակի» արչավանքը	127
Մարտնչության ճակատամարտը	148
Հրաչքներ կատարած Ժողովրդական հերոսը	152

Պատ. խմբաչիւր՝ Հ. Պարոնյան
 Տեխ. խմբաչիւր՝ Ի. Վարդանյան
 Մրբագրիչ՝ Բ. Ղուկասյան
 Էդիտորու սրբագրիչ՝ Յե. Տ.—Միմասյան

Գլավլիտի լիազոր՝ Վ.—1216. Հրատ. № 4984.

Պատվեր 647. Տիրաժ 5000

Թուղթ 62 X 94. Տպագր. 10 մամ.

Մեկ մամ. 27200 նշան.

Հանձնված և արտադրության 17 հուլիսի 1939 թ.

Մտորագրված և տպագրության համար 15 դեկտեմբերի 1939 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0411139

